



A I 2h pnf. q.
535 17 m² m² m²
~~m² m² m²~~ h² m²

A diagram illustrating a column of data. It consists of a vertical stack of horizontal lines, representing a column of data. A diagonal line starts from the bottom-left corner of the stack and points upwards and to the right, indicating a trend or relationship across the data.





Գ. ԱԲՐՈՎ

32 9.14(Կ7. 925)

13

ԴԱՅԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ՄՆՅԱԼՈՒՄ ՅԵՎ ԱՅԺՄ

ԵԵՐԿՐՈՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Գ. ԵՐԵ. ՓՈԽՎ. Ա. Ռ



ՀԱՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ, — ԵԵՐԵՎԱՆ, 1930

Հր. № 1176:

Գրասեղմար № 2990 (բ):

Տիրուանութեան:

Գետհրատի տրանչին տոկարան Վաղարշապատուած:
Պատվեր № 16:

32
Ա
ԱՌԱՋԱԲԱՆ ԱՌԱՋԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ

Դաշնակցության մասին գոյությունն ունեն աշխատություններ, վորոնք կանգ են առնում Դաշնակցություն կուսակցության առանձին շրջանների վրա։ Մինչեվ այսոր ել Դաշնակցություն կուսակցության մասին լայն մասսաների համար մատչելի յեվ ամփոփ վոչ մի աշխատություն գոյություն չունի։

Էնդառաջ զնալով այս կարիքին, յես հանձն առայսպիսի մի աշխատություն կազմելու գործը, լավ իմանալով հանդերձ, վոր այդ աշխատությունը, իբրեւ տւագին փորձ, կարող ել լինել վոչ լրիվ յեվ կարող եռնենալ պակասություններ։

Դրվածքը նախատեսնված եր բանվոր յեվ գյուղացի ընթերցողների լայն շերտերի համար յեվ վորպիս հանրամատչելի գործ, ինձ հնարավորություն չի տվել խորացնելու մի շարք սկզբունքային հարցեր։

Ամենալայն շափով ոգտվել եմ հետեւյալ աղբյուրներից։

1. Ստ. Շահումյան—Յերկերի ժողովածու, հասոր I:

2. Ե. Ամիրխանյան—«Մայիսյան ապատամբություն Հայաստանում»։

3. Ա. Կարինյան—«Հայ ազգայնականների ուղին»։

4. Ա. Կարինյան—«Իմակերակիստական պատերազմը Հայաստանը»։

5. Ա. Կարինյան—«Անդրկովկասը 1905»:
6. Յե. Մելիք—«1903—1917 թ. թ.»:
7. Լեռ—«Անցյալից»:
8. Հ. Ազատյանի հոդվածը «Լենինյան ուղի» ժուր
նալում:
9. Ժամանակակից արտասահմանյան դաշնակցա-
կան մամուլը:

Գ. Ա.

16-ին նոյեմբերի
1928 թ.

I. ԳԱՅՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԻՐ ԱՐԱՋԱՅՄԱՆ ԾՐՁԱՆՈՒՄ

ՆԱՅԻՌՆԱԼԻԶՄԻ ՅԵՎ, ԻՆՏԵՐՆԱՅԻՌՆԱԼԻԶՄԻ
ՄԱՍԻՆ

Դաշնակցությունների խալտառակ գործունելության հետեւ վանքներն իր ուսերի վրա զգացել եւ Հայաստանի ամեն մի բանվոր, ամեն մի աշխատավոր զյուղացի։ Դաշնակցությունն իր սկզբնավորման որից մինչև այսուը, շարունակ պաշտպանել եւ հայ բուրժուաների շահերը, ծառալել եւ հայ բուրժուազիակն և նույսատունի ու Յեվրոպայի իմպերիալիստներին։ Նա թող ե փշել հայ բանվորների ու աշխատավոր զյուղացիների աչքին, հայ բանվորներին ու զյուղացիներին Դաշնակցությունը մոլորեցըել ե, ստիպել ե, վոր նրանք յինթարելվեն հայ բուրժուազիակ ու իմպերիալիստների կամքին։

Իր այս վոճրագործ ու հականելափոխական դերը կատարելու համար՝ Դաշնակցությունը միշտ ել զինք ե գարձրել ռազմասիրություն» գաղափարը կամ, ինչուս յեվրոպական լիզվով ասում են, նացիոնալիզմը։ Դաշնակցությունը շարունակ ունեցել եւ նացիոնալիստական կամ ազգայնական քաղաքականություն։ Նա միշտ ել քարոզել ե, վոր հայ բանվորի, հայ աշխատավոր զյուղացու շահերը չեն տարբերվում հայ կալ-

վածատիրոջ ու հայ կապիտալիստի շահերից։ Դաշնակ-
ցությունը միշտ ել քարոզել ե, վոր հայ բանվորն ու
գյուղացին հայ կապիտալիստի ու կալվածատիրոջ դեմ
չպետք ե կովեն։ Ուրիշ խոսքով, նա դեմ ե լեզել դա-
սակարգային պայքարին և միշտ ել քարոզել ե, թե մի
ազգության աշխատավորները պետք ե կովեն մի ու-
րիշ ազգության աշխատավորների դեմ, վարովնետեվ
կան քենամի ազգուրյուններ յեթ վոչ քե քենամի դասա-
կարգեր։ Ահա ալսպիսի քաղաքականությունն ե, վոր
կոչվում ե նացիսնալիզմ և ալսպիսի քարոզներով ե,
վոր Դաշնակցությունը տասնյակ տարիների ընթաց-
քում իրար դեմ գրգռել, իրար դեմ կովի յև հանել հայ
և թուրք, հայ և վրացի աշխատավորներին։ Հենց այդ
քարոզներով Դաշնակցությունը հայ բանվորներին ու
գյուղացիներին աշխատել ե հեռու պահել դասակար-
գային պայքարից և բուրժուազիայի շահերը պաշտպա-
նելու համար կորիզ ե մղել նույն հայ բանվորների ու
գյուղացիների զեմ։ Յեվ վոչ միայն Դաշնակցությունը,
այլ և բոլոր բուրժուական կուսակցությունները նա-
ցիոնալիզմի քաղաքականությունը դարձրել են մի
զենք, վորով ստրկացնել են ուզում բանվորներին ու
գյուղացիներին։ Այդպես են մտածում բոլոր իմպե-
րիալիստական լերկըների բուրժուական կուսակցու-
թյունները, այդպես ելին վարվում և դաշնտեները
Հայաստանում, մենշևիկները Վրաստանում և մուսա-
վաթականներն Աղրբեջանում։

Միմիայն բանվոր գուսակարգի կուսակցությունն եր,
վոր կարողացավ Անդրկովկասում ևս պայքարել դաշ-
նակների, մուսավաթիստների ու մենշևիկների դեմ և
նացիոնալիզմին հակազրեց ինտերնացիոնալիզմը։ Կո-

մունիստական բարձեսիկլան կուսակցության ղեկավարությամբ եր միայն, վոր Անդրեևիկասի բանվորագլուղացիական լայն մասսաները կարողացան զուրս քշել դաշնակներին, մուսավաթիստներին ու մհնջեկեներին և նրանց հետ միասին դուրս քշեցին նացիոնալիզմի քարոզք, ազգամիջան կոխմերը։ Կոմունիստական կուսակցությունն եր, վոր ազգամիջան պատերազմ-ների լոգունդը փոխարինեց դասակարգավիճ պալքարի լոգունդով և բոլոր ազգությունների բանվորներին միացլալ ճակատով; աշխատավոր գլուղացիների հետ միասին՝ դուրս բերեց շահագործող դասակարգերի դեմ և զեկավարեց պրոլետարիատի դասակարգավիճ կոփիք։

Կոմունիստական կուսակցությունը քարոզում ե, վոր բոլոր ազգերի բանվորների ու շահագործվող գյուղացիների շահերը մեկ են և դրա համար ել Կոմունիստական կուսակցությունը վոչ թե իրար զեմ գըգոռում և տարբեր ազգերի բանվորներին ու գյուղացիներին, այլ կոչ ե անում, վոր առանց ազգի խորուրյան, բոլոր շահագործվողները դասակարգայնութեն կազմակերպվեն յեկ կոխի մղեն շահագործվողների, կատիտալիսների ու կալվածատերերի դեմ։

Հայ, ոռւս, թուրք, վրացի և բոլոր այլ ազգուրյաների բանվորուրյան ու գյուղացիուրյան միուրյան և քարոզում Կոմունիստական կուսակցուրյունը և վոչ թե ազգայնական նացիոնալիստական գաղափարներ։ Յեզ հենց դրա համար ել Կոմունիստական կուսակցությունը կոչվում և ինչեւն ացիոնալիստական կամ, յեթե հայ երեն թարգմանենք, միջազգայնական կուսակցություն։

Այս ինտերնացիոնալիստական, դասակարգավիճ պայքարի շնորհիվ ե, վոր այսոր ամբողջ Խորհրդապային

Միության մեջ բանվոր դաստիարակն իշխանությունն իր ձեռքն և վերցրել և աշխատավոր գլուղացիության հետ միասին վերակառուցում և մեր կոտնքը, ստեղծում և սոցիալիստական հասարակակարգ Մասնավորապես, Կոմունիստական կուսակցության այս ինտենսացիոնալիստական բաղաբականուրյան օնարիսլ և, վոր Անդրկովկասի նայ, բաւրեք, վրացի յեկ այլ ազգությունների բանվարն ու զյուղացին վերացրել են ազգամիջյան կոլիւներն, ակիմի կերպով լծվել են մեր ընդհանուր տնտեսական ժինարարուրյան գործին:

Այսպիսով, յերբ բուրժուազիան ու բուրժուական կուսակցությունները նացիոնալիզմը, ազգայնական գաղտփարների քարոզն ու ազգայնական քաղաքականությունն իրենց ձեռքին զինք են դարձնում պրոլետարիատին ու աշխատավոր գլուղացիներին սուբրկացնելու համար, ապա բոլոր ազգությունների բանվորներն ու զյուղացիներն իրենց միությունը, իրենց ինտերնացիոնալիզմով կարողանում են ուժեղացնել բուրժուազիայի գեմ մզվող դաստիարակային պայքարը:

ԻՆՉՈՒ ՊԵՏՔ Ե ԾԱՆՈԹԱՆԱԼ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԱՆՑՑԱԼԻՆ

Ինչպես մենք կտեսնենք, Դաշնակցությունը, հայ բուրժուազիայի շահերը ոլուղապահնելին, հենց այդ նացիոնալիզմի զենքն եր, վոր գործադրում եր մասսաներին խարելու և աշխատավորներին իրար զեմ հանելու համար։ Բայց խնդիրն այն ե, վոր գաշնակներն իրենց այդ արյունոտ գործունելությունը դեռ շարունակում են. ճիշտ ե, Հայաստանի աշխատավորների

կամքով նրանք դուրս են շղթաված մեր լերկրի սահմաններից, բայց դեռ այսոր ել նրանք արտասահմանում աշխատում են, հնարներ են մտածում՝ մեր բանվորագլուղացիական կառավարության դեմ կովելու, Խորհրդավիճակի համար տապալելու համար։

Իսկ մեր լերկրի ներսում դաշնակիներն ոգտագործում են քաղաքի ու զյուղի մասնավոր առևտրական ներին, սպեկուլյանտներին, հովեորականներին, գլուղի կուլակներին և այդ բոլորի միջոցով ուղում են վնաս հասցնել Խորհրդավիճակի իշխանությանը։ Բանվորագլուղացիական կառավարությունը սանձ և դնում բոլոր այդ շահագործողների ախորժակին և պալքարում և դրանց դեմ։ Իսկ Դաշնակցությունն, իրքն շահագործող դասակարգի կուսակցություն, հենվում է հենց այդ հակտխորհրդավիճակի տարրերի վրա և իր հին նպատակներն աշխատում և տուած տանել նոր ճանապարհներով։

Ահա թե ինչու, մենք պետք են ծանոթ լինենք Դաշնակցության անցյալին, պետք են խմանանք նրա տարածած հականեղափոխական գաղափարները, պետք են հեղյակ լինենք նրա խաբառակ գործներին, վորպեսզի հեշտությամբ կովենք նրա դեմ։ Դաշնակցության անցյալին ծանոթ լինելով, մենք ավելի հաջողությամբ էղայքարենք դաշնակների գործակալը հանգիստող առևտրականների, հովեորականների ու կուլակների դեմ; ավելի լավ կճանաչենք մեր դասակարգակին թշնամիներին։

ՅԵՐՅ ՅԵՎ ՎՈՐՏԵՂ Ե ԿՍԶՄԱԿԵՐՊՎԵԼ
ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Դաշնակցությունն իրքն կուսակցություն կազմակերպվել է 1890 թվականից։ Նա իր գործունելությունը

սկզբում տարածել և աճել է Անդրկովկասի կհնարուն-ներում՝ Թիֆլիսում, Բագվում, Շուշում, ինչպես նաև Ռուսաստանի մի քանի քաղաքներում։ Քանի վոր Դաշնակցությունը պաշտպանում եր բուրժուազիալի շահերը, բնականորեն, նա ավելի շատ հող եր գտնում այնտեղ, վօրակեդ ուժեղ ելին հայ բուրժուաները, հայ կապիտալիստները։ Դաշնակցությունն կուսակցության կազմակերպողները մի խումբ ոռուսահայ ինտիլիգենտներ ելին, վոր ամբողջովին տարկած ելին հայ բուրժուազիալի հարստացման գաղափարով և իրենց վրա ելին վերցնում հայ բուրժուազիալի շահերը պաշտպանելու պարտքը։

Բայց խնդիրն այն է, վոր Անդրկովկասում ստեղծված այդ կուսակցությունն սկզբում այնպիս եր ձևացնում, թե ինքն ամեններն չի հետաքրքրվում Անդրկովկասի բուրժուազիալի շահերով և Անդրկովկասին վերաբերող հարցերով։

Դաշնակցությունը հայտարարում եր, վոր լուր միակ նախատակն է։ «Փրկել Տաճկահայաստանը, փրկել տաճկահայ լիղբարներին»։ Բայց, ինչպիս մի փոքր հետո կհամոզվենք, Դաշնակցության այս լողունգների տակ ևս թագնված եր Անդրկովկասի հայ բուրժուազիալի շահերի պաշտպանությունը և Դաշնակցությունն այդ լողունգներով միաժամանակ ծառայում եր Ռուսական և այլ լերկրների իմպերիալիստներին։

Սակայն Դաշնակցություն կուսակցության այդ հականեղափոխական գործունելությունը լավ ըմբռնելու համար, անհրաժեշտ է համառոտ կերպով տեղեկանալ, թե 80-ական, 90-ական թվականներին ինչ դրություն մեջ ելին գտնվում Անդրկովկասի բանվորներն ու

դլուղացիները և Անդրկովկասի բուրժուազիան ու
կալվածատերերն ինչպիս ելին շահագործում նրանց:

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԿԱՊԻՏԱԼԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

80-ական, 90-ական թվականներին, այսինքն, Դաշ-
նակցության տռաջացման զբջանում, սկսում են շատա-
նալ Բագվի, Թիֆլիսի և Անդրկովկասի ուրիշ քաղաք-
ների գործարանները. սկսում են աշխատել բազմաթիվ
նավթահորեր, պղնձահանքեր և այլն: Մինչև այդ ժա-
մանակներն Անդրկովկասի բանվորների թիվը քիչ եր,
բայց մի 20-30 տարվա ընթացքում տճեց չտեսնված
չափերով: Հենց միմիտյն խոշոր գործարաններում աշ-
խատող բանվորների թիվը հասավ 150000-ի, վորից
մոտ 50.000-ը գտնվում ելին միմիտյն Բագու քաղաքում:
Այդ բանվորների մեծ մասը գյուղից եր գալիս և սոս-
կալի կերպով շահագործվում եր կապիտալիստների
մոտ:

Այստեղից պարզ ե արդեն, թե ինչքան շատ ելին
ավելանում խոշոր գործարանները և ինչքան մեծ
հարստություն ելին դիզում այդ բանվորներին շահա-
գործող գործարանատերերը: Անդրկովկասի բազմա-
թիվ ձեռնարկությունները պատկանում ելին թե ռու-
սական, թե լեվրոպական այլ լերկրների և թե հայ
ըրուրժուազիային: Նրանք բոլորն ել միացյալ ուժերով
ելին հանդես գալիս բանվորներին շահագործելու,
բանվորների գեմ ձնաշուներ գործադրելու ժամանակ:
Յեվ ցարական իշխանությունն ել միշտ ողնում եր
նրանց իր գորքով ու վոստիկանությամբ:

Սկզբնական շրջանում, լեռք բանվորները դեռ լավ չելին կազմակերպված, լեռք դեռ ուժ չունելին կապիտալիստների ղեմ կովելու համար, կապիտալիստներն ել իրենց գիտեցած ձեռվ ելին քերթում։ Բանվորներին չնշին ոռճիկ ելին տալիս, վորով բանվորն ինքն իրեն գլուխը հաղիվ եր պահում։ Բանվորները վոչ ընակարաններ ունելին, վաչ աղբուստի պայմաններ։

Այսպես, որինակ, սևագործ բանվորներն աշխատում ելին որական 12—14 ժամ և ստանում ելին աշխատավարձ՝ ամսական 12—18 ուռըլի։ Բանվորների դրությունն ավելի ևս ծանրանում եր նրանով, վոր նրանք իրենց կազմակերպությունները, կամ արհեստակցական միություններն ստեղծելու իրավունք չունելին, վոր գոնե արհմիությունների միջոցով իրենց պահանջներն առաջ տանեն։

Տեօնելով իրենց անտանելի դրությունը, բանվորներն աշխատում ելին միանալ, աշխատում ելին բողոքել։ Գործադուլներ ելին կազմակերպում, վոր իրենց դրությունը լավացնեն։

Ի հարկե, միայն հայ բանվորները չելին, վոր աշխատում ելին կապիտալիստաների նավթահորերում ու գործարաններում, եալին նաև թուրք, ուսու, վրացի, ինգուշ և ուրիշ ազգի բանվորներ։ Հայ կապիտալիստը ևս տարերեռություն չեր դնի, թե հայ բանվորն ուրիշ և, ուսու բանվորն ուրիշ։ Կապիտալիստի համար բոլոր ազգի բանվորներն ել մեկ են, նա ամենքին ել հավասար չափով աշխատում և շահտգործելը

Գործադուլների ժամանակ կապիտալիստները բոլոր

ազգերի բանվորներին ել գործարաններից դուրս ելին
անում, քաղց ու ցըտի ճանկն ելին ցցում ու ստի-
պում ելին լենթարկվել կապիտալիստի կամքին։ Բան-
վորներին ճնշելու գործում պատրաստ կանգնած եր-
նակ ցարտկան իշխանությունը։

Այս բոլորից հետո բանվորների աչքերն սկսում
ելին բացվել, նրանք սկսում ելին հասկանալ, վոր
իրենց թշնամին կապիտալիստն և Յեվ կամաց կամաց
բոլոր աղջի բանվորներն ել սկսում ելին գիտակցել,
վոր կապիտալիստների դասակարգի դեմ կռվելն ան-
հրաժեշտ և Դաստեկարգակին կռվի նշանակությունը
հասկանալ ելին սկսում։

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԳՅՈՒՂՍՑԻՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ

ԿԱԼՎԱԾԱՏԵՐԸ ԳՅՈՒՂՈՒՄ

Աւթունական-իննսունական թվականներին վոչ մի-
այն բանվորների դրությունն եր անտանելի, այլ և
զյուղացիների դրությունը։ Դյուղացին Աղբը կովկա-
սում գեռ ևս մեծ մասամբ աշխատում եր կալվածա-
տիրոջ հողերի վրա կալվածատերը զյուղացուց վեր-
ցնում եր զանազան տեսակի խոշոր հարկեր ու կա-
պալավարձ, զբկում եր զյուղացուն ամեն տեսակ քա-
ղաքացիական իրավունքներից և ինքն եր դառնում
զյուղի տերն ու իշխանը, նա յեր հանդիսանում զյուղի
գատն ու գատաստանը և նրա ցանկությունն ու
կամքն որենք եր զյուղացիության համար։ Հարյու-
րագոր, հազարավոր զյուղացիներ աշխատում ելին
կալվածատերերի, բեգերի, խաների, աղաների հողերի

վրա և նրանց աշխատանքի տերն ու տնօրենը փաստորեն արդ կալվածատերերն ելին. նրանք ելին լավում գյուղացու աշխատանքի արդյունքները:

Հայաստանում գյուղթյուն ուներ նաև մի հատուկ տեսակի կալվածատիրություն—զա հոգեորական կալվածատիրությունն եր:

Մինչև Հայաստանի խորհրդայնացումն ել՝ գյուղթյուն ունելին ալսպես կոչված վանքտայատկան կալվածքներ, վորոնց տերը վանքերում ապրող հոգեորականներն ելին: Հոգեորականները վոչ միայն մոլորության մեջ ելին գցում գյուղացիներին, և համոզում ելին, թե հնագանդ կերպով ծառայեցեք տստծուն և շահագործող դաստիարակերին, այլ և իրենք իրենց հերթին շահագործում ելին գյուղացիությանը այդ վանքապտական կալվածքների վրա աշխատեցնելով:

Այսպես որինակ՝ խոշոր կալվածքներ ունելին եջմիածինը և ուրիշ խոշոր վանքեր, վորոնց մեջ վարդապետներն ու այլ վանականները լվլվում ելին ամեն տեսակ բարիքներով: Իսկ այդ վանքերի հողերի վրա աշխատող գյուղացիները քաղցած ու վսղորմելի գրության մեջ ելին, վորսվնեան համոզված ելին, թե աստված իրենց կվարձատրի հանդերձալ կլանքում, մեռնելոց հետո գրախաը կզնան, վորովհետեւ իրենց աշխատանքի արդյունքով լերկրի վրա կերակրում են աստծուներկայացուցիչներին: Յեզ այդ գյուղացիները, բացի ամեն տեսակ ուրիշ հարկերից, վանքին տալիս ելին ասաւանորդներ:

Նշանակում են, գյուղացիությունը շահագործման աղբյուր, կթան կով եր թե հոգեոր և թե՛ վոչ հոգեոր կալվածատերերի ձեռքին:

իսկ զործարանների ավելացման և կտպիտալիզմի դարդացման հետևանքով գլուղում ավելացավ ու զարդացավ և մի ուրիշ շահագործող՝ զա ինքը առետրահան կապիտալիստներ, վոր ծառալում եր քաղաքի արդյունաբերական կապիտալիստներին, զործարանատերերին։ Դործարանատերերն ու առետրականները քաղաքներից իրենց թաթերը լերկարում ելին զեպի գրուղ, իրենց զործակատարների, ապրանքառուների միջացով ուղում ելին տիրանան գլուղին, ուղում ելին շահագործեն գլուղացիներին։

Ահա թե ալդ մասին ինչ և գրում այն ժամանակվա Ալեքսանդրապոլի գավառն ուսումնասիրող Զելինսկին։ Եր արտադրությունը վաճառահանելու ժամանակ գլուղացին հազվադեպ և դործ ունենում ուղղակի սպասողի հետ Ալեքսանդրապոլ քաղաքում ապրում են բազմաթիվ արդյունաբերողներ, վորոնց առետուրը կայանում և գլուղացիներին անհրաժեշտ ապրանքները վարկով բաց թողնելում, կամ նրան փոխարինաբար զրամ տալում՝ պարտքը գլուղատնական մթերքներով հատուցելու պահմանով։ և ինարկե, զըա համար նրանք սպասում են այնպիսի մօմենտի, ինը դյուղացին դանվում և ամենաանելանելի դրության մեջ, ինչպես որինակ՝ հարկը հավաքելու, անտունների համարակալի, թաղման և ալլ գժվարին ժամանակները։ Այսպիսի դեպքերում գլուղացիներն անխուսափելիորեն ստիպված են վաճառականներին դիմել՝ գալիք հունձի հաշվին անհրաժեշտ իրեր գնելու համար հասկանալի լի, վոր վաճառականներ չի քաշվում

իր ապրանքը մեկին լեռեք թանգ ծախելուց, կամ գլուղացուն փոխարինաբար դրամ և տալիս այնպիսի հսկայական տոկոսներով, վոր արդաշիսով գլուղացուն խճառմ և անելանելի ցանցերի մեջ»¹.

Վերցնենք մի ուրիշ որինակ. այդ ժամանակաշրջանում Նոր-Բայազետի գավառն ուսումնասիրող Գ. Պարվեցին գրում ե. ամբողջ գավառը «տեղական վաճառականների կողմից բաժանված և շրջանների, վարուսում առևտուր կատարելու իրավունքը, վաճառականների միջև կայացած փոխադարձ համաձայնությամբ, պատկանում ե նրանցից վորեւ մեկին։ Այդպիսի վաճառականները, կամ ինչպես իրանց անվանում են, մուղիտարներն, իրենց շրջաններում ունեն կրպակներ՝ ճոթեղենով և այլ ապրանքներով, վոր բնակիչներն, ըստ իրենց կարիքների, վերցնում են մեծ մասմբ առևտուիկ։ Ամառը կամ աշնանը վաճառականմուղիտարները պատում են իրենց շրջանի գլուղերում, կամ այդ նպատակով ուղարկում են իրենց գործակատարներին, վորպեսզի, բաց թողնված ապրանքների փոխարեն, բնակիչներից ստանան ցորեն, գարի, խոշոր ու մանր լիղջուրափոր անասուններ... ըստ վորում՝ դրամը փոխ տալն ապահովում են այնպես, վոր պարտքը վերադարձի տառաջիկա հնձի մթերքներով և շուկայի գներից չափազանց ցածր գներով, պարտքի տոկոսների վճարումը նույնպես տեղի չե ունենում հացանատիկով։ Ժամանակին չվճարվող պարտքերի համար հրեշտակոր զանցատուգանք և սահմանվում մթերքներն ընդունելիս չափում ու կշռում խորում

¹ Գաղիկ Պետրիյան. Պատմություն Հայոստանի սորտողական սոսպերացիայի. 1927 թ. Երևան, էջ 23.

ն և հացահատիկը քաղաքավին արդյունաբերության
ապրանքի հիմ փոխանակում՝ են նշանակալի ողուտով։
Երանք են մթերքների գնման այն ձևերը, վոր գոր-
ազրվում են կուլակ-առևտրականների կողմից։

Ահա այս կուլակ-առևտրականների միջոցով եր, վոր
ազգաքի գործարաններն ամենաեժան գներով գլուղա-
յուն ձեռքից խլում ելին նրա մթերքները և գլուղացին
արագործվում եր վոչ միայն հոգեոր ու աշխարհիկ
կարվածառերերի, այլ և առևտրականների ու գործա-
ռանատիրոջ ձեռքով։

ՅԱՐԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԻՉԻՉՔ ԳՅՈՒՂՈՒՄ

Այս բոլոր շահագործողների դեմ չքավոր ու միջակ
պլուղացիները կովելու հնարավորություն չունելին,
գործինուն բոլոր այս շահագործողների թիկունքում
կանգնած եր ցարական իշխանությունը, վորը պաշտ-
ուանում եր կարվածառերերին ու կաղիտալիստներին
և ամենամեծ չտիերով ինքը ևս շահագործում եր զլու-
ղացիությանը՝ խոշոր հարկերի միջոցով։

Գյուղում հարկերի ծանրությունը գլխավորապես
ընկնում եր միջակների ու չքավորների վրա, իսկ ու-
նեուն ու կուլակը, վորպես ցարական իշխանությունը
հարազատ տարը, միջտ ել աջակցություն եր գտնում
թե ցարական որհնքների, թե ցարական դատարանի
և թե ցարական ուրագնիկի ու պրիստավի կողմից։

Իսկ յեթե գլուղացիությունը փորձեք բողոքել այդ
շահագործողների դեմ, կամ ապստամբվեր, ապստամ-
բությունները և բողոքները ճնշելու համար պատրաստ
եր ցարական բանակը

ՇԵՐՏԱՎՈՐՈՒՄԸ ԳՅՈՒԿՅՈՒՄ

Շնորհիվ այս բոլոր պայմանների, դլուզի կուլակը, կալվածատերն ու առևտրականը ուղանում, հարստանում ելին, իսկ միջակ գլուղացիությունը, դլուղացիության խոշոր մեծամասնությունը, գնալով աղքատանում, չքավոր եր գառնում, իսկ չքավորն ել հետզհետեղ զրկվում եր հողից, զրկվում եր լծկանից, կթանից, ամեն ինչից և ստիպված եր լինում զլուղը թողնել, գնալ քաղաքները բանվորություն անելու իսկ բանվորություն անելով նա վոչ միայն չեր կարողանում լավացնել իր դրությունը, այլ և կործանման զուռ եր բացում իր առաջ, վորովհետեւ գրծարանատերը նրան շահագործում եր, ինչպես անսանը, վոչ պակաս անխղճությամբ։ Գյուղից քաղաք լեկած բանվորը վոչ միայն այդ միջոցներով չեր կարողանում վճարել ու վերջացնել իր ունեցած պարտքերը, այլ և ապրուստի ամենախղճուկ միջոցներից զորկ եր մնում։ Վոր Անդրկովկասի և մասնավորապես Հայաստանի գլուղացիության վիճակն անտանելի չեր, այդ մասին վկայում ե այն զաղթը, վոր 90-ական թվականներին տեղի լի ունեցել մի շարք զավաներից։ Դարաբաղի, Զանդեկուրի, Նոր Բայազետի, Աբարանի, Լոռիա, Դարալազգաղի և ուրիշ զավաների զլուղացիներն այդ թվականներին զաղթում ելին զեղի Բազու, Բաթում, Թիֆլիս, Նուբանիսկ Ամերիկա՝ բանվորությամբ մի կտոր չոր հաց ճարելու և իրենց աշխատած զրամով զյուղում ունեցած պարտքերը վճարելու համար Բայազետն և հիշել վոր «1892 թվականին Նոր Բայազետից զաղթովներին արվել և 1171 անցա-

ի իր, իսկ 1893 թվականին՝ 1217 անցագիր։ Դարաքի-
փառում 1893 թվականին տրվել և 570 անցագիր,
իսկ 1894 թվականին՝ 1893 անցագիր։ Նույն աճումն
և նկատում նաև այլ գավառներում։

ԽՆՁ ՊԵՏՔ Ե ԱՆԵՑԻՆ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Վերեւում նկարագրված պայմաններից արդեն ոլարգ
է, վոր լեռը Անդրկովկասի բուրժուազիան ու կարգա-
ծառակերերը շահագործում ենին բոլոր աղօտոթյունների
բանվորներին ու գյուղացիներին, լեռը բանվորներն
ու գյուղացիները անցում ենին ցարական իշխանու-
թյան լծի տակ, բանվորների ու գյուղացիների շահե-
րը պաշտպանող կուսակցությունը դուրս պետք և գտը
այդ շահագործման ու շահագործողների դեմ։

Հեղտփոխական կուսակցությունն այդ ժամանակ
պետք և կազմակերպեր բանվորներին ու գյուղացինե-
րին, նաև պետք և բացատրեր ու հասկացներ, վոր
բանվորների ու գյուղացիների թշնամին բուրժուա-
ներն ու կարգածառակերերն են։ Հեղափոխական կու-
սակցությունը բանվորների ու շահագործվող գյուղա-
ցիների մեջ պետք և զարթեցներ դաստկարգակին կովի
դիտակցությունը և նրանց կովի պետք և հրավիրեր
շահագործողների դեմ—առանց ազգի խորության։

Հենց այդպիս ել վարվում եր Ռուսաստանի սոցիալ-
դեմոկրատական կառավարությունը, վոր այդ ժամա-
նակներում նոր եր կազմակերպվում և իրեն նպատակն
եր դնում զեկութարի բանվոր դաստկարգի կոիմ ընդ-
դիմ բոլոր շահագործողների։

Ինչպես ընկ. Ա. Շահումյանն և տսում, հայ բուր-
ժուազիան աճում, իր փորք հաստացնում եր շահա-
գործելով հայ պրոլետարիատին, թալանելով ու ավե-
րելով քաղաքի ու գյուղի չքավորներին «Դաշնակ-
ցությունն ել հանգիստ դիտում եր այդ թալանը և
վոչ մի ծպտուն չեր հանում»:

Բայց հենց վոր շահագործվողները փորձում ելին
ամենափոքր չափով անդամ դուրս գալ բուրժուազիալի
դեմ, հենց վոր բանվորներն ուղում ելին դասակար-
գալին կռիվ սկսել, Դաշնակցությունն իսկուն լաց
ու կոծ եր բարձրացնում, բանվորներին աշխատում եր
համոզել, վոր բոլոր «հայերն ել լեղբայրներ են, վոր հա-
յերի մեջ դասակարգալին կռիվ չպետք ել լինի, վորով-
հետեւ հայերն ունեն ընդհանուր ազգային թշնամիներ,
ընդհանուր ազգային ձգտությունը»:

Նույնը նաև ցարական իշխանության վերաբերյալ՝
Ցարական իշխանությունը, վորպես կատարալիստների
ու կալվածատերերի իշխանություն, ամեն ձևով ալաշտ-
պանում եր հայ կապիտալիստներին, դրամով ել, ու-
րիշ միջոցներով ել հայ կատարալիստներին ոգնու-
թյուն եր տալիս: Իսկ հայ բանվորությունն ու հայ
գյուղացիներն, ի հարկե, ճնշվում ելին ցարական իշխա-
նության կողմից: Այս ամենն ել Դաշնակցությունը
հանգիստ կերպով դիտում եր:

Բայց բավական եր, վոր «Ժողովրդական մասսանե-
րի մեջ առաջ դար քաղաքական դիտակցության մի
նշան անդամ, բավական եր, վոր այդ մասսաների մեջ
լովեր վառավարության դեմ ուղղված բողոքի մի չնչին

ձունս և «Դաշնակցությունը ծաղրի լեռ լենթարկում»
այդ բողոքները, ծիծաղում եր բողոքողների վրա և
քարոզում եր, թե ցարական կառավարության դիմ
չողեաք և կավել:

Դաշնակցությունն ամեն տեղ քարոզում եր, թե հա-
յերի հայրենիքը Տաճկահայաստանն է, և բոլոր հայերն
ել պետք ե կավեն միմիայն Տաճկահայաստանը, միմի-
այն հայրենիքն ազատելու համար։ Իսկ ոռւս կառա-
վարության դեմ կամ հայ կապիտալիստների դեմ կըռ-
վել, կնշանակի գավաճանել ազգի և հայրենիքի շահե-
րին, կնշանակի գավաճանել «ազգային մեծ զործին» և
«առաջկահայերի ազատազրությանը»։

Այսպես եր քարոզում Դաշնակցությունն այն ժամա-
նակ, յերբ մասսաները ձգուում ենին դասակարգացին և
հեղափոխական կռվի, յերբ Անդրկովկասի հայ բան-
վորն ու հայ գյուղացին, մլուս ազգությունների աշ-
խատավորության հետ միացած՝ պետք ե պատրաստ-
վեր հենց կապիտալիստների ու ցարական իշխանու-
թյան դեմ կռվելու նպատակով։ Նույն այդ Դաշնակ-
ցությունն իր «Դրոշակ» թերթի միջոցով զգուշացնում
եր հայերին, վոր նրանք «ազրտվոկացիաների» զոհ չգնան
և հեղափոխության ճանապարհը չըռնեն։

ՈՒՄ ՇԱՀԵՐՆ ԵՐ ՊԱՇՏՊԱՆՈՒՄ ԴԱՇՆԱԿՑՈՒ- ԹՅՈՒՆԸ

Այս հարցի պատասխանն արգեն առանց բացատրելու
յել հասկանալի լի։ Դաշնակցությունը, ինչպիս տսում ե
ընկ. Շահումյանը, — «խեղզում եր հայ պրոլետարիատի
բողոքի ձայնը և աշխատում եր ճնշել հայ բուրժուա-

ղիալի ղեմ ուղղված տմեն մի փորձ, ամեն մի հեղափոխական շարժում:

Ցեզ հայ բուրժուաների, հայ հարուստների ու կեղծքողների շահերը պաշտպանելով՝ Դաշնակցությունն աշխատում եր թմրեցնել հայ բանվորների դասակարգային կոփվը: Այդ բանն անելու համար, ինչպես մենք տեսանք, Դաշնակցությունը հայ բանվորի և հայ շահագործվող դլուղացու ուշադրությունը հայ կապիտալիստից ու նրա պաշտպան ցարական իշխանությունից հեռացնում եր, և քարոզում եր, թե՝ «հայ բանվորի ու գյուղացու թշնամին Տաճկաստանն և և հայ ազգի թշնամին ել տաճիկ ժողովուրդն են»:

Բայց ինչո՞ւ անպատճառ տաճիկն ու Տաճկաստանը: Ինչո՞ւ անպաման «տաճկահայերին տղատելու» հարցով եր զբաղվում Դաշնակցությունը:

Այս հարցին ել մենք պետք և պատասխանենք, վոր Դաշնակցության իսկական ղեմքը մեզ համար լավ պարզվի:

«ՏԱՃԿԱՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԱՏԵԼՈՒ» ՀԱՐՑԸ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԸ ԶԵՅԻՆ ԴՆՈՒՄ

«Տաճկահայաստանը Փրկելու» նպատակը կապ ուներ արդյոք այն պայքարի, այն կովի հետ, վոր Անդրկովկասի հայ, ոուս, վրացի, թուրք և այլ բանվորները պետք է մղելին ամբողջ Ռուսաստանի բուրժուազիալի և ցարական իշխանության ղեմ: «Եթե Դաշնակցությանը հաջողվեր ազատել Տաճկահայաստանը և սուղծել այնտեղ նոր, թեկուզ բոլորովին ազատ հայկական մի թագավորություն, զրում և ընկ. Շահում-

լանը; — դրանից գոնե ամենաշնչին չափով կլավանալը կովկասի հայ պլրոլետարիատի և հայ չքավորության վիճակը:

Ի՞նարկե, վնչ:

Տաճկահայաստանի հարցը չեր առաջացել կովկասի վնչ հայ, վնչ ոռու, վոչ վրացի և վոչ ել մի ուրիշ ազգի աշխատավորների ու բանվորների շահերից:

Բայց գուցե Տաճկաստանի հայ աշխատավորներին փրկելու բարի ցանկությամբ եր Դաշնակցությունը Տակահայաստանն «ազատելու» խնդիր առաջ բերում:

Սա լել սխալ ե, վորովհետեւ շատ կան փաստեր այն մասին, վոր Տաճկաստանի աշխատավոր զբուղացիները շարունակ բողոքել են, կարծես զգացել են, թե Դաշնակցության «փրկելու» իրենց վրա ինչքան թանգի ենըստելու: Նրանք հեռու լին լիղել Դաշնակցությունից և խնդրել են, վոր դաշնակներն իրենց հանգիստ թողնեն: Վորովհետեւ, ինչպես մենք կտեսնենք, դաշնակների գործունեցությունը նրանց տունն ու տեղն ավերում, նրանց համար միմայն կոտորածներ եր բերում:

«ՏԱՃԿԱՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԱՏՄԱՆ» ԻՍԿԱԿԱՆ ՎՊԱՏՃԱՐԸ

Յեթե վոչ Անդրկովկասի բանվորներն ու զյուղացիներն ելին այդ հարցը դնում և վոչ ել տաճկահայ աշխատավորները, ինչպես եր հապա, վոր «Տաճկահայաստանն ազատելու» մասին խոսվում եր և «Տաճկահայաստանն ազատելու» համար Փիղայների ու հայ գուկների խմբեր ելին կազմվում:

Այս հարցին պատասխանելու համար պետք է վեր-
հիշենք, վոր դեռևս տասնութերորդ դարի վերջերին և
տասնիններորդ դարի սկզբներին, երբ Ռուսաստանի
առևտրական կազիտավալը զարգանում ու իր համար
շուկաներ եր փնտռում, ցարական իշխանությունն ալդ
կազիտավալի զարգացմանն ընդառաջ գնալով, նվաճողա-
կան քաղաքականություն եր տանում իր հարավային
սահմանների վրա։ Դեռ այդ ժամանակ եր, վոր ցա-
րական իշխանությանը հաջողվեց գրավել Անդրկովկա-
սի մեծ մասը, խոշոր լերկրամասեր խլելով Տաճկաս-
տանից ու Պարսկաստանից։ Յեթ ինչուն այն ժամա-
նակու ուստի հրապարակախոսն եր գրում, «զրա շնոր-
հիվ Ռուսաստանը Յեփրոպալիի ու Ասիալի միջն դառ-
նալու լի տակտը կենտրոն։ այնպես վոր, նրա մի
ձեռքը հասնի Արևելքին, մյուսը՝ Արևմուտքին։ Յեթ
այդ միջոցով շատ ուրիշ հողեր և ժաղովուրդներ իրեն
ակածա հարկատուներ դարձնի և դեպի իրեն գրավի
հնդկական ու ամերիկան գանձերի գգալի մասը»¹։

Ռուսաստանի այդ ձգտութերը միանգամայն համա-
պատասխանում ելին հայ տակտը ակատը կանոներին ու վա-
ճառականներին, վորովնետե դրանից նրանք ոգուտ
ունելին։ Մենք տեղեկանում ենք, վոր արդեն վազուց
գոյություն ուներ Սպահանի հայ վաճառականական
ընկերությունը, վորի գոլիսավոր վաճառելիքներն ելին՝
մետաքս, մետաքսե ու բամբակն զործվածքներ, թան-
գաղին ակներ և այլն։ Նրանց քարավանները գնում
ելին հնդկական ու պահակական ծովեղբայ քաղաք-
ները, Բուխարայի կողմները, Թիֆլիս, ուր վաղուց ար-
դեն սեփական քարվանսարաններ ունելին»։

1 «Նոր ուղի», № 5, 1929 թ., էջ 155.

Այս վաճառականների ու Ռուսաստանի տոկոսականների շահագործությունների շահագործությունների մաս կապված ելին. դրա համար ել հայ վաճառականները ցարտկան իշխանությանը զիմումներ ելին անում, թե լեկեք մեր տերկիրը գրավեցեք, իսկ մենք ել ներսից կապստամբունք, կողնենք ձեզ:

Իսկ Ռուսաստանի ցարական իշխանությունն ել իր տցդ նպատակնելն իրականացնելու համար՝ հայ վաճառականների հետ միասին քարոզում ելին, թե ցարի նողատակն և քրիստոնյա հայերին ու Հայաստանը փրկել մահմեկոկանների լից և միացնել Ռուսաստանին, զուրս քշելով պարսիկներին:

Հետագալում, տասնիններորդ դարի վերջին քառորդում, մենք տեսնում ենք, վոր հայ բուրժուազիակի շահերը պաշտպանող հրապարակախոս Գրիգոր Արքունին նույնօքն կոչ և անում՝ այս անզամ արդեն Տաճկաստանի «Հոյ լեղբայրներին», վոր նըանք ամեն կերպ աշխատեն Տաճկահայաստանը միացնել Ռուսաստանին Բայց Արքունու զրդապատճառները տարբեր են տասնիններորդ դարի սկզբի հրապարակախոսների զրդապատճառներից, Արքունին այդ բանն առաջարկում և դոչ թե միայն տուելու անելու համար, այլ և զիսավարապես հայ բուրժուազիակի ուշադրությունն և գրավում Տաճկահայաստանի հանքացին հարստությունների, քարածուխի և այլ հանքերի շահագործման վրա: Իսկ սրա պատճառն այն եր, վոր հայ բուրժուազիան արդեն դառնում էր արդյունաբերական բուրժուազիա. նըան չելին բավարարում միմիայն տուելուը ու քարավանները, ինչպես վերն ասացինք, նա արդեն գործարանների ու հանքերի տեր և իր

հարստությունն ավելի բազմապատկելու նպատակով՝
ուղարմ եր իր առևտրի ու արդյունաբերության հա-
մար գաղութ դարձնի Տաճկաստանի հանքերն ու
հարստությունը:

Տասնիններորդ դարու վերջերին Անդրկովկասի
հայ բուրժուազիալի շահը միանդամայն համապատաս-
խանում եր ոուսական բուրժուազիալի և միապետու-
թյան նվաճողական ձգտութեարին։ Հենց այդ պատճա-
ռով եր, վոր հայ բուրժուազիան և նրա կուսակցու-
թյուն Դաշնակցությունը իննսունական թվականնե-
րին կըկնում ելին Տաճկահայաստանը տաճիկներից
խլելու և Ռուսաստանին միացնելու գաղափարը։ Բայց
Դաշնակցությունն ու բուրժուազիան ալևս Արծրու-
նու նման հարցը պարզ չելին կարող դնել, թե Տաճ-
կահայաստանը պիտք ե խլել՝ հայ բուրժուազիալի
կողմից այնտեղի հարստությունները և բնակչությունը
շահադրծելու համար։ Այդ դեպքում մասսանները
լերես կղարձնելին հայ բուրժուազիալից ու նրա կու-
սակցություն Դաշնակցությունից։ Իսկ այդ դրուժը
գլուխ բերելու համար մասսանների մասնակցությունը
անհրաժեշտ եր։ Դրա համար ել Դաշնակցությունն
աշխատեց թող փչել աշխատավորության աչքին և
սկսեց քարոզել, թե Տաճկահայաստանը Թուրքիալից
պետք ե խլել՝ այնտեղի հայ լեղբայրներին ազատելու
համար։

Յեվ վորպեսզի հայ աշխատավորներին կտրողանա-
կովի դուրս բերել թուրք աշխատավորության դեմ՝
Դաշնակցությունը հայ աշխատավորությանը թունա-
վորում եր նայիտնալիզմի թունով, — հայ և թուրք
ազգությունների դասակարգալին շնորտավորումները

թագցնում և նրանց իրար դեմ պրզում էր վորակես
ապղություններ։ «Հայը և թուրքը դարավոր թշնամի-
ներ են, քարողում եր Դաշնակցությունը. բարբարոս
թուրքը տիրացել ե մեր հայրենիքին, մեր անցլալ
թագավորությունը թուրքը կործանել ե, ուստի հայի
և թուրքի միջև վոչ մի հաշտություն չի կարող լինել»։

ՀԱՅԴՈՒԿԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄԸ

Այսպիսով, Դաշնակցության հայ լեղբարներին փլը-
կելու և լողունզը, իրականության մեջ նշանակում եր
Անդրկովկասի հայ բուրժուազիալի համար հանքեր ու
նավթահորեր ձեռք բերելու իսկ վորովհետև հանքերն
ու նավթահորերը միմիայն կուլով կարելի իեր ձեռք
բերել Տաճկաստանից, Անդրկովկասի հայ բուրժուա-
զիալի կուսակցություն Դաշնակցությունը կազմում է
այդպիսի կովող խմբեր։ Դաշնակցության հեղափո-
խական խմբավհետական, հայուկակալին խմբերը Ան-
դրկովկասում կազմակերպվում, Անդրկովկասից անց-
նում ելին Տաճկաստան՝ այնտեղ ապստամբություն-
ներ բարձրացնելու համար։ Ցեղ Անդրկովկասի հայ
բուրժուազիան եր, վոր այդ խմբերին դրամ, զենք,
ամեն տեսակ միջոցներ եր տալիս՝ Տաճկահայաստանը
խլիլու համար իսկ ցարտկան իշխանությունը Դաշ-
նակցության և հայ բուրժուազիալի այդ աշխատանք-
ների վրա նայում եր ներողամտությամբ, հաճախ
մինչեւ իսկ ոգնում եր նրանց, վորովհետև Դաշնակցու-
թյան ձգտութներն ողտակար ելին նաև ցարիզմի հա-
մար։

Տաճկահայաստանի խոշոր հողտմասերը Տաճկաստա-

նից կտրվելով, պարզ, և վոր պետք և միանալին Ռուսաստանին և պետք և նպաստելին Ռուսաստանի հարավային սահմանները մինչև Միջնաբարեկան ծովը ու Պարսից ծոցը հասցնելու ծրադրին:

ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՍՊԱՍԵԼԻՔՆ ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏ-ՆԵՐԻՑ

Սեփական ուժերով իշխանությունը գրավելու, կամ եր ուժերով «Հայաստանն ազատելու» նպատակով չեր, վոր Դաշնակցությունը կազմակերպում եր այս առջևատաճրությունները:

Ընդհակառակը:

Հայ բուրժուազիալի կուսակցություն Դաշնակցությունն իր հույսը դրել եր Յեվրոպալիի և ոռոսական իմպերիալիստների վրա:

Մի կողմից հայութեակալին և ֆիդայական խմբեր ուղարկելով Տաճկատան, մյուս կողմից Դաշնակցությունը պատգամավորներ եր ուղարկում Յեվրոպա և Ամերիկա և իմպերիալիստներից ոգնություն եր ուղում Հայաստանն «ազատելու», կամ «Հայաստանի մանդատը» վերցնելու համար:

Յեվրոպական իմպերիալիստներից Դաշնակցությունն ոգնություն եր խնդրում և գթություն եր աղերսում, թե՛ ով բարի իմպերիալիստներ, յեկեք ու ազատեք կոտորվող հայ ժողովրդին:

ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ

Իսկ իմպերիալիստները Տաճկատանի գործերին միշտ ել ուրախությամբ են խառնվել Վորովինեան,

ինչպես մենք ոլատմությունից զիտենք, խոշոր իմպերիալիստական պետությունները միշտ ել մտածել են Տաճկաստանը մաս-մաս տնելու և իրենց միջև բաժանելու մասին:

Բավական և բնրենք այստեղ միքանի տող այն գտղանի պալմանազրից, վոր մեծ պատերազմի ժամանուի, 1916 թվի դարնանը կնքվել և Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի միջև (այդ դաշնագիրը հրապարակ հանեցին բարձելիկները, Հոկտեմբերյան հեղափոխության օրերին¹):

Այդ համաձայնության մեջ ասվում ե, վոր՝

«Թուսաստանը ձեռք և բերում Երզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի շրջանները, ինչպես և հարավային Քրդաստանի տերբիտորիան՝ Մուշ-Սղերթ, Իրզնումար, Ամալիա-պարսկական գծով»:

«Ֆրանսիան ստանում է Սիրիալի ծովափնտա շերտը, Աղանալի վիլայեթը և հարակից՝ Անթափ-Մարդին գծից մինչև ապագա ոռուսական սահմանը և հյուսիսից՝ Ալմադուղի ու Կեսարիալի, Աղ-դուղի, Իլ-դիզ գուղի, Խարբերդի գծի սահմաններում ընկած հողերը»:

«Մեծ Բրիտանիան (Անգլիան) ձեռք և բերում Միջազգայի հարավային մասը՝ Բաղդադ քաղաքի հետ միասին, հյուսիսում՝ Հայֆա ու Աղկանավահանդիսաները և ալյուս:

Այս մի որինակն արդեն ցուց և տալիս, թե ինչ վերաբերմունք են ունեցել այդ Յ պետությունները դեպի Տաճկաստանը:

Բայց միմիայն դրանք չեն. Գերմանիան, Իտալիան

¹ Տես Ա. Կարենյանի «Իմպերիալիստական պատերազմն ու Հայուստանը» զրքույլը:

և ուրիշներն ել Տաճկաստանի վրա նույն նպատակով
են նաև Ամեն մեկն աշխատել ե Տաճկաստանից մի
վորեե բան սղկել—կամ կոնցեսիաներ ստանալ կամ
նրա յերկրում յերկաթուղիանցկացնել ու նրա հանքերը
շահագործել, կամ վորեե կտոր հողամաս խլել: Մի
խոսքով՝ բոլորն ել աշխատել են Տաճկաստանն իրենց
դաղութը դարձնել, կամ տիրել Տաճկաստանին:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՎՈՐՊԵՍ ՄԻՋԱՑ

Իմպերիալիստուկան պետությունների այդ նպատակ-
ների համար Տաճկահալաստանն ու հայութեալին շար-
ժումն ամենաձեռնուու բանն են դարձել

Ի՞նչներ:

Վորովհեան գաղութների հայ բուրժուազիան, Տաճ-
կահալաստանը ձեռք բերելու հսմար, ինչպես ասացինք,
իր հուկաը զրել եր իմպերիալիստական պետություն-
ների վրա և ապստամբություններն ել Տաճկաստանում
նրա համար եր կազմակերպում, վորպեսդի իմպերիա-
լիստաները «հայոց աղդին խղճան», նրան ոգնության
հասնեն:

Թեվ իսկապես՝ իմպերիալիստները Հայաստանի և
հայ ժողովրդի մասին դովեստներ ելին զրում, հայ
բուրժուազիային և Դաշնակցությանը խոստումներ ելին
անում, վոր ամեն կերպ կոգնեն: Մինչև անուամ սուլ-
թանական իշխանության վրա վորոշ ձնշումներ ելին
դործ դնում:

Բայց նրանց իսկական նպատակը բոլորովին ուրիշ
եր: Այդ բարրի հետեանքով յերբ անդլիական, ֆրան-
ոիստկան կամ ուրիշ իմպերիալիստներին հաջողվում եր

վորեն կոնցիսիա վերցնել, վորեն դիջում ստանալ սուլթանական իշխանությունից, նրանք իսկուն մռանում ելին Հայաստանն ել, հայերին ել և սուլթանին ազատություն ելին տալիս, վոր նա հայերի և առհասարակ քրիստոնյաների կոտորած կազմակերպի:

Իսկ սուլթանի բանակալական իշխանությունն ել ամենազազանալին միջոցներով վրեժ եր առնում իր տնհաջողության պատճուռը համարվող հայերից, հայերի կոտորածներ եր կազմակերպում և աշխատում եր Տաճկաստանը մաքրել հայ և քրիստոնյա ուրիշ աղպերից:

ԳԻՏԵՑԻՆ ԱՅՍ ԲԱՆՔ ԴԱՇՆԱԿՑԱՆՆԵՐԸ

Տեսնմամ ելին այս ամենը գաշնակցականները: Ի հարկե, գիտելին: Դեռ գաշնակների հրազարակ գալուց շատ առաջ, հայ աղղայնական գրող Ռաֆֆին գրել եր, «Քրդերի հակակրությունը և հայերի համակրությունը գեղի սուսները—ալդ յերկու հակառակ արտահայտությունները բավական ելին մի սխալ յեղբակացություն տալու անդիմացիներին, հորինելու այն պլանը, վոր նրանք նպատակ ունելին կազմել Հայաստանի վերաբերմամբ... Հայերի վիճակը շատ չեր հետաքրքրում անդիմացիներին. Նրանց մի ուրիշ բան եր հարկավոր: Նրանց հարկավոր եր մի զորավոր պատշներ, վոր կանգնեցնելին սուսների առաջ», վորպեսզի ցարական Ռուսաստանը չկարողանար Տաճկաստանից խլել Տաճկահայաստանը:

Ռաֆֆին գրում ե, վոր ալդ նպատակի հոմար անդիմացիները «քրդերին ավելի ընդունակ ելին զըտնում» և աղքա, նույն Ռաֆֆին նկարագրում ե, թե

ինչպես անողիքական կռնսուլները (պետության ներկայացուցիչները) ոգնում ելին, վոր կազմակերպվեն քըրդական միություններ։ Նա շեշտում ե, վոր անզիական ներկայացուցիչները ձգտել են քուրդ քօնամի ցեղերը միացնել յեվ կազմել ուսպմական գնդիր։

«Այդ բոլոր ջանքերի հետեւանքն այն լեղավ, վոր քրդերը, տեսնելով, վոր իրենց վրա ուշադրություն են դարձնում, ավելի լերես առան, ավելի հանգուցն դարձան, և հենց այն ժամանակ, իերը ուսւաց բանտկը կանգնած եր Սան-Ստեֆանովի մեջ, Խնուրակի կողմերում քրդերն սկսեցին կոտորել հայերին, իսկ Աղբակա, Բաշկալալի կողմերում Շելիս Իրազուլլահը վոչնչացրեց ավելի քան հիսուն հաւոց գյուղեր և արժանացավ վաւնի տնտեսական կոնսուլի սիրալիք այցելությանը...»

Ծեսնում ենք, վոր ամենաթունդ ազգական զրոյ Շաֆֆին անգամ նկատում ե, վոր անզիական իմալերիալիստներն իրենց շահերի համար կազմակերպում են փոքր ազգությունների կոտորածներ։ Յեզ միմիայն այս փաստը չի, միմիայն մի քիչ առաջ մեր բերած գաղտնի դաշնագրերը չեն։ Անթիվ ու անհամար են իմալերիալիստների խաղացած խողերը «Հայոց հարցի» և «Տաճկահայաստանն աղատելու» հարցի գլխին։ Յեզ ինչպես ասացինք, վոչ միայն անզիական իմալերիալիստներն են այդպես վարվել, այլև Փրանսիական, առևտեկան, գերմանական և այլն։

ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԻ ԳՈՐԾԻՔՆ

Այս ամենից հետո հարց ե առաջ գալիս։ Յեթե այս ամենը դաշնակներին հայանի յեր, ինչու նրանք շա-

րունակ կապված ելին մնում իմպերիալիստների փեշերից ինչև Դաշնակցությունը մինչեւ վերջն ել իմպերիալիստների համար սպասավորի դեր եր կատարում։

Վորովհետեւ, ինչպես ասում են, Դաշնակցության վոտքերից ել չեր կախված հայ ժողովրդի կամ հայ աշխատավորների փրկությունը։

Հենց վոր իմպերիալիստները միջամտում ելին Տաճկաստանի գործերին ու իրենց ցանկացածը սուլթանական իշխանությունից ստանալով մի կողմ ելին քաշվում, հենց վոր սուլթանն իր ահոելի կոտորածներն եր կազմակերպում, իհարկե, հայդուկները հեշտությամբ կարողանում ելին կովի դաշտը թողնել ու արտասահման փախչել Իսկ գաղութներում ապրող հայ բուրժուազիան, իհարկե, կորցնելու վոչինչ չուներ, վորովհետեւ նրա հարստությունն ել, նրա տունն ու տեղն ել, նրա ընտանիքն ու մոտիկներն ել, բոլորն ել Տաճկաստանի սահմաններից դուրս ելին գտնվում, ու սուլթանական բռնապետությունն ինչ ել աներ՝ նրանց վոչ մի կերպ մխասել չեր կարող։

Ուրեմն, յեթե գաղութների հայ բուրժուազիան ալսքան հեշտ եր պրծնում և ալդ կոտորածներից ինքը մխաս չուներ, ել ինչև հրաժարվեր նույն ուղղությամբ իր գործը շարունակելուց, քանի վոր թե ոռւսական և թե չեվրոպական ուրիշ իմպերիալիստներ նրան հուլսեր ելին առլիս, նրա հետ կապեր ելին հաստատում։ Այսպես որինակ՝ հայտնի յե, վոր Բագվում հսկայական նուվթահօրեր ունեցող միլիոնատեր Ղուկասովը մեծ իմպերիալիստական պատերազմի ժամանակ ավելի հարստացավ, քանի վոր յելրոպական միքանի ընկե-

բություններ իրենց գործարանների պատրաստած հը-
րացաններն ու զինամթերքները նրա միջոցով ելին
վաճառում ցարական կառավարությանը¹:

Ել ինչու այդ բուրժուազիան իմակերիալիստների
փեշերից չկպչեր: Ու Դաշնակցությունն ել ինչով
պետք և պաշտպաններ այդ բուրժուազիաի շահերը, լի-
թե հրաժարվեր իմակերիալիստների ձեռքին գործիք
դառնալուց և գաղութների հայ բուրժուազիալի կամքը
կատարելուց:

Իսկ հայ ժողովուրդը, հայ աշխատավորները Տաճ-
կաստանում թող կոտորվեն: Այդ վոչինչ: Դա հերո-
սություն ե: ԶԲ վոր նրանք իրենց արյան գնով «հայ-
րենիք են փրկում» մուսուլմանների, տաճիկների ձեռ-
քից: ԶԲ վոր նրանք իրենց «սուրբ ազգն» են պաշտ-
պանում և հին հայկական թագավորությունը նորից
պետք և ստեղծեն և իրենց դարերի թշնամուն, «հարամ»
թուրքերին յերկրի յերեսից պետք և ջնջեն:

Այսպես եր մտածում Դաշնակցությունը և հայ լու-
սավորչական յեկեղեցու միջոցով, յեկեղեցական-ծխա-
կան ու հայկական բոլոր դպրոցների միջոցով այս
գաղափարներն եր տարածում հայ յերիտասարդու-
թյան, հայ աշխատավորների և առհասարակ հայ բը-
նակչության մեջ:

Դաշնակցական գրողներն ու լրագրողներն աշխա-
տավորությանն աշխատում ելին համոզել, թե հայ
կապիտալիստի, հայ բանվորի, հայ գյուղացու շահերը
մեկ են—նրանք իրարու դեմ չպետք և կովեն, և հայ
աշխատավորներին, ինչպես մենք տեսանք, գրգռում
ելին թուրք աշխատավորության դեմ: Առաջ ելին բե-

¹ Տես Ա. Կարինյանի «Հայ ազգայնականների ուղին».

ըում աղջալին ատելություն, աղջալին թշնամություն և դրանով ծառալում ելին հայ բուրժուազիալին և նրանց հրամալող իմալերիալիստներին:

Ինչպես մի փոքր հետո կտեսնենք, իր գոլության 30—40 տարիների ընթացքում Դաշնակցությունը չհրաժարվեց իմալերիալիստների դռներին քարշ դալուց, և թե իմալերիալիստական պատերազմի ժամանակ, թե իր իշխանության ժամանակ և թե այժմ արտասահմանում ու մեզ մոտ, միշտ ել միենուուն հակահեղափոխական գործն եր կտտարում: Ալսինքն, թուլացնում եր բանվորների ու գլուղացիների հեղափոխական կռիվը, խանդարում եր, վոր բանվորներն ու գլուղացիները կապիտալիստների և կալվածատերերի դեմ կռիվ մղեն: Իսկ մյուս կողմից հայ աշխատավորների մեջ աղջալին ատելություն եր տռաջացնում և հայ բանվորին ու գլուղացուն կռիվի լուրջ բանվորների գեմ:

II. ԴԱՅՆԱԿՑՈՒԹԱՆ ԴԵՐԸ 1905 ԹՎԱԿԱՆԻ ՃԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

ՃԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ

Դաշնակցությունն իր ալս քարոզներով կարմղ եր ազատել հայ կապիտալիստին բանվորների զայրութից. իհարկե, վոչ: Հակառակ դաշնակների ցանկության, բանվորների հեղափոխական շարժումն Անդրկովկասում քանի գնում՝ զարգանում եր: Գործադուլներն ավելանում ելին և բանվորների ցուցերը շատանում:

Այս շարժման մեջ, պարզ ե, վոր ամենահեղափոխական և ամենաառաջին տեղը գրավում եր Բագվի բանվորությունը: 1900—1901 թվականից Բագվում արդեն աշխատում եր Ծովասառտանի Սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցությունը (այսինքն՝ մեր, բայլշեիկների կուսակցությունը, վոր առաջ այդպես եր կոչվում): Յեզ մեր կուսակցությունն արդեն սկսում ե կազմակերպել բանվորներին:

1901 թվի ապրիլի 21-ին և 1902 թվի մարտի 2-ին ու մայիսի 27-ին մենք արդեն տեսնում ենք, վոր Բագվի բանվորները դուրս են գալիս ֆողոցները և ցուց են կազմակերպում կապիտալիստների և ցարական իշխանության վեմ.

Իսկ 1903 թվի հուլիսի 3-ին ահղի լե ունենում գործադուլ, վորի մասին Ռ. Ա. Պ. Կ. դադանի թերթը՝

«Կայծը» հետեւալն և գրում. «Սկսվեց Բագվի հայտնի գործադուլը. Սկզբում կանգ առան Նորելի, Խոտշիլդի, Շիբանի և այլ գործարանները, հետո կանգնեց վողջ Բագուն—Սև և Սպիտակ քաղաքները, Բիբի-ելբաթը, չերկաթուղարին դեպքն և վերջում գործադուլը դարձավ ընդհանուրը:

Հաջորդ 1904—1905 թվականներին նույնպես Բագվում տեղի չեն ունենում խոշոր գործադուլներ, վորոնց շնորհիվ Բագվի կապիտալիստներն ստիպված են լինում բանվորներին խոշոր զիջումներ անել: Մասնավանդ 1904 թվի գործադուլը վերջանում և բանվորների հաղթությանը Այս բանն, իհարկե, անհանգստացնում և ցարական իշխանությանը, վորովհետև ցարական իշխանությունը մտածում և, վոր այդ հաջողություններից վոգեսորված՝ ուրիշ քաղաքներում ել գործադույներ կիւազմակերպվեն:

Հետաքրքիր և աշխատավորների տնօւնից այդ ժամանակ Կոնստանտին Խատիսովի ճառը, վորնա արտասանել և 1904 թվի գործոդուլի մասին. նա «վարեհնիներ» և անվանում բանվորներին, շեշտում և, վոր բուրժուազիան նրանց գործադուլի պատճառով 5 միլիոն ռուբլուց ավելի մեաս և ունեցել և, իհարկե, վոչ թե առաջարկում և բանվորների աշխատավարձն ավելացնել, կամ աշխատանքի ժամերը կրճատել, այլ միմիան թուլլատրել, վոր բանվորներն արհմիություններ ունենան: Ինչիւ, վորովհետև, ասում և Խատիսովը, ոմիան այն ժամանակ ամեն մեկը մեզանից կդադարի զգալ իրեն հրաբուխի վրա ապրողի դերում...»:

Այսուեղից պարզ և, վոր Անդրկովկասի խոշոր կապիտալիստներն արդեն սարսափում եին պրոլետա-

ըիտից, արդեն իրենց զգում ելին «հրաբուխի վրա ապրողի դերում...» և լեղապատառ կերպով մտածում ելին, վոր ալդ հրաբուխը, պրոլետարիատի հեղափոխությունը կժամանակի ու իրենց մեծ պատառը ականջներն ել չե թողնի:

Միմիայն Բագվում չեր դրությունն այսպես:

1902 թվին բանվորական խոշոր գործադուլ և տեղի ունենում և Բաթումում, վորտեղ «բանվորներից ձերբակալվում են 60 հոգի և 306 հոգի յել աքսորվում են վորպես «անբարեհույս» մարդիկ¹»:

1905 թվի վերջերին գործադուլ և տեղի ունենում նաև Անդրկովկասյան լերկաթուղում, վորին ակտիվ կերպով մասնակցում են և ներկալիս Հայաստանի գըծում աշխատող բանվորները՝ լենինականում, Սանահնում և այլն: «Անդրկովկասի 30.000-ի չափ լերկաթուղարքին բանվորները լենթարկվում են բռնությունների, բանտի և աքսորի: Դեկտեմբեր 23-24-ին՝ ձերբակալվում են գործադուլի դեկավարները.—

Թիֆլիսի բանտերում—224 հոգի,

Գանձակի » 44 »

Յերևանի » 47 »

Ալեքսանդրապոլի 35 »

իսկ ձերբակալված շարքային, գործադուլին ակտիվ մասնակցող բանվորների թիվը՝ 1041 հոգի: Այսուհետեւ մինչև հունվարի սկզբները Հայաստանում կրկին ձերբակալվում և տնղավորվում են՝

Յերևանի բանտում 221 հոգի,

Նահանգի բանտերում 288 հոգի:

¹ Ա. Կարինյան «Անդրկովկասը 1905 թվին». էջ 22.

Հեռացվում են լերկաթուղու աշխատանքներից, հետ չընդունվելու իրավունքով՝ 218 բանվոր, իսկ Անդըր-կովկասի սահմաններից աքսորվում են 300^o¹.

Նույնը նաև Ալլահվերդում։ Դործադուլ և տեղի ունենում 1903-1904 թվականներին, այնուհետև 1906 թվին։

Այս բոլոր փաստերը ցույց են տալիս, վոր Անդըր-կովկասի բանվորները գնալով ուժեղանում, գնալով կազմակերպվում ելին և ցարական իշխանությունը՝ պաշտպաննելով կապիտալիստներին՝ բանվորներին լենթարկում եր հաշածանքի, ու բանտերը լցնում եր բանվորներով։

Բայց այս բանի միջոցներով գործը գլուխ չեր գա, զրա համար ել, թե՛ կապիտալիստները և թե՛ ցարական իշխանությունը՝ բանվորներին ճնշելու ավելի խորամանկ միջոց ելին մտածում։

ԱԶԳԱՅԻՆ ԽՏՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱԶԳԱՅՆԱԿԱՆ ԿՐԻՎՆԵՐԸ

Այդ խորամանկ միջոցներից ամենադլխավորն այն եր, վոր ամեն մի ազգության կապիտալիստ իր գործարանում աշխատում եր հավաքել իր ազգին պատկանող բանվորներին կամ աշխատում եր իր գործարանը հակադրել մյուսի գործարանին։ Այսպես, որինակ՝ Բազմի հայ գործարանատերն ու նավթահորերի տերը, ոգտվելով այն հանգամանքից, վոր հայ բանվորը դեռ գյուղից նոր յեկած մարդ եր, դեռ գործի ելությունը լավ չեր հասկանում, հայ բանվորներին գրգռում եր թուրք բանվորների դեմ, ասելով, վոր նրանք հարամ

¹ Մելիք-Յոլչյան «1903-1907», էջ. 92.

մահմեղականներ են, իսկ իրենք իրենց ձևացնում ելին
ռբարերարները, վորոնք հայոց ազգի մասին են մտա-
ծում: Նույնն ելին անում նաև թուրք կապիտալիստ-
ները:

Շատ հետաքրքիր ե, որինակ, Ալլահվերդու աղնձա-
հանքերի 1903 թվի գործադուլը: Գործադուլ հայուա-
րաբելուն պես, պղնձահանքերի գիրեկտորն իսկույն
մի ազդեցիկ պարսկի՝ Ախունդովի միջոցով կարողա-
նում ե պարսիկ բանվորներին համոզել, վոր նրանք
գործադուլին չմասնակցեն: Խոստանում ե տվելացնել
նրանց աշխատավարձը, լավացնել նրանց աշխատան-
քի պայմանները: Յեվ քանի վոր պարսիկ բանվորնե-
րը գործադուլից հրաժարվում են՝ գործադուլն անհա-
ջող ե անցնում:

Ահա այս նույն ձեռնով ել, զանազան ազգություն-
ների բանվորներին իրար զեմ կրվեցնելու խորամանկ
միջոցով ել, կապիտալիստներն ու ցարական իշխանու-
թյունն աշխատում են բանվորական հեղտփոխության
առաջն առնել:

ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԶԱՐԴԱՑՈՒՄԸ 1905 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Անդրկովկասի ամենաուժեղ զյուղացիական ապստամ-
բություններն այդ ժամանակ տեղի լին ունեցել Վրաս-
տանում — Քութալիսի և Բաթումի նահանգներում (գըլ-
իտավորապես Գուրիայում), մասամբ նաև Թիֆլիսի նա-
հանգում:

«1905 թվի փետրվարի 19-ին¹ Բաթումի նահանգում
հայտարարվում ե զինվարական դրույթն: Պաշտոնա-

¹ Ա. Կարինյան, «Անդրկովկասը 1905 թվին», — էջ 25:

կան առանձին հայտաբարութիւն մեջ կառավարութիւնը հայտնում եր, վոր «վերջին լերեք տարվա ընթացքում Գուրիայում ստեղծվել եր նախ գլուղդացիների հողալին՝ շարժում ընդդեմ կալվածատերերի, իսկ հետո՝ բացահայտ հակապետական ապահամբուրյուն, վորի ընթացքում կատարվում ելին քաղաքական ապրատամբութիւններ և պետական ու կրոնական հիմնարկութիւնների գեն ուղղված մահափորձեր»:

Ցեվ լերը կառավարութիւնը չի հաջողվում զինված ուժերով ճնշել ապստամբներին, կառավարութիւն մի բարձր պաշտոնյալի, Սուլթան Կրիմ Գիրեյին, ուղարկում են «տեղական բնակչութիւն կարիքներին ծանոթանալու համար»:

Պարզվում է, վոր գլուղդացիները պահանջում են.

«Հոգ և ազատութիւնն»¹: «Մենք չենք կարողանում ոչովիք մեր սեփական հոգերից, արոտառեղիներից և ջրից»... «Անհրաժեշտ ե թեթևացնել կապիտալի ոլարմանները և գլուղդացիների պարատականութիւնները կալվածատերերի նկատմամբ, հարկավոր ե թեթևացնել բազմաթիվ տուրքերի ծանրութիւնը»... «Վոչընչացնել անուղղակի հարկերը»... «Հոգեորականների և վոստիկանների հոգերը հանձնել ժողովրդին»... «Աղատել չունեորներին»:

«Ելզ բոլորի իրականացման համար պետք են ժողովների, խոսքի, մամուլի և դործադույների ազատություն» և այլն:

«...Սակայն—նկատի առնելով այս, վոր պետություն որենքները շոշափում են վողջ հասարակութիւն շահերը, միանգամայն բնական ե, վոր որենքներն ապա-

¹ Խույն տեղում

գալում այետք և մշակվեն ժողովրդական ներկայացուցիչների մասնակցությամբ։ Դրա համար ել անհրաժեշտ ե «ընդհանուր ինքնավարություն»¹։

Այս են ասում ապստամբված գյուղացիները և այս տեսակ պահանջներ են դնում։

Միանգամայն պարզ ե, վոր այս լոգունգներն ուղղված ելին շահագործողների և նրանց էշխանության դեմ։ Այս պահանջներով կորիվ եր հայտարարվում Անդրկովկասի խաներին, բեկերին, կալվածատերերին ու կապիտալիստներին։

Ճիշտ այս նույն նպատակով ապստամբություններ կազմակերպվել են նաև Վրաստանի ուրիշ գավառներում—Գորիում և այլն։ «1905 թվի փետրվար 27—28-ին Շորապան գյուղում գյուղացիներն ալրում և քարուքանդ են անում «գյուղական վարչության» շենքը։ Շորապան գավառի Վարձիլ գյուղի գյուղացիները բըռնապրավում են վանքապատկան 500 գետատին հողը և վանահորն ստիպում են հեռանալ Թիֆլիս»²։

ՀԱՅԱԲՆԱԿ ՑԵՎ ԹՈՒՐՔԱԲՆԱԿ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԱՌԱՋՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆԸ

Արդյոք միենույն դրությունը չե՞ր նաև հայկական և թուրքական բնակչություն ունեցող գավառներում, ուրիշ խոսքով ասած՝ ներկայիս Հայաստանում ու Աղդրբեջանում։ Ճիշտ միենույն դրությունն եր, թայց և այնպես այդ գավառներում գյուղացիական ապստամբություններն այնքան ել չծավալվեցին և ուրիշ կեր-

¹ Բոլոր այս ցիտատները նույն դասավորությամբ վերցը ենք Էջ 27 Ա. Կարբինյանի 1905 թ. գրքույթից։

² Նույն տեղում. Էջ 30։

սպարանք ստացան: Ի՞նչն եթ սրա պատճառը. պատճառներ շատ կալին, որինակ, ընկ. Ա. Կարինյանն արձանագրում ե տին փաստը, վոր Նախիջևանի և ուրիշ միքանի շրջաններում կալվածատեր ելին հանդիսանում թուրքերը և դրա համար ել թուրք բեկի կողմից շահագործվող հայ գլուղացին այդ բեկին ատում ե վոչ միայն իրը դասակարգացին հակառակորդ, այլև իրը թշնամի ցեղի ներկայացուցչի:

Իսկ Ադրբեյջանում, քանի վոր հայ չարչին, հայ վաճառականն ու հայ կապիտալիստն ելին շահագործում թուրք աշխատավորներին, միևնույն կերպ թուրք աշխատավորներն ել այդ բուրժուաների վրա նայում ելին վոչ միայն վորպես կապիտալիստների, այլև վորպես հայերի, հայ կապիտալիստների վրա:

Հայ և թուրք բնակչության միջև կային և յայլաների ու հողային ուրիշ վեճեր, այնպես վոր հեշտությամբ կարելի լեր հայերին և թուրքերին գրգռել իրար դեմ և հեշտությամբ կարելի լեր նրանց համոզել, վոր նրանց ընդհանուր թշնամին վոչ թե բոլոր ազգի կապիտալիստներն ու կալվածատերերն են, այլ հայի թշնամին թուրքն ե, իսկ թուրքի թշնամին՝ հայը.

Այսպիսով դասակարգացին կոփվը կարելի լեր փոխել ազգային կովի և շահագործվող հայ և թուրք գլուղացիները վոչ բեկերի դեմ կկովեցին, վոչ կապիտալիստների, վոչ ել ցարական իշխանության, այլ կկըռվեցին իրարու դեմ, վորովհետև ազգայնական կուսակցություններն ու ցարական իշխանությունն աշխատում ելին նրանց աչքերը փակել և նրանց ուշադրությունը հեռացնել իսկական թշնամուց, շահագործվող դասակարգից:

ՏԱՐԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՑԵՎ ԲԱՑԼՃԵՎԻԿՆԵՐԻ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Հայտնի յե, վոր 1900-ական թվականների սկզբին, արդեն ամբողջ Ռուսաստանում զարգանում ու պատրաստվում եր բանվորների հեղափոխական շարժումը: Ցեվ ահա՝ սարսափահար ցարական իշխանությունը, հենց վերևն ասած ծրագրով, աշխատում ե կազմակերպել հայ-թուրքական կոտորածներ, վորպեսզի Անդըր-կովկասի բանվորության ուժերը բաժան-բաժան անի:

Ցար Նիկոլայ Ռ-րի փոխանորդ Վարանցով՝ Դաշկովը և նրա նախորդ Գալիցինը, 1903—4 և 1905—7 թվականներին գրգռում են հայ և թուրք զուղերի բնակչությանը, ինչպես նաև քաղաքների հայ և թուրք անկազմակերպ ու անգիտակից քաղաքացիներին:

Ցեվ 1905 թվականից սկսած՝ տեղի լին ունենում հայ-թուրքական կոտորածներ: Բագվում, թիֆլիսում, Ցերեանում, Նախիջևանում, Գանձակում, Շուշում և ուրիշ շատ տեղերում թուրքերը հարձակվում են հայերի վրա, հայերը՝ թուրքերի: Ամբողջ գյուղեր որի լին քաշվում, քաղաքների ամբողջ թաղեր թալանվում ու հրդեհվում են և այդ ամբողջ կոտորածների ժամանակ ցարական զորքերը վոչ միայն կոիվը չեն դադարեցնում, այլ ընդհակառակը, Վարանցով-Դաշկովը ու նրա ներկայացուցիչներն ամեն տեղ զենք են բաժանում, ուժեղ կողմին գրգռում են թուրքի դեմ, վոր ազգամիջան կոիմսերը լերկար տնեն:

Վոր այս հայ-թուրքական կոտորածները դիտավոր-իալ կերպով ելին սարգված, այդ բանը մենք տեսնում ենք հետեւալ փաստից. «Կովկասի վոստիկանության

դեկտեմբեր Շիրինկինը, այդ կուիզներն առաջացնողներից մեկը, զեկուցում եր ներքին գործերի պարոն մինիստրին, թե՝ «հեղափոխական շարժումների ընթացքը, ինչպես փոխարքակության սահմաններում, նմանապես և Թիֆլիսում», չի կարելի համարել ուժեղացած, այլ ընդհակառակը, ալժմ նա նկատելիորեն նվազել է հայրուրքական բնդիաբումների ազդեցության տակ, վորը ուսուդրությունն զբաղեցրեց ուրիշ կողմ¹։

Ի՞նչ եր անում այդ ժամանակ ՌՍԴԲԿ կովկասյան միությունը, ի՞նչպես եր վերաբերվում դեպի ցարական այդ քաղաքականությունը։ ՌՍԴԿ կուսակցությունը քարոզում եր, վոր բանվորներն ու գլուղացիները ցարի կողմից կազմակերպվող այդ ազգային կոտորածներին չմասնակցեն։ Բագվի կոտորածներից առաջ մեր կուսակցությունը պատրաստվում ե թուրքիկներ տպելու, վոր բանվորները կովին չմասնակցեն և նրան հաջողվում ե թուրքերեն լեզվով ահապին թուրքիկներ տարածել։

Ցարական բանակի մեջ մեր կուսակցությունն ագիտացիա չե մզում, վոր զինվորները զինված ապստամբություն բարձրացնեն ցարի իշխանության դեմ։ Բոլոր տեղերում բանվորներին քարոզում ե, վոր ազգային կովիչների փոխարեն անհրաժեշտ է կոիվ ընդդեմ կառլիխտալիստների, կալվածատերերի և նրանց պաշտպան՝ ցարի կառավարության։

Այսպես որինակ՝ 1905 թվի մարտի 19-ին «հայ գլուղացիներին» ուղղած իր կոչի մեջ ՌՍԴԲԿ կովկ. միությունը միանգամայն ճիշտ կերպով ցույց է տալիս այն ճանապարհը, վորով պետք ե գնացին Անդրկովկասի բոլոր աշխատավորները։ Կոչի մեջ ասված ե,

¹ Մելիք-Յովյան, «1903—1907 թ.,» եջ 56—57.

«Յերբ վոր քաղաքի. և գլուղի աշխատավորները, մեկը մյուսին ձեռք տված լեզրալրությամբ, կհետևն և ընդհանուր ուժերով գրոհ կտան դեպի թագավորի գահը, իմացեք, հայ գլուղացիք, վոր այն ժամանակ նրանց վոչ մի բան չի կարող արգելք լինել»:

Վ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱԿԱՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԵՐԸ

Իսկ ինչպվ եր զբաղված այդ ժամանակ Դաշնակցությունը. Գիտենք, վոր հայդուկացին շարժումն ամենասոսկալի ջարդը կրեց տաճկական-սուլթանական իշխանության կողմից և հայդուկները վոչ մի ոգուտ չտվին. միմիայն նրանց ապստամբության հետևանքով կոտորածի և ջարդերի լենթարկվեցին ավելի շատ տաճկահայ աշխատավորներ, քան մինչև այդ ժամանակ:

Իմպերիալիստներն, իհարկե, իրենց հաշիվները մաքրեցին տաճկական կառավարության հետ և մի կողմ քաշվեցին:

Անդրկովկասի բուրժուազիան տեսավ, վոր Դաշնակցության սկսած «Հայաստան փրկելն» իրենց վոչ մի ոգուտ չբերեց և բուրժուազիան իր քհակն արդեն փակում եր դաշնակների համար, յեթե Դաշնակցությունն իբրև հայ բուրժուազիայի հավատարիմ կուսակցություն, աշխատանքի մի այլ ձե, ուրիշ տակտիկա չգտներ, բուրժուազիայի շահերը պաշտպանելու համար:

Հայդուկացին շարժումից վերադարձած կռվողների ձրիակեր խմբերն անգործ թափառում ելին կովկասում և կերտակրթելու կարիք ելին զգում:

Անդրկովկասի աշխատավորները հուսախարվեցին «ապատ Տաճկահայաստանի» հարցում:

Յեվ՝ վոր ամենազլիսավորն եր, Անդրկովկասի բանվորությունը և շահագործվող գլուղացիությունը, վորոնց թվում նտե հայ բանվորն ու գլուղացին, ինչպես տեսանք, այնս դժվար եր խարվում Տաճկահայաստանի կամ աղդախական ուրիշ լեռազներով և դաստկարդալին կովի ճանապարհն եր բռնելու Շատացել ելին դործադուխները, կազմակերպվում և մոտենում եր 1905 թվի հեղափոխությունը:

Այս պարմաններում ինչ աներ Դաշնակցությունը:

Դաշնակցությանը մնում եր հեռանալ պատմության ըեմից և հրաժարվել ամեն մի գործունելությունից:

Ինչպես Լեռն և պատմում, ոգեռ 1898 թվի սկզբներին, Դաշնակցության ղեկավարներից մեկը, Սիմեոն Զավարյանը Թիֆլիսում ժողով եր գումարել և այդ ժողովում ղեկուցում ե այն մասին, թե Դաշնակցության ծրագրին ու գործունելուքունն իրենց հետեւ բերել են արյաւննեղուրյուններ յեվ խորտակում, հոգնեցրել ու խրցնեցրել են ժողովրդական խավիերը յեվ ամենքն այժմ յերես են դարձնում նրանից: Հարկավոր և, ուրեմն, վերակազմել կուսակցությունը նոր հիմների վրա¹: Այսինքն բուրժուազիայի շահերը այլ կերպ պատճանելու համար:

Յեվ իրոք, 1900-ական թվականներից Դաշնակցությունն սկսեց զբաղվել վոչ միայն Տաճկահայաստանի, այլ և Ռուսահայաստանի հարցերով: Յեվ բացի դրանից, 1905 թվին, ինչպես Լեռն և ասում իր «Անցյալից» գրքի մեջ, Դաշնակցությունն իր ամբողջ կազմով «մի դիշերքո մեջ դարձավ... սոցիալիստական կուսակցություն»: Կախարդական գավազանի մի հարվածով

¹ Լեռ, «Անցյալից», էջ. 125:

ամբողջ ալդ ըազմտտալը զանգվածը, բուրժուական ինտելիգենցիան, մանրավաճառները, խմբապետները, հայդուկ-ֆիդայները, խուժանավարները և այլն, և ալլն - միասին թափվեցին Մարքսի ավաղանի մեջ:

Բայց ալժմ մենք կտեսնենք, թե ինչ սոցիալիստներ ելին դրանք և ինչը համար հանկարծ սոցիալիստ դարձան:

Դաշնակցությունը հինգ թվին մինչև անգամ սկսեց մտածել այն մասին, վոր բանվորներին իր շարքերում պահելու սոցիալիստական ծրագիրը ընդունի և 1907 թ. նա իրեն իրոք սոցիալիստական հայտարարեց: Դրանով նա ծրագրում եր բուրժուազիայի ցանկություններն ուրիշ ճանապարհով կատարել և ալրոլիտարիատի հեղափոխությունը խանգարել:

Յեվ իսկապես, Դաշնակցությունն ամենայնուանդուն կերպով մասնակցեց կապիտալիստների ու ցարական իշխանության կողմից կազմակերպված հակ-թուրքական կոտորածներին. իսկ մյուս կողմից՝ Դաշնակցությունը, իր վրա վերցնելով ցարական ժանդարմի զերը, շատ տեղերում հալածեց հայ բանվորների հեղափոխական շարժումը և իր քաղաքականությամբ խանգարեց հեղափոխությունը:

Այժմ աեսնենք, թե ինչը և ինչպիս արեց այդ:

ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ

Վորպեսզի իմանանք, թե Դաշնակցությունն ինչը համար և ինչ նպատակով սկսեց խռովել նաև ոռուահայերի մասին, անհրաժեշտ և, վոր ալդ մասին խոսք

տանք ալդ կուսակցութիւն կենտրոնական որգան «Դրոշակա թերթին» Դրոշակը գրում եր. «Այն պալքարը, վոր սկսում և հայ ժողովուրդը կովկասում, նոր բան չեւ Դա բաղադրիչ և անբաժան մասն և մեր վերածնութիւն պալքարի, վորը մղում են մինչև որս հայերը Դաշնակցութիւն ղեկավարութիւմը։ Հայ ժողովուրդը կոփիվ և մղում Արաքսի տէս ու այն կողմը, վորպիսզի վերացնի բռնապետների ձեռքով քաշած և ոռւսահայերին ու թուրքահայերին իրարից բաժանող սահմանը և ստեղծի մի ընդհանուր հայրենիք»¹։

«Այսպիսով, վոչ թե ընդհանուր կոփիվ, հարեան ոռւս, վրացի և այլ ժողովուրդների հետ՝ ընդդեմ միապետական կառավարութիւն, այլ ազգային պալքար տաճկահայերի հետ միասին՝ հանուն «ընդհանուր հայրենիքի», — ահա տին նպատակները, վոր Դաշնակցութիւն կուսակցութիւնն ուղում եր բեռնել կովկասահայերի ուսերին։ Այդ նպատակով ել նա ձգտում եր բնակչութիւնն մեջ բռնկեցնել ազգայնական կրքեր և հայերի մեջ ատելութիւնն սկըմանել զեպի այլ ազգերը», դեպի թուրքերը, ոռւսները և այլն։

Իր այս ընդհանուր հայրենիքի գաղափարն իրականացնելու և հայրենիքը փրկելու համար՝ Դաշնակցութիւնը ծրագրում եր «Արքել-մաքրել» թուրքերին. այսինքն՝ «Թուսահայաստանի և Տաճկահայաստանի հողի վրա կոտորել, վոչնչացնել թուրքերին, վոր թուրքերը փոքր տոկոս կազմեն այդ հողամասի վրա և հայերն իրենց ազգային «ընդհանուր հայրենիքն» ստեղծելու հնարավորութիւնն ունենան։

Լեռն զրում ե, վոր «1905 թվին Շուշում սկսված

¹ Ստ. Շահումյան, «Յերկերի ժողովածու, I. հջ 62:

կորիթսերի (հայ-թուրքական կոտորածների) պլիավոր ղեկավարներից մեկը, դաշնակցական Առողջաբեկ-էանը, Թիֆլիսի դաշնակցական կոմիտեի նիստում պարծենում եր, թե իրենք Դարաբաղում զբաղված են «հայաստանցիներ» ստեղծելով¹: Այսինքն՝ դաշնակցականներն աշխատում ելին թուրք բնակչությունը կոտորել, վոր նրանց տեղը մնան միմիայն հայեր, «հայաստանցիներ» և «Հայաստան»:

Դաշնակցության այս «սրբելու-մաքրելու» քաղաքականությանը միանգամայն հարմար ելին զայիս ցարական իշխանության և Անդրկովկասի կապիտալիստների կողմից ծրագրվող հայ-թուրքական կոտորածները: Դրա համար ել, հենց վոր Գալիցինն ու Վարանցով-Դաշկովը ցանկտցան հայ-թուրքական կոտորածներ առաջացնել՝ Կովկասի բանվորական հեղափոխությունը խանգարելու համար, մենք տեսնում ենք, վոր Դաշնակցությունն իսկույն իր հայութեալին խմբերը մելքան բերեց, իսկույն միացավ այդ հակա: հեղափոխական կովկին և իր կատաղի խմբերով ավելի սաստկացրեց այդ կոտորածները:

Հայ-թուրքական կոտորածներին զոհ գնացին ահագին թվով աշխատավորներ թե հայերից և թե թուրքերից: Քանդվեցին ու ավելվեցին բազմաթիվ գլուղեր, կործանվեցին ու ավելվեցին քաղաքների մի քանի թաղեր. բավական և հիշել, վոր միմիայն Շուշի քաղաքում ալրվեցին ու քանդվեցին 400—500 տներ:

Պարզ ե, վոր այդպիսի կոիթսերը գլուղացիներին զրկեցին խաղաղ աշխատանքներից: Թե հայ և թե թուրք չքավոր գլուղացիների անտեսությունները մի-

¹ Ահա, «Անցյալից», եջ 157:

անգամայն քալքալվեցին։ Դործարաններն ու արհեստանոցները կանգ առան, առևտուրը խանգարվեց և մարդկային կանքը խաղալիք դարձավ. վոչ վոք առավոտն արթնանալիս չեր կարող հաստատ ասել, թե մինչև իրիկուն կենդանի կմնա։

Դաշնակցական փիդայներն ու խմբապետներն, ինարկե, իրենց զգում ելին վորպես ծուկը ջրի մեջ։ Դաշնակցությունն իր պաշտոնյաներին, զինվորներին, շրջիկներին ու խմբապետներին կերակրելու համար կազմակերպել եր ռինքնապաշտպանության ֆոնդեր, և այդ ինքնապաշտպանության ֆոնդերի անգան տակ դաշնակցական ջոջերը տերըորի, ծեծի, սպառնալիքի շնորհիվ թալանում ելին առանց այն ել արյունաքամ յեղող գյուղացիներին։ Ինչպես Մելիք-Յոլչյանն և զըռում իր աշխատության մեջ, այդ նպատակով՝ «մոտ 2 միլիոն ռուբլի դաշնակները գանձեցին առանց այն ել չքավորության մեջ խեղդվող Դարբադդ Զանգեզուրի հայ գյուղացիությունից»¹։

Միանգամայն հասկանալի է, վոր վոչ հայ, վոչ ել թուրք աշխատավորների ալս ծանը վիճակը դաշնակներին ամենեին ել չելին զբաղեցնում։ Դաշնակցությունը մատծում եր միմիայն «ընդհանուր հայրենիք» ստեղծելու մասին, և քանի վոր հայ բուրժուազիայի զրամական ոգնությունը կար, նա «ընդհանուր հայրենիք ստեղծելու մտքից, իհարկե, չեր հրաժարվի։ Յեվ իզուր չի, վոր «դաշնակցական զինվորներն ու կոմիտեները» հետեւմ ու բանտարկում ելին այն ամենին, ով հանգնում եր «խելքին զոռ տալ» և Դաշնակցության քեֆի ուղածին պես չմտածել Կալվածատիրու-

¹ Մելիք-Յոլչյան, 1903—1907, եջ 58.

թւան և բուրժուազիալիք դեմ տարվելիք կոիվը դավա-
ճանություն եր համարվում և «տպգի» ապագա սպա-
սելիքների տեսակետից՝ սխալ:

ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՌԺՈՒՄԸ 1905 ԹՎԻՆ

Իզուր չի, վոր նույն այդ Դաշնակցությունը միեւ-
նույն ժամանակ և ամենաակտիվ կերպով մասնակցում
և հայ-թուրքական կոտորածներին և իրեն սոցիալիստ
և հւչակում: Մենք տեսանք, վոր լեթե լետամնաց
բանվորների ու լետամնաց գյուղացիների շրջանում
նա ազգայնական կրքեր ու ազգայնական ատելու-
թյուն եր առաջացնում դեպի թուրք, ուսւ և ուրիշ
աշխատավորները բացարձակ և աշկարա ձևով, տպա-
նա նույնը չեր կարող անել նաև հեղափոխական տրա-
մադրություն ունեցող մասսաների մեջ:

Յեվ վորպեսզի այդ հեղափոխական մասսաներին
մոտենալու, վոնց վոր ասում են, նրանց տամարը
բռնելու հնար ունենա, մենք տեսնում ենք, վոր դաշ-
նակներն աշխատեցին մի գիշերվա մեջ Մարքսի ա-
վազանը մտնել և սոցիալիստ դառնալ: Հակառակ դեպ-
քում՝ բանվորները նրանց վզակոթին տալով դուրս
կանելին և նրանց խոսքին ականջ չելին դնի:

Դրա համար եր հենց Դաշնակցությունն իրեն կա-
շին փոխում ե, վոր իրեն հին նպատակները հիմի չել
«սոցիալիստի» շուրերով անցկացնի:

Յեվ իսկապես. մինչև վերջն ել Դաշնակցությունը
ենքան և սոցիալիստ դառնում, ինչքան նիկոլայ թա-
գավորը: Սոցիալիզմի անունից խոսող այդ բուրժուա-
զիալի սպասարկությունը 1905—1906 թվի բանվորական

արժման ժամանակ բուրժուազիալի փողերով հատուեկ մըքեր են կազմում և Բագվում ծեծի լեն լենթարկում անվորներին, ցրում են նրանց ժողովներն ու ցուլերը: Հալզուկներին ու խմբապետներին ալժմ ել ծառալեցնում են այդ նպատակի համար: Յեվ նրանց գըլստավոր նպատակն ե լինում առանձնացնել հայ բան-լորներին, հայ բանվորներին կտրել ոռուս, թուրք, լրացի, ինգուշ և այլ բանվորներից, վոր նրանք միացած կերպով չկարողանան պարզաբեր կապիտականների ու բուրժուազիալի դեմ:

Իսկ 1905 թվին Դաշնակցությունը Թիֆլիսում նույնականացնելու առանձնացած գուրս բերելով ահազին ցուցարարների, ցուց և կազմակերպում, ջլատելով հայ բանվորների ուժերը Թիֆլիսի այլ ազգի բանվորների ուժերից: Յեվ այդ անկազմակերպ ցուցի հետեանքն այն և լինում, ինչ հետեանքի վոր հասավ Գապոն քահանան 1905 թվի հունվարի 9-ին:

Յերբ Դաշնակցության այդ ցուցից հետո Վարանցով՝ Դաշկովը Թիֆլիսում և Բագվում կրկին հայերի կոտորած կազմակերպեց, այդ ժամանակ Դաշնակցությունը հանգես չեկավ իր խմբերով պաշտպանելու կազմակեների կողմից ջարդվող անողնական հայ աշխատավորներին և խայտառակ փախուստի դիմելով, փաստորեն պրովոկացիալի լենթարկեց ցարիզմի դեմ ուղղված հեղափոխական արտմադրությունները:

ՀԱՇՆԱԿՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԻԶՄԸ

Իսկ բանվորական կենտրոններից կտրված վայրերում այդ նույն «սոցիալիստական» կուսակցությունը

«սոցիալիզմի» ըոլորովին տարբեր ձևեր եր բանեցնում: Այնտեղ, վորտեղ բանվորական շարժումն այնքան ել ուժեղ չեր, Դաշնակցությունը հանդես եր գալիս ուղղակի ցարական վոստիկանի դերում: Որինակ, Հարսի, Ալեքսանդրապոլի գործադուլների ժամանակ ևս 1904 թվին Դաշնակցության խմբապետներն ամեն միջոցներով վոչ միայն կռվում ելին բանվորների գործադուլների դեմ, այլև գաղտնի ժողով անողներին ու գործադուլավորներին ձերբակալում, բանտարկում ելին: Այսպես են վարվել նրանք Հարսում, Ալեքսանդրապոլում, Յերևանում և այլն: Նրանք խանգարել են կոշկակարների, տնալին ծառայողների, հացթուխների, առհասարակ գործարանալին բանվորների, և Յերևանի բանկային ծառայողների և ուրիշ շատ գործադուլներ:

«Լենինյան ուղի» ժուրնալի 1928 թվի № 1-ում ընկը Ազատյանը բերում ե շատ հետաքրքիր մի որինակ: «1904 ապրիլի 30-ին Լենինականի զանազան բանվորներ և տնալին ծառայողներ (թվով 100—120 մարդ) գործադուլ են հայտարարում և հավաքվում են քաղաքից դուրս՝ ժողով անելու Բացի գործադուլ անողներից ժողովի լեն գնում նաև լերկաթուղարին բանվորներ և այլ քաղաքացիներ, մոտ 1000 հոգի:

Միտինգին մասնակցողներից մեկը պատմում է¹, վոր «առաջին խոսողն իր ճառը դեռ չվերջացրած, միտինգատեղին մոտեցան կառքով «դաշնակցության» տեղական կոմիտեյի անդամ Զալլաթը, Վանցոց Մելսակը, Ռվակը՝ դինվորներով:

— Զեզ մվ ե իրավունք տվել քաղաքը խտոնել իրար

¹ Մելիք-Ցոլյան, 1903—1907, եջ 123.

և մարդկանց քաղցած թողնել. — զոռում եր Զալյաթը
և ողի մեջ շարժում իր մտըակը: Սրան հետեւմ են
«զինվորները»՝ իրենց դագանակներով ու հրացաննե-
րի զոնդադներով... Ակսվում ե ծեծ, հայութանք, փա-
խեփախ. Ջարդվում ե 5—6 հոգու գլուխ, արնակալում
են շատերի դեմքերը...

Մի ուրիշ մասնակցող պատմում ե, վոր ալդ ամենն
իսկապես կատարվել ե, և դաշնակ «զինվորները» գո-
ռատիս են լեզել. «Այ քեզ գործադուլ», «Այ քեզ բո-
զոք», «Դուք վժնց եք համարձակվել ամեր տերերի դեմ»
բողոք կազմակերպել և «նրանց առանց չալի թողնել»,
«նրանց համար հաց չթխել»:

Իսկ Լենինականի պրիստավ Խերխելիձեն մըուս
որը գովում ե Դաշնակցությանը և Զալյաթին հայտ-
նում ե իր հրճվանքը՝ թե. — Молодец Ջալլատ, свои-
ми козаками разбил митинг (կեցցեն Զալյաթ, քո
կազմակերով միտինգը ցրեցիր):

Ահա թե ինչպես ելին աշխատավորների շահերի դեմ
կովում դաշնակները և նրանք ալդ բոլորն անելուց
հետո՝ դեռ լրբություն ունեցին հայտարարելու, վոր
իրենք բանվորների շահերն ել են պաշտպանում, վոր
իրը թե, իրենք ել սոցիալիստներ են:

Ա. Ա. Դ. Բ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՔԱՐԸ

Յեզ իզուր չե, վոր գեռ այն ժամանակ ես, մեր կու-
սակցությունը մերկացնում եր Դաշնակցության իսկա-
կան դեմքը և ցուց եր տալիս, վոր ալդ կուսակցու-
թյունը բուրժուազիալի շահերն ե պաշտպանում:
Այսպիս, Ռուսաստանի Սոցիալ Դեմոկրատական Բան-

վորական կուսակցության Ալեքսանդրապոլի կազմակերպությունը 1906 թվի մարտի 27-ին մի կոչ և անում ծառալողներին, վոր կազմակերպին դասակարգալին պալքար մզելու համար և ալդ կոչի մեջ ասված ե. «Բուրժուազիան զանազան տեղերում կուսակցություններ հիմնեց զանազան անվան տակ, վորի ամբողջ ելությունը մի լիր, այս և, պաշտպանել իրենց շահերը»։ Իմիջի ալլոց, ալստեղ ևս գոյություն ունի ալղակիսի մի բուրժուական կուսակցություն, ինչպիսին և Դաշնակցությունը։ Յեթե վերջինս իրեն նշանաբան և դնում ամբողջ ժողովրդի շահերի պաշտպանությունը, ալդ քողարկություն և միայն, վորովհուն ամեն մի վորեւ քաղաքական կուսակցություն կարող և պետք և պաշտպանի դասակարգի շահերը, բայց Դաշնակցությունն իրեն ամբողջ հայ ժողովրդի շահերի պաշտպանն և հրատարարում, վորի մեջ մտնում են և բուրժուազիան և պրոլետարիատը, վորոնց շահերը ծայրահեղ կերպով հակառակ են միմյանց»։

Ահա թե ինչպես պետք և պայքարեր և ինչ պետք և քարողեր բանվորների և աշխատավոր գլուղացիների պաշտպան կուսակցությունը. իսկ Դաշնակցությունը վոչ միայն ալղակես չեր քարոզում, այլև, ինչպես տեսանք, ցարական իշխանության հետ միասին ծիծում, բանտարկում և աղգի դավաճաններ եր անվանում պայպես ասողներին, իսկապես հեղափոխական Ռ. Ս. Դ. Բ. Կուսակցությանը, բայց իկներին։

ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ «ՊԱՅՔԱՐԸ» ՑԱՐԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ

Այս բոլորից հետո՝ գետ կան դաշնակցականներ, վորոնք պարծենում են, թե իրենք սոցիալիզմի կողմ-

նաւելից են լեղել Խարկի, ալժմ, լերը պրոլետարիատը
մեր լիբերում հաղթանակ և տարել և աշխատավորու-
թյան ամենալայն մասսաները համոզվել են, վոր Կո-
մունիստական կուսակցությունն և աշխատավորների
միակ պաշտպանը, ալժմ դաշնակներն աշխատում են
ձեւցնել, թե իրենք ել նույնն են արել ինչ վոր կո-
մունիստները։ Վոր իրենք ել բանվորների շահերն ու
չքավոր գլուղացիների շահերը պաշտպանել են և կըռ-
վիլ են բուրժուազիակի դեմ։ Վոր իրենք ել պայքարել
են ցարական իշխանության դեմ։

Նրանք ալդպիսով կրկին ուզում են մասսաներին
խարել, բայց նրանց գործունելությունն ել, մեր բե-
րած փաստերն ել արդեն ծանոթ են մասսաներին և
Դաշնակցությունը լերը ել չի կարող ապացուցել
թե ինքն աշխատավորների շահերն և պաշտպանել
անցյալում։

Բայց և այնպես դաշնակները պնդում են, վոր իրենք
ցարական իշխանության դեմ կովել են։ Այդ կոիվը,
պետք և ասենք, վոր իսկապես լեղել եւ բայց դաշնակ-
ները կովել են վոչ թե ցարական իշխանությունը
տապակելու համար, ալլ միմիայն այն դեպքերում, չերը
ցարտկան իշխանությունն այսպես թե տինակիս վորոշ
արգելքներ և դրել Դաշնակցության նպատակների ա-
ռաջ։ Այսպես, որինակ՝ Դաշնակցությունն ահագին հա-
րաբերուց և բարձրացրել ցարական իշխանության դեմ
այն ժամանակ, չերը ցարական իշխանությունը վաճա-
քերից խլել եր նրանց կալվածքները։ Դաշնակցության
կոիմն այն և լեղել, վոր նաև լեկեղեցական հալրերի և
վանքերի համար հետ և պահանջել վանքապատկան
հողերը։ Բայց չե վոր դրանով Դաշնակցությունը
պաշտպանել և հոգեոր դասի, վարդապետների ու կղե-
րականների շահերը, ինչպես այդ նկատում ե ընկ Հ.

Ազատյանը¹: «Յեկեղեցական գուլքերը վերադարձրու, և մենք նորից քո խոնարհ ծառաներն հնացա - ահա, թե ինչ կարող ելին ասել դաշնակցական հոգևորականները, կապիտալիստներն ու կտլվածատերերը, — նկատում ե ընկ. Ազատյանը»:

Ահա ալդպիսի ժամանակավոր և զուտ տնտեսական բնուկթ կըող մի դժգոհություն եր, վոր արտահայտում եր Դաշնակցությունը և սա իշխանություն տապալելու մտադրություն չուներ: Մրա մեջ վոչ մի հեղափոխական նպատակ չկար:

Բացի ալդ՝ մի քանի գեղքերում, մանավանդ Գալիցինի տիրապետության ժամանակ, յերբ ցարական բռնապետության ճնշման տակ գյուղական և քաղաքակին բնակիչները և մասնավորապես հայերը, յենթարկվում ելին սոսկալի շահագործման ու հալածանքի, ալդ գեղքերում, Դաշնակցությունը, ունենալով զինված ուժ, իրեն ազգի ինքնապաշտպանությունը կազմակերպող եր համարում և փոխանակ դասակարգակին պայքար կազմակերպելու, զանազան տերրորներ, մահափորձեր եր կատարում: Ալդ հիմար յեղանակով նա վոչ միայն չեր փրկում տշխատավորներին, տլլ և ավելի յեր ծանրացնում նրանց վիճակը և ավելի յեր կատաղեցնում ցարական բռնապետներին: Իսկ յերբ ալդ նույն ցարիզմի դեմ պայքարելու ժամանակը վրա յեր հասնում, դաշնակցականներն իրենց հռչակած «7000 զինվորները» հրապարակից հեռացնում ելին և թողնում ելին, վոր ցարական իշխանությունն առանց արգելքի կոտորի աշխատավոր մասսաներին:

Սա յի յեղել Դաշնակցության «հեղափոխական պայքարը» ցարիզմի դեմ, սա յի յեղել «աշխատավորների շահերի պաշտպանությունը» Դաշնակցության կողմից:

¹ «Եւնինյան ուղի», № 1-2, 1328 թ.

III. ԴԱՅՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՌԵԱԿՑԻԱԾԻ ԾՐՁԱՆՈՒՄ

ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ 1905 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՑ ՀԵՏՈ

Թե հարգուկալին շարժման և թե հայ-թուրքական կոտորածների ժամանակ Դաշնակցությունը պատրաստել եր Միհրանների, Ռոստոմների, Յեփրեմների և ալլ խմբապետների խմբեր, վորոնց արհեստը կռիվն եր զարձել Նըրանք առանց կռվի ու կոտորածի, տոանց «հեղափոխության» ապրել չելին կարող: Յեզ ահա 1905-06 թվականներից հետո, յերբ ցարական ռեակցիան ուժեղանում ե, մենք տեսնում ենք՝ այդ խմբերի մի մասն զրադկում ե զրամաշորթությամբ, ուրիշները ցրվում են՝ մի մասը Տաճկաստան, մյուսները Պարսկաստան և Պարսկաստանում ես շարունակում են նույն պատմությունը, ինչ վոր Տաճկաստանում ու Ռուսաստանում:

Այդ նույն ժամանակ Տաճկաստանում արդեն սահմանադրություն ե տեղի ունենում և դաշնակները զեկավար դիրքեր են զրավում Տաճկաստանի սահմանադրական իշխանության մեջ: Հաստատվելով գլխավորապես կոստանդնուպոլատում և Երզրումում, նրանք Ռուսաստանի դեմ կռվելու փորձեր են անում, վորովիետե ալլ կերպ անհնարին եր զառնում նրանց բարեկամությունը թուրքական բուրժուազիալի հետ: Այս զեպքում արդեն Ռուսաստանի դեմ մղվելիք կռիվն, ի հարկե, ձեռնտու յեր յերիտասարդ թուր-

քիալին, վորի դեմ իրենց տեսակցության ժամանակ Ռուսաստանի ցար Նիկոլայ Ա-ը և անգլիական Գեղարդ թագավորը պայմանագիր ելին կնքել:

Տաճկաստանն ու Ռուսաստանը այդ ժամանակ իրար դեմ պատերազմի ելին պատրաստվում և Ռուսաստանի դեմ կռվելու ձգտումը, վոր հանդես ելին ըերում դաշնակները, աջակցություն եր գտնում նաև թուրքական սահմանադրական իշխանության կողմից:

Այդ միևնույն ժամանակն ե, վոր ցարական իշխանությունն ել, մի կողմից իրեն ապահովելու նպատակով, սկսում ե ձերբակալել դաշնակներին, իսկ մյուս կողմից միջոցներ և մտածում դաշնակների զինված ուժերը Տաճկաստանի դեմ սկսվելիք պատերազմում ոգտագործելու համար:

1909 թվին այդ ձերբակալված դաշնակների զատավարության ժամանակ ել, դաշնակցական հայտնի և անհայտ ղեկավարները մի անգամ ևս ապացուցում են, վոր իրենք հեղափոխական վորուց միանգամայն զուրկ են և հրաժարվում են Դաշնակցությունից և ցար Նիկոլայից վողորմություն խնդրելով, բանտերից դուրս են գտլիս և սկսում են գրել ու կովել Պոլսի դաշնակցականների ձգտումների գեմ: Այսպիսով ցարական իշխանությունը հասնում է իր առաջին նպատակին, դաշնակներին դարձնում և իր խոնարհ ծառան և խլում տաճկական բուրժուազիայի ձեռքից:

Իսկ յերկրորդ նպատակին ցարական իշխանությունը հասնում է 1914 թվի իմպերիալիստական պատերազմի ժամանակ, յերբ Դաշնակցության միջոցով կամավորական խմբեր և կազմում՝ Տաճկաստանի դեմ կռվելու համար:

IV. ԴԱՅՆԱԿՅՈՒԹՅՈՒՆՆ ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՊԱՏԵՐԱՁՄԻ ԵՐಡԱՆՈՒՄ

ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏՆԵՐԻ ՀԱՅԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Յեթե Դաշնակցությունը պաշտպանելիս լիներ աշխատավորների շահերը, նա վաղուց արդեն խրատված կլիներ, վոր լեզրոպական խմբերի ալիստներն, ինչպես նաև ցարական Ռուսաստանը, հայ աշխատավորներին ոգաագործում ելին իրենց նպատակների համար։ Ալդ մասին, ինչպես տեսանք, դեռ շատ վաղուց զրել եր Ռաֆֆին, ալդ բանն ապացուցվում եր նաև հայ թուրքական կոտորածներով և ուրիշ հազար ու մի փաստերով։

Բայց Անդրկովկասի ու գաղութների հայ բուրժուազիան թնջու պետք և մտածեր ալդ մասին։ Նրան հարկավոր եր Տաճկաստանը։ Նա մտածում եր մի կողմից Տաճկաստանի գեմ ապստամբություններ կազմակերպելու և մյուս կողմից Յեփրոպաէի ողնությունը խնդրելու մասին։ Յեփ յեթե ալդ քաղաքականությունը մինչև 12 – 13 թվականները մի քիչ դադարել եր, ապա 12 թվից սկսած՝ հայկական հարցը և Տաճկահայաստանն աղատելու խնդիրը նորից առաջ պետք և գտը, վորովհետեւ ալդ բանն անհրաժեշտ եր խմբերի ալիստներին։

Բալկանյան պատերազմը մի նոր առիթ եր միջազգային բուրժուազիալի ձեռքում՝ հայկական հարցը կրկին հրապարակ հանելու և այն հոգուտ իր նպատակների շահագործելու համար:

Այդ ժամանակ արդեն սկսվում եր պատրաստվել իմպերիալիստական մեծ պատերազմը։ Այդ պատերազմին մի կողմից մասնակցելու ելին գլխավորապես Անգլիան, Ֆրանսիան և Ռուսաստանը, իսկ մյուս կողմից՝ Ավստրիան, Գերմանիան, Տաճկաստանը։

Այսպիսով՝ Ռուսաստանը պետք է պատերազմի բռնվիր Տաճկաստանի հետ և պարզ է, վոր կոխվը պետք է տեղի ունենար Անդրկովկասում։ Իսկ այդ կովկասովացքում թե Տաճկաստանի և թե Ռուսաստանի համար մեծ նշանակություն ուներ հայերի դիրքը։ Դրա համար ել Տաճկաստանը աշխատում եր այնպիսի պարմաններ ստեղծել, վոր հայերը չեղոք մնան, չմասնակցեն պատերազմին, իսկ Ռուսաստանն, Անգլիան ու Ֆրանսիան ուղում ելին հայերին ոգտագործել Տաճկաստանի դեմ։ Այդ նպատակը շատ ծրագրված առաջ եր տանում կովկասի փոխարքան՝ Վարանցով-Դաշկովը։ Յարական իշխանությունը ծրագրում եր, վոր պատերազմի ժամանակ հայերին կողտագործի յերկու ձեռվ. նախ՝ Տաճկաստանում դտնվող հայերին կապստամբեցնի Տաճկաստանի դեմ և կթուլացնի տաճիկների ուժը և յերկրորդ՝ Անդրկովկասի հայերին կողտագործի հետախուզական (բազվեղկալի) և ուրիշ նպատակներով, վորպես պատերազմի տեղերին լավ ծանոթ մարդկանց և վերջապես Անդրկովկասի հայերը ցարական կառավարության համար կդառնան կովողներ՝ ինչպես ասում են՝ թնդանոթի միաւ։

Տաճկաստանի հալերին տաճիկների դեմ ովտակործելու միենույն նալատակն ունելին նաև Թրանսխան և Անգլիան, վորոնք նույնպես, Ռուսաստանի հետ միասին, պատերազմի ելին բռնվելու Տաճկաստանի դեմ:

Ահա ալստեղից ել հասկանալի յե դառնում, թե ինչու՝ Ռուսաստանը, Անգլիան և Թրանսխան պատերազմից առաջ նորից սկսում են խոսել Տաճկահայաստանի հալերին ազատելու, նրանց ինքնավարություն տալու և նման հարցերի մասին:

Բոլոր այդ պետություններում առաջ ելին գալիս «հայասերների», կամ հալերին «սիրողների» ընկերություններ, վորոնք գովում ելին հայ ժողովրդին, գրում ելին, վոր նրանք ազատություն պետք եստանան, պետք և ազատվեն տաճիկների լծից և այլն: Մի խոսքով, թե Ռուսաստանը, թե Անգլիան, թե Թրանսխան նորից իրենց ցուց ելին տալիս վորպես «հայոց գատի պաշտպաններ» և Տաճկահայաստանի փրկության կողմնակիցներ:

ՏԱՃԿԱՍՏԱՆԻ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՐՑԸ

Դրան միանգամայն հակառակ քաղաքականություն եր վարում Տաճկաստանը: Տաճկական իշխանությունն ել իր հերթին ցանկանում եր հայերին գրավել իր կողմը և այդ նպատակով, «պատերազմ» հայուրարելուց մի քանի որ առաջ, Դաշնակյության ընդհանուր ժողովը եր Երզրումում: Յերիտասարդ թուրքերի կուռակցության կողմից հատուկ ներկայացուցիչ և գալիս և առաջարկում է Դաշնակցությանը սկսվող պատերազմի ժամանակ միանալ թուրք-դերմանական դաշ-

նակցության, ապստամբություն առաջացնել Կովկասի
հայության մեջ՝ ոռւսների դեմ։ Փոխարենը խռոտաց-
վում եր հայկական ինքնավարություն ոռւսական
Հայաստանի սահմաններում։ Այս գերմանական ծրա-
գիր եր, վորի նպատակն եր Անդրկովկասյան բոլոր
աղջությունների—վրացիների, հայերի ու թուրքերի
ընդհանուր ապստամբության միջոցով քշել ոռւսնե-
րին Կովկասյան գլխավոր շղթալի հրուսիստիին կողմը,
այնպես վոր այդ շղթան դառնար սահմանը Թուրքի-
ալի և Ռուսաստանի մեջ, իսկ յերեք աղջությունները
կկտղմելին ինքնավար նահանգներ, Թուրքիալի հո-
վանավորության տակ»:¹

Այսպիսով մենք տեսնում ենք, վոր իրենց հերթին
իմպերիալիստական նպատակներ ունելին նաև Գեր-
մանիան, Տաճկաստանն ու Ավստրիան։ Ցեզ հարց ե
առաջ գալիս—թե մեմ կողմնակից պետք ե լինելին
Տաճկաստանում ու Ռուսաստանում բնակվող հայերը.
Իմպերիալիստական պատերազմն սկսվող վմբ իմպերի-
ալիստների խմբին պետք ե ոգնելին։

ԻՆՉՊԵ՞Ս ՎԱՐՎԵՑԻ ԲԱՑԼՇԵՎԻԿՆԵՐԸ

Հայտնի լե, վոր բայլշկիկների կուսակցությունը
հենց պատերազմը սկսելու որից մի հիմնական միտք
եր քարոզում. այդ այն եր, վոր պետք ե կովել իմ-
պերիալիստական պատերազմի դեմ, վոր իմպերիա-
լիստական պատերազմը պետք ե փոխել քաղաքացիա-
կան պատերազմի և տմեն մի յերկրում ապրող բան-
վորներն ու շահագործվող գլուղացիներն իրենց զենքը

¹ Ի. Ի. «Անցյալից», էջ 285—286.

պետք և դարձնեն իրենց տիրող դասակարգի, իրենց ըռւրժուազիալի դեմ:

Այլպես եթ քարոզում բարլշնիկների կուսակցությունը և Ռուսաստանի բանվորներն ու շահագործվող դաւազացիները հենց այդ ճանապարհով ել վերջ տվին իմպերիալիստական պատերազմին։ Յեկ բանվորների ու աշխատավոր գլուղացիների շահերը պաշտպանող ամեն մի կուսակցություն ել հենց ալսպես պետք և նաև եթ իմպերիալիստական պատերազմին։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՀԵՐԱԲԵՐՄՈՒԽԹԸ
ԴԵՊԻ ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ՅԵԿ ԴԵՊԻ
ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

Կարող ենք պահանջել, վոր Հայաստանի և մասնավորապես հայ աշխատավորներն ել հենց սկզբից այդպիս մտածելին։

Պատերազմի առաջին որից սկսած, հայ բանվորական ու գլուղացիական մասսաները վճռականապես զեմ ելին պատերազմին, ում ելին նաև Դաշնակցության ձեռնարկած ավանդութացին, սակայն անկազմակերպ ելին և այդ պատճառով ել չելին կարող կովել վոչ ցարիզմի, վոչ Դաշնակցության դեմ։

Հայկական գավառներում գործող կուսակցությունը Դաշնակցությունն եր, իսկ դաշնակները վոչ թե գառակարդալին կռիվ ելին քարոզում ցարտկան իշխանության և իմպերիալիզմի դեմ, այլ ընդհակառակը, նրանք միանում ելին ցարական իմպերիալիզմի հետ և աղդալին առելություն ելին քարոզում թուրք աշխատավորության հանդեպ։ Նրանք ել իրենց հերթին ուզում ելին հետ չմնալ ցարից և նրանց նպատակն եր

նույնպես փոքրիկ իմացերիալիստներ դառնալ, վոր հալ բուրժուազիալի համար գրավեն ծովից-ծով հայաստանը:

Յեվ քանի վոր Տաճկաստանի ու Գերմանիալի առաջարկած ծրագրով ավելի փոքրիկ Հայաստան եր տրվում հալ բուրժուազիալին, նա չհամաձայնեց Տաճկաստանի յերիտասարդ թուրքերի առաջարկին: Իսկ Ռուսաստանն, Անգլիան ու Ֆրանսիան անորոշ խոստումներ ելին անում Տաճկաստանի ամբողջ Յ վիլալեթների (Նահանգների) մասին և զեռ Կրլիկիան ել հետք: Իհարկե, այս յերկրորդն ավելի ձեռնուր յեր հալ բուրժուազիալին, մանավանդ, վոր, ինչպես տեսանք, այդ բուրժուազիալի ներկալացուցիչներից շատերն ել Ռուսաստանի համար զենքի առևտուր ելին կատարում և ընկեր ելին Անգլիալի, Ֆրանսիալի և Ռուսաստանի բազմաթիվ առևտրական ու արդյունաբերական կամպանիաների մեջ:

Միանգամայն պլարդ և, թե ինչու հայ բուրժուազիան և դրա հետ միտսին նաև Դաշնակցությունը, պետք ե անցնելին ցարական Ռուսաստանի կողմը և պետք ե մերժելին Տաճկաստանի առաջարկը: Սա մի զուտ առևտրական կոմբինացիա յեր, վոր իր շահերի համար կատարում եր բուրժուազիան:

Բայց վորպեսզի նրա նպատակն առաջ տանի, Դաշնակցությունն աղմուկ եր բարձրացնում, թե Տաճկաստանի դեմ իրը թե պետք ե կռվել՝ Տաճկաստանի «հալ յեղբայրներին» ազատելու համար: Ատելություն ելին քարոզում դեպի տաճիկները և առաջացնում ելին ազգայնական որամադրություններ:

ԻՆՉ ԵՅԻՆ ՄՏԱԾՈՒՄ ԻՐԵՆՔ,
«ՀԱՅ ՅԵՂԲԱՑՐՆԵՐԸ»

Պատասխանը պլարդ եւ Տաճկաստանի հայ աշխատավորները շահագրգոված ելին, վոր վոչ մի Դաշնակցություն, ոտարերկրիա վոչ մի բուրժուազիա քիթը ներս չխռթի նրանց գործերի մեջ։ Նրանք շատ լավ գիտելին, վոր «Յելբուալիին» ու Ռուսաստանին դիմելով իրենց լարան չի սաղանա և դրանից միմիալն ավելի կկատաղի Տաճկաստանի իշխանությունը և կոտորածներն ավելի կուժեղանան։

Հենց այդ պատճառով ել, յերբ Դաշնակցությունն ու հայ բուրժուազիան սկսեցին սրա ու նրա «միջամտությունը» խնդրել և կամավորական խմբեր կազմակերպել, այդ ժամանակ մասսանները բողոքեցին։ Աշխատավորների բողոքներից ու ճնշումներից ստիպած՝ թե Վանում, թե Երզրումում և թե ուրիշ մեծ քաղաքներում գումարվեցին զանազան, մինչև իսկ ազգայնական կուսակցությունների ժողովներ, վորոնք վորոշումներ ընդունեցին այն մասին, վոր կամավորական խմբեր չկազմվեն, և զրանով Անդրկովկասի հայերն իրենց հերթին պատերազմ չհայտարարեն Տաճկաստանին։

Այդ մասին Տաճկաստանի հայերի կողմից հատուկ դիմումներ լեզան Ռուսաստանի հայերին, հատուկ պատգամավորներ աւղարկվեցին փոխարքա Վարանցով՝ Դաշկովի պալատին կից կազմված Ազգային Բյուրուլին։ Բոլոր տաճկահայերն ել զգում ելին կամավորական շարժման սոսկալի հետեանքները։ Բոլորն ել բողոքում ելին այն բանի դեմ, վոր Անդրկովկասում և գաղութ-

ներում ապրող Խատիսովները, Աղբալանները, Սամսոն Հարությունովներն ու Զամալլանները գնան «փըրկեն» նրանց, «փըրկեն տաճկահայ Եղբալըներին»:

Տաճկական աշխատավորներն իրենց շահերը լավ ենին հասկանում և դրա համար ել Ռուսաստանի և գողութների հայ բուրժուազիակից պահանջում ելին չըտարվել ծովից-ծով Հայտստան ստեղծելու ձգտումով: Պահանջում ելին չեղոք մնալ և չմիջամտել իրենց դործերին:

Բայց բուրժուազիակի համար ծովից-ծով Հայաստանն ավելի գրավիչ ու ձեռնուու էր, քան Տաճկաստանի հայ աշխատավորները: Զուր չի, վոր դաշնակցականների դեկավար Քրիստոնիոր Միքալելյանը դեռ 1901 թվին, Հայոց Հայության շարժումի պարտությունից հետո, «Ամբոխիք տրամտբանությունը» գրվածքի մեջ աշխատում եր հայությալին շարժումն արդարացնել և դրա համար ել գրում եր, թե բոլոր դեռքերում ել Տաճկաստանի հայերը պետք ե կոտորվելին: Յեվ այս դեպում, իհարկե, հայ բուրժուազիան և նրա շահերին ծառալող Դաշնակցությունը մտածում եր թեկուզ այդ կոտորածների գնով ձեռք բերել ծովից-ծով Հայաստանը:

Իսկ մասսաների աշքին թող փշելու համար այս բոլորը հայտարարվում եր աղղասիրություն: Քարոզում ելին, թե այս ամենն անում են Տաճկահայ յեղբալըներին և հայոց ազգն աղատելու և հարամ թուրքերին վոչնչացնելու համար: Յեվ այդ ամենն այն ժամանակ, յերբ, ինչպես ասացինք, իրենք տաճկահայերը բողոքում ելին նման փրկիչների դեմ:

Անենից շատ «Հայաստանի» խնդրով շահագրգոված եր յարական նուևաստանը և զարմանալի լել չի, վոր ամենից թունդ հայասերք եր հաշակվում Վարանցով՝ Դաշկովը։ Մենք տեսել ենք և գիտենք արդեն, թե հայ-թուրքական կոտորածների ժամանտկ ալդ խորա-մանկ չինովնիկն ինչպիսի հայասիրություն ցուց տը-վեց, բայց չնայած դրան, թե հայ բուրժուազիան և թե բուրժուական ինտելիգենցիան ու Դաշնակցությունն այն կարծիքին ելին, թե Վարանցով-Դաշկովը հայե-րին պաշտպանում ե, հայերին սիրում եւ

Սա բացատրվում և նրանով, վոր Վարանցով-Դաշ-կովը պետք լեզած ժամանակ բուրժուազիալի կտակի-տալներն ավելի լեր հարգում, քան վրաց քայլավող կալվածաերերին։ Յեվհայ բուրժուազիալին իր նպա-տակներին ծառալիցնելու համար՝ մի քիչ բարել աչքով եր նայում հայ բուրժուազիալի մի քանի ներկայա-ցուցիչներին, նրանց մեկ-մեկ ընդունում եր իր պա-լատը։ Իսկ Թիֆլիսի տուաջնորդ Մեսրոպ լեպիսկոպոսն ել շատ սիրելի լեր Վարանցով-Դաշկովի կնոջ համար և այցելություններ եր կատարում փոխարքալի պալա-տին։

ԴԱՇՆԱԿՆԵՐԻ ՅԵՎ ՀԱՅ ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՅԻ ՎՈԳԵ-
ԳՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ԱՎԱՆՏՅՈՒՐԱՆ

Իհարկե, իմպերիալիստաների ալս ուշագրությունը շատ եր վոգեորում հայ բուրժուազիալին։ Դեռ 1912 թվի հոկտեմբերին կովկասի հայ բուրժուաներն ու դաշ-նակցական զեկավարներն արդեն գործի լեն անցնում։

Նրանք կազմում են մի ազգային բյուրո, վոր ամենալին հայոց կաթուղիկոսի միջոցով դիմումներ պետք ե աներ պետություններին և պետք ե շտապեցներ «Հայուստանն ազատելու» հարցը։ Այդ Ազգային Բյուրոյի մեջ մտնում ելին Մեսրոպ լեպիսկոպոսը, վոր փոխարքա Վարանցով-Դաշկովի ալարտը, վոնց վոր ասում են, գնալ-զալ ուներ և Վարանցով-Դաշկովի կնոջ ամենամոտիկ ու սիրելի մարդկանցից մեկն եր ու Թիֆլիսի առաջնորդն եր. մյուս անդամներն ելին Ալեքսանդր Խատիսովը, Սամսոն Հարությունյանը, Արշակ Զամալյանը և այլն։ Այս բյուրոն ամբողջովին ղեկավարվում եր Դաշնակցության կամքով ու թելադրությամբ և ահա հենց ալդ բյուրոն դիմում և խընդրում և «վեհափառ կաթուղիկոսին» հետեւալ խոսքերով։ «Թիֆլիսի հայ հասարակության պատկանող անձանց մի խումբ դիմում և ձեր սրբության, իբրև թե Ռուսաստանի և թե Ռուսքիայի հայ ժողովրդի, նույնազիս և բոլոր հայերի հոգենոր գլխին, խոնարհարար խնդրելով՝ դիմում անել թագավոր կայսրին, միջնորդելով Թուրքիայի հայ ժողովրդի պաշտպանության մասին տանջանքներից և իրավազրկությունից։ Մենք հաստատապես հավատում ենք, վոր իբրև արևելքի քրիստոնյաների մշտական պաշտպան, նույնպես և իբրև մի մեծ պետություն, վոր Բերլինի դաշնագրով իր վրա լեզեցը թուրքիայի հայաբնակ վիլայեթներում անհրաժեշտ ուժորմեր մտցնելու հոգուը, ուռւսական որհությունն առանց ուշագրության չի թողնի ձեր սրբության և իդեմ ձեր հոտի՝ նրա հավատարիմ վորդիների խնդիրները և իր ուժեղ հովանավորությամբ և միջամտությամբ վերջ կդնի մեր լեզրակիցների տանջանքներին...»։

Ալսակիսով, Բյուլեռն կաթուղիկոսին խնդրում եր դիմել բռնապետ ցարին, հայտնել, վոր հայերը ցարական իշխանութիւն «հավատարիմ վորդիներն են» և աղերսել ցարից, վոր նա «միջամտի ու վերջ դնի» տաճկանալ «լեզբարակիցների տանջանքներին»...

Իսկ տաճկան իշխանութիւնը վոչ մի բանից այնպիս չեր կատաղում, ինչքան ուսար պետութիւնների և մանավանդ նուսաստանի միջամտութիւնից Տաճկանայստանի հարցերին:

Պարզ ե, վոր ցարական նուսաստանը դեմ պիտի չլիներ նման միջամտության և փոխարքան այս դիմումի առթիվ պատասխանում ե, վոր «թագավոր կայսը բարեհաճութիւն ունեցավ վերաբերվել հայ ժողովրդի վիճակին կատարյալ բարյացակամությամբ...»:

Սրա հետ միասին, իհարկե, թե նուսաստանում և թե ուրիշ շատ լերկըներում կազմվում են զանազան կոմիտեներ ու բլուրոներ, վորոնք հայոց հարցը պետք է լուծելին:

Այս ամենի հետեանքը լինում ե այն, վոր զանազան «միջամտութիւնների» հետեանքով, դեռ մինչև 1914 թվին սկսած պատերազմը, կրկին ավելի ևս լարվում ե տաճիկների ու հայերի փոխհարաբերութիւնը:

ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ

Վարանցով՝ Դաշկովի հետ Տաճկանայստանը փըրկելու. մասին տարվող բանակցություններին արդեն վըա լե հասնում իմպերիալիստական պատերազմը։ Սկզբում, լեզբ Գերմանիան արդեն կուվում եր նուսաստանի հետ, Տաճկաստանը դեռ ևս պատերազմին

չեր մասնակցում։ Բայց քանի վոր Տաճկաստանը դաշնակից եր Գերմանիաին, սպասվում եր, վոր Տաճկաստանն ել Ռուսաստանի հետ կռվի կրոնվի։

Այս բանն իմանալով, Ազգակին բլուրոն և առաջին հերթին Դաշնակցություն կուսակցությունն իր պատրաստակամությունն եր հայտնում Տաճկաստանի դեմ պատերազմելու գործում։ Այդ ժամանակ ե ահա, վոր, ինչպես գրում ե Լեոն¹ «Դաշնակցության արտաքին գործերի վարիչ բժ. Զավրիել, վոր կարողանում եր ամեն տեղ լինել և ամեն բանի հասնել, ինընան լեկավ Թիֆլիսում և ներկայանալով Վարանցով՝ Դաշկովին, մի շաբաթ մեծամեծ խոսառմներ արավ։ Դաշնակցությունը նրա տրամադրության տակ կդնի իր ուժերը, հայ ժողովուրդը կարող ե իր հաշվով կաղմակերպել կամավորական խմբեր։ Համաձայնությունն արդեն կիսով չափ կայացած եր, բայց Վարանվով՝ Դաշկովը կտմեցավ ավելի լազն ծագալ տալ այդ բանակցություններին։ Նրա կողմից, բացի բժիշկ Զավրիելից, հրավիրվեց Թիֆլիսի պալատատկան շրջանը—Մեսրոպ լեպիսկոպոս, Սամսոն Հարությունյան և Ա. Խատիսով... և Վարանցով՝ Դաշկովի կառավարությունն առաջարկեց, «վոր Թիուրքիայի հետ պատերազմ սկսվելու դեպքում չորս կամավորական խմբեր կազմվեն հայերից, լուրաքանչյուրը մոտավորապես 400 հոգուց, դաշնակցական խմբալետների հրամանատարությամբ։ Այդ խմբերի անմիջական գործը պիտի լինի հետախուզների, առաջնորդների, հարկավոր գեղքում նաև առաջտապահ պահակների դերը»։

Իսկ դրա փոխարեն՝ իհարկե, Վարանցով՝ Դաշկովը

¹ Լեոն, «Անցյալից», էջ 281.

անորոշ խոստումներ եր անում տաճկական 6 վի-
լալիքներից Հայաստան ստեղծելու մասին։ Դաշնակ-
ներին աջսորից ու բանտերից ազատում եր, վոր իրեն
ծառալին։

Ի՞նչ չեծեվԱՆՔ ՈՒՆԵՑԱՎ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ՇԱՄԺՈՒՄԸ

Դաշնակցությունն իսկույն հավաքեց իր խմբա-
պետներին ու հաղուկներին և նըանց հրամանատար
կարգեց կամավորական խմբերի վրա։ Հավաքվեցին
«Անդրանիկ Փաշան» Համազասպը, Արմեն-Կարոն և
ել ով ասես։ Վարանցով՝ Դաշկովս ել խելքը կորցրած
դաշնակներին առաջարկել եր մշակել իրենց Հայաս-
տանը կաղմելու ծրագիրը և թուրքաց Հայաստանի
քարտեզը։ Քարտեզից դաշնակցական քաջերի խելքը
դնաց, նըանք քարտեզի մեջ մտցրել ելին և 6 վիլա-
լիքները և Կիլիկիան՝ իսկ դաշնակցական նիկոլ Աղ-
բալյանն այդքանն ելքիչ եր համարում։ Յեվ այդ քար-
տեզի վրայի ծովից ծով Հայաստանը պաշտպանելու
համար՝ դաշնակների գործիք Ազգային բյուրոն վորո-
շեց կամավորների թիվը հասցնել 10.000-ի, փոխարեն
վարանցով՝ Դաշկովի տռաջարկած 1,600-ի։

Տաճկական պատերազմն սկսվելուն պես՝ կամավո-
րական խմբերը Փրոնտումն ելին։ Ամենակատաղի
կովողներն ելին կամավորները։ Վար թուրքի գլուղ
հասնում՝ թուրքերին արմատիք ջնջում ելին։ Հելին
հարցնում վոչ ծեր, վոչ մանուկ, վոչ կին, վոչ տղա-
մարդ։ Նոհանջների ժամանակ սրի ելին քաշում տաճ-
կական ամբողջ գյուղեր, վորպեսզի քարտեզի վրայի
Հայաստանը մաքրեն տաճիկ բնակչությունից։

Ապստամբություններն ել իրենց հերթին։ Տաճկական ֆրոնտի թիկունքում, Վանում և ուղիշտերում, դաշնակների կազմակերպած խմբերով ապրատամբություններն ելին բարձրացվում։ Ապստամբություններն ոգնում ելին ոռւս ցարական զորքերի առաջ գնալուն ու հաջողությանը։ Բայց տաճկական կառավարությունն ու տաճկական զորքը վրեժ եր առնում ապստամբված հայերից և հետ չեր մնում դաշնակ խմբապետներից։ Տաճկական կառավարությունն ել ջարդեր եր կազմակերպում, անխնա կերպով ջնջում եր հայկական գլուղերը և հայերին քշում եր դեպի հեռավոր անապատներ։ ճանապարհին նրանց կոտորում և սովամտհ եր անում։

Բայլական հասել, վոր դաշնակցական-ազգայնական այս քաղաքականության հետեւանքով վոչնչացավ մոտ մեկ միլիոն հայ բնակչություն յեվ Տանկաստանի ամբողջ հայ աշխատավորությունը բաղցած ու հյուծված փախավ յերեագնդի բոլոր կողմերը, գրկվեց խաղաղ աշխատանքի հնարավարությունից։ Յեզ իր ալս խելազար քաղաքականությամբ Դաշնակցությունը վոչ թե Տաճկաստանի «հայ լեղբայրներին» ազատեց տաճիկների ըլունություննից, ալլ Տանկաստան ազատեց հայ բնակչությունից յեվ առաջին հերթին հայ աշխատավորներից։

Բուրժուազիալի և Դաշնակցության համար ի՞նչ նըշանակություն ուներ աշխատավորների կոտորվելը։ Դլխավորը Հայաստանն եր. գլխավորը ծովից-ծովի դաղափարն եր։ Իսկ աշխատավորությունը Տաճկաստանում չե վոր առանց այն ել կոտորվելու յեր, ինչպես կարծում եր Քրիստոափոր Միքայիլյանը։

Բայց իմպերիալիստները մտադրություն ունելին

արդիոք հայ բուրժուաներին զիջելու Հայաստանը թի՛
ցարերիու խմակերիալիսաների թեթև հայաստիրությու-
նից իր գլուխը կորցրած Դաշնակցությունը մի գոր-
ծիք եր դարձել միմիայն նըանց նպատակները կա-
տարելու համար։ Այս հարցի պատասխանը մեկ ե. Դաշ-
նակցությունը միմիայն գործիք եր դարձել իմպերիա-
լիստների նպատակն իրականացնելու համար և այդ
իմպերիալիստների համար նա զոհ բերեց մոտ մեկ մի-
լիոն տաճկահալ գլուղացիությանն ու աշխատավորնե-
րին։ Վորպեսզի մենք հաստատ համոզվենք, վոր ալդ
ալդպես ե, պետք ե հիշենք, թե պատերազմի ժամա-
նակ թնչ գերելին խաղում Հայաստանում Վարանցով-
Դաշկովներն ու «հայասեր» Անգլիայի ու Ֆրանսիայի
իմպերիալիստները։

ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏ ԴԱՇՆԱԿԻՑՆԵՐԻ ԴԵՐԸ

Իմպերիալիստ դաշնակիցների դերը միանգամայն
պարզ ե դառնում հենց այն դաշնագրից, վորի միքա-
նի հատվածները մենք բերինք մեր գրքի սկզբում։
Հիշում եք, վոր ալդ դաշնագրով Ռուսաստանը, Անգ-
լիան և Ֆրանսիան ամրող Տաճկաստանը բաժանելու
ելին իրարու միջև և վոչ մի խոսք չկար այդ դաշնա-
գրում վոչ Տաճկահայաստանի, վոչ Ռուսահայաստանի
և վոչ ել առհասարակ հայերի մասին։ Իմպերիալիստ-
ների նպատակները պարզ ելին արդեն և հենց ալդ
նպատակով ել «ազատ Հայաստան» խոստացող ցարա-
կան իշխանությունն ու «հայասեր» Վարանցով-Դաշ-
կովն աշխատում ելին հայերին Հայաստանից հեռաց-
նել և Տաճկահայաստանում ուռւներ բնակեցնել։ Յեզ

վորպեսզի հայերի թիվը Տաճկահայաստանում պակասի, միևնույն ցարական իշխանությունն ոգնում եր, վոր Տաճկահայաստանում ապրող հայ աշխատավորները կոտորվեն ու վոչնչանան:

Ճիշտ այս միևնույն քաղաքականությունն ելին տանում նաև ֆրանսիական ու անգլիական իմպերիալիստները կիլիկիալում և Տաճկահայաստանի ուրիշ վարերում:

Յեվ բանից դուքս և գալիս, վոր տաճկահայ լեզբայրներին ազատելու անունով զաշնակներն ու հայ բուրժուազիան իսկապես ծառալում ելին միմիայն իմպերիալիստների նպատակին:

V. ԴԱՅՆԱԿՅՈՒԹՅՈՒՆԸ 1917 ԹՎԻՑ ՀԵՑՈ

Ահազին թվով աշխատավորներ կոտորել տալուց հետո, թվում ե, թե Դաշնակցությունը մի փոքր ել պետք է մտածեր իր արածների մասին և իրեն հաշիվ պետք ե տար: Բայց Դաշնակցությունը կարող եր հրաժարվել իր ազգայնական քաղաքականությունից և բուրժուազիալի ձգտումներից: Այդ դեպքում Դաշնակցությունն այլևս Դաշնակցություն չել լինի:

Դաշնակցությունն այդ բանն անել չեր ուզում, վորովինեան առանց հայ բուրժուաների ոգնության Դաշնակցությունը մի որ ել ապրել չեր կարող: Դաշնակցության ամբողջ հոգուը հայ բուրժուազիալի վրա լեր և լեվոպական իմպերիալիստների վրա: Դրա համար ել Դաշնակցությունը վոչ միայն ինքն իրեն լիկիվդացիալի չենթարկեց, այլև հանդես լեկավ վորպես Հոկտեմբերյան հեղափոխության ամենակատաղի հակառակորդը և նոր չարիքներ ստեղծեց, այս անդամ արդին ուսւահացերի համար: Դաշնակցությունը շարունակեց մնալ իմպերիալիստների գործիքը:

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՑԱՆ ՍԵՅՄԻ ՇՐՋԱՆՈՒՄ

1917 թվի Փետրվարյան հեղափոխության ժամանակ, եւրբ Կերենսոկին իր բուրժուական կառավարությամբ ուզում եր հեղափոխության ղեկավարը դառնալ և հե-

դափոխութիւնը ծառալեցնել բուրժուազիակի նպատակներին, այդ նույն ճանապարհով ել ուղղում ելին գնալ Անդրկովկասի բուրժուական, տղթալինական կուսակցութիւնները։ Ահա այդ ժամանակ եր, վոր թէ հայ, թէ վրացի և թէ թուրք տիրող դասակարգերն իրենց կուսակցութիւնների միջոցով ստեղծեցին աղգալին խորհուրդներ։

Այս ազգային խորհուրդներն ազգալին տիրող դասակարգի ներկայացուցչութիւններ ելին։ Ահա ինչու հեղափոխությանը միանալ նրանք չելին կտրող և իրար միս կրծելով ելին զբաղված։

Ահա այդ ազգալին խորհուրդների և բուրժուական ու մանր-բուրժուական կուսակցութիւնների ներկայացուցիչներից ել կտզմվում և Անդրկովկասյան սելմը։ Ինչպես ասոցինք, բոլոր ազգալին խորհուրդներում ել նստած ելին ազգայնականներ, բուրժուական կուսակցութիւններ, մանր-բուրժուական սոցիալիստներ։ Դրա համար ել այդ սելմում նստում են այդ աղգայնականները։ — Վրացիներից՝ մենշեիկները, հայերից՝ դաշնակները, իսկ աղբբեջանցիներից՝ մուսավաթականները։

Սրանցից վոչ մեկը մյուսից հետ չեր մնում իր հականեղափոխական գործունեցությամբ։ Դաշնակները հայ աշխատավորներին ելին գրգռում վրացի և թուրք աշխատավորների դեմ, մենշեիկները վրացիներին ելին գրգռում հայերի և աղբբեջանցիների դեմ, մուսավաթիստներն ել՝ աղբբեջանցիներին։

Իսկ սելմի մեջ նստած մենշեիկները, դաշնակներն ու մուսավաթիստները շարունակ իրար կասկածով ելին նաևում, իրարու վոտքի տակը փորում ելին, աշ-

խատում ելին իրարու վնասել և բանն ալնաեղ հասավ, վոր Բագվում նորից սկսվեցին հայ-թուրքական կոտորածներ:

Ահա այս Յ հակահեղափոխական կուսակցություններից կազմված կառավարությունն եր, վոր Ռուսաստանի հեղափոխական շարժումից Անդրկովկասի բանվորներին ու դպուլացիներին կտրելու համար՝ Անդըրկովիկասը հայտարարեց Ռուսաստանից բաժանված, Ռուսաստանից անկախութեած հայածանքն ուժեղացրեց բայլշեիկների ու բանվորական հեղափոխության դեմ:

Նույն այդ սելմն եր, վոր Ռուսաստանի ուժն Անդըրկովիկասում թուլացնելու համար՝ ուռուսական զորքերը ցրված հայտարարեց և ուռուսական զորքերին տաճկական ճակատից քշեց դեպի Ռուսաստան:

Իսկ սելմի ամենախտվոտակ դործն այն եր, վոր նո չճանաչեց Ռուսաստանի Խորհրդավին իշխանությունը, չընդունեց Խորհրդավին իշխանության և Գերմանիայի միջև կնքված Բրեստ-Լիտովսկի դաշնապերը և իմպերիալիստների ձեռքին խաղալիք դառնալով՝ շարունակեց պատերազմը Տաճկաստանի դեմ:

Բրեստ-Լիտովսկի համաձայնագրին ամենակատաղի կերպով դեմ ելին դաշնակցականները, վորովհետեւ այդ համաձայնագրով Տաճկաստանը պետք է ստանար իր նախկին հողամասերը, 1878 թվի սահմաններով, յեթե միայն այդ մասին համաձայնություն տար տեղական բնակչությունը: Իսկ Դաշնակցությունն այդ մասին լսել անգամ չեր ուզում, վորովհետեւ նրա նողատակն եր ծովից ծով Հայտատան, Կիլիկիան ել հետը:

Յեվ ահա, վոտնատակ տալով մասսաների ձգտումը, խողաղություն հաստատելը, մենք տհմնում ենք, վոր

Անդրկովկասյան հականեղափոխական սելմը և նրա
հետ միասին նաև հականեղափոխական Դաշնակցու-
թլունը, մերժեցին Բրեստ-Լիտովսկի համաձայնագիրը
և պատերազմ հայտարարեցին Տաճկաստանին, վորն
ամենակարճ ժամանակամիջոցում և ամենասույլալի
«սրբել-մաքրելու» քաղաքականությամբ լեկավ հասավ
մինչև Թիֆլիսի մոտերքը։ Ամբողջ Անդրկովկասի հայ
աշխատավորությանը ևս այս խելագար քաղաքակա-
նությամբ Դաշնակցությունը հասցնում եր միենույն
վիճակին, ինչ վիճակի հասցըել եր տաճկահայ աշխա-
տավորներին։

ՍԵՅՄԻ ՔԱՅՔԱՑՈՒՄԸ ՅԵՎ ԱՆԿԱԽ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սելմը կարմղ եր լերկար ժամանակ պահպանել իր
գոլությունը։ Իհարկե, վոչ։ Սելմի՛ Անդրկովկասի այդ
«կառավարության» մեջ նստած ելին վոչ թե բանվոր-
ների կամ շահագործվող գյուղացիների ներկայացու-
ցիչները, այլ կապիտալիստների ու կարգածառերերի
կուսակցությունները։ Յեվ հայ, վրացի, թուրք կա-
պիտալիստների ու կալվածառերերի շահերը ովաշտագա-
նող այդ կուսակցություններից ամեն մեկը մյուսի
նկատմամբ իմպերիալիստական ձգտութներ ունելին։
Իրարից ուղում ելին ավել պատառ, ավել հող խլել ու
ավելի խոշոր ու պատասխանառու աթոռներ գրավել։
Պարզ է, վոր տիսպիսի կառավարությունը լերկար
ապրել չեր կարող։

Նա շատ շուտ ել իրեն մահով մահացավ։ Կարճ ժա-
մանակից հետո լերկար լերկըներն ել «անկախ հանրա-

պետություններ» հայտաբարվեցին և Անդրկովկասը
վերածվեց առանձին ու «անկախ» հանրապետություն-
ների:

Յեվ հենց այս չակերտավոր անկախության շրջա-
նումն եր, վոր Դաշնակցությունը Հայաստանի տերն
ու իշխանը դարձավ ու ցույց տվեց լերկեր կտորա-
վարելու իր բոլոր «շնորհքները»:

VI. ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ «ԱՆԿԱԽ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺԱՄԱՆԱԿԱԾՐՁԱՆՈՒՄ

ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ
ՆՊԱՏԱԿԸ

Այսպիսով Անդրկովկասի աղջախտկան կուսակցությունները՝ մենշևիկները, դաշնակներն ու մուսավաթիստները կրկին արդ բանվորներին ու գյուղացիներին բաժանում ելին իրարից, Անդրկովկասում շատ ավելի ծանր դրություն ստեղծելով, քան ցարիզմի ժամանակ եր:

Հայտնի լե արդեն, վոր իմպերիալիստական պատերազմից քայլքարվել եր վոչ միայն Ռուսաստանի, այլև Անդրկովկասի բանվորների ու գյուղացիների տընտեսությունը և սլատերազմից հոգնած բանվորներն ու գյուղացիներն այլևս կովել չելին ցանկանում: Ընդհակառակը: Նրանք պահանջում ելին խաղաղություն և անհրաժեշտ եր նրանց տնտեսությունը զարգացնելու խաղաղ պայմաններ ստեղծելը:

Գուցե ՚իաշնակցությունը կկարողանար արդ պահաններն ստեղծել, յեթե նա մտածեր բանվորների ու գյուղացիների վիճակի մասին, յեթե նրա նորատակը չիներ բարելավել աշխատավորների գրությունը: Դրա համար որյեկտիվ հնարավորություններ կային: Այդ դեպքում նո հաշտ քաղաքականություն, կտաներ իր

հարեանների հետ, վորպեսզի չկարվեր Պատաստանից ու Աղբքիջանից մի կողմից, Տաճկաստանից ու Պարսկաստանից — մյուս կողմից:

Բայց Դաշնակցությունն, իրեկ բուրժուազիալի կուսակցություն, լերբեք ել չի մտածել բանվորների ու գլուզացիների վիճակի մասին. ընդհակատակը, նա իր առաջ ավելի ոմեծ նպատակ եր զբեր Արդ նպատակը նրա մշտական լերազն եր—ծովից-ծով Հայաստանը: Յեզ այդ ծովից-ծով Հայաստանն ստեղծելու համար Դաշնակցությունն ալժմ ել ուզում եր ամենից տուաջ Ռուսահայաստանը «մաքրի» թուրքերից:

«ԱՆԿԱԽ ՅԵՎ ՄԻԱՑՑԱԼ ՀԱՅԱՍՏԱՆ»

Փոխանակ Հայաստանի բնակչության համար աշխատանքի խաղաղ պայմաններ ստեղծելու և տնտեսությունը բարձրացնելու, դաշնակցական կառավարությունն Ավետիս Ահարոնյաններին Փարիզ եր ուղարկում, վոր նըանք Ֆրանսիալին և Անգլիալին խնդիրներ ներկայացնեն Կիլիկիան և վեց վիլայեթները Հայաստանին միացնելու համար: Մյուս կողմից իմպերիալիստական գեներալների հետ դաշնակցական կառավարությունը բանակցություններ եր վարում, թե մեզ վենք ու դինամիտերք տվեք, ողնության հասեք և մենք տաճկական զորքերին կարող ենք քշել մինչև ուր ասես:

Այս մասին մենք կարդում ենք անգլիական գեներալ Դենստերվիլի նամակը, վոր նա գրում եր դաշնակցական Արարատյանին, վորը Դաշնակցության կողմից բանակցություն եր վարում այդ գեներալի հետ: Դենստերվիլն Արարատյանին պատասխանում է.

«Իսկ ինչ վերաբերվում է լերկորորդ հարցին (այսինքն, հալերի դրությանը Յերևանում.—Դ. Ա.), ապա մնում ե ցավել, վոր այդ սքանչելի ռազմական նյութը (ընդծումը մերն ե.—Դ. Ա.), վոր կարելի յե ստանալ Յերևանում, դաշնակիցներն ի վիճակի չեն ոգտագործելու»: Ինչպես տեսնում ենք, Դաշնակցությունն այդ գեներալին առաջարկում ե, թե Տաճկաստանի դեմ կռվելու լավ ռուազմական նյութը ունենք, այսինքն լավ գործ ու կովողներ--ուրիշ խոսքով, հայ աշխատավոր գյուղացիների ու բանվորների հաշվին խոստումներ ե անում, թե ձեզ կոգնենք տաճիկների դեմ կռվելու համար, ինչպես այդ արվում եր 14 թվին Ռուսաստանի համար: Իսկ գեներալը ցավ ե հայունում, վոր դաշնակիցներն ալդախիսի գոված, սքանչելի ռուազմական նյութը» իրենց նպատակների համար ոգտագործելու «Հնարավորություն չունեն»:

Ու այս բոլորը խայտառակ ու հականեղափոխական դաշնակցական կուսակցությունը կատարում ե այն ժամանակ, իերբ բայլշեիկներն արդեն ցար Նիկոլային տապալելուց հետո՝ նրա գաղտնի դաշնագրերը լուս աշխարհ ելին հանել և ամբողջ աշխարհի համար միանգամացն պարզ ելին դարձրել: Թե անդիքական ու ֆրանսիական իմպերիալիստները վոչ թե «տնկախ» Հայաստան են ուզում ստեղծել, այլ ցանկանում են Տաճկաստանն իրենց միջև բաժան-բաժան անել:

Ապա, այդ նույն հարցի մասին գեներալ Դենստերվիլը գրում ե, «Առ այժմ յես հնարավորությունն չունեմ վոչ մի հույս հայտնելու այդ ուղղությամբ մտտիկ ապագայում ոգնություն ցուց տալու..., բայց վոչ մի կասկած դաշնակիցների վերջնական հաղթանակի մա-

սին լինել չի կարող, և զրա հետեանքը կլինի Հայաստանի վերականգնումը։ Այդ միակ գրությունը կարող է ձեզ լուսատու աստղ ծառալիք ձեր խավար հուսահատության մթումք։

Անա ալսպիսի գեներալների անորոշ ու խորամանկ խոստումներով եր, վոր վոգեորվում եր ծովից-ծով Հայաստանի լիրազով ապրող Դաշնակցությունը։ 19-ը թվին մենք տեսնում ենք, վոր դաշնակցական կառավարությունն այնքան տարվեց այդ խոստումներից, վոր իրեն անվանեց վոչ միայն «անկախ» ալլ և «միացյալ» Հայաստանի կառավարություն։ Իսկ «միացյալ» Հայաստանում մտնում ելին, իհարկե, Յ վիլայեթները և Կիլիկիան։

Արդեն պարզ ե, թե ինչ «մեծ» գործերով եր զբաղված դաշնակցական կառավարությունը։ Մի փոքրիկ Յերևանի շրջակալքը կառավարելու կարողությունից զուրկ այդ հիմարներն իրենց մառւզերիստական խըմբերով միաք ունելին տիրանալու տինտիսի մի մեծ լերկը, վորի սահմանների վրա պահակ կանգնեցնելու հոմար լեթե հավաքելին ամբողջ Հայաստանի քնակչությունը, ելի չեր բավականանա։

ԲԻՒ ՇԱՀԵՐԻՑ ԵՐ ԲՂՋՈՒՄ ՄԻԱՅՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԾՐԱԳԻՐԸ

Հայաստանի բանվորներն ու գլուղացին կարիք ունելիքն արդյոք ալդպիսի մի հսկայական ու մեծ Հայաստանի, վորի մեջ իրենք չնշին փոքրամասնություն պետք ե կազմելին։ Ամենեին։ Հայ բանվորի ու գյուղացու, հայ աշխատավորի միակ ճգառումն այն եր,

վոր աշխատանքի իւաղաղ պարմաններ ստեղծվեն և
նրանք իրենց աշխատանքի տերը լինելով, կարողա-
նան ազատվել պատերազմներից ու կոփներից, վոր
նրանք կարողանան իրենց տնտեսությամբ զբաղվել
և հաշտ ու հանգիստ հարեանի նման ապրեն վըացի
և թուրք աշխատավոր լեղբարների հետ, ինչպես այդ
տեղի ունի ալոր Խորհրդավին իշխանության որով:

Ալղակիսի «միացլալ» և «մեծ» Հայաստան ստեղծելը
բղխում եր միմիայն հայ բուրժուազիալի շահերից,
վոր ուզում եր տիրանալ նաև ուրիշ ազգերի աշխա-
տավորներին և շահագործել նաև նրանց:

Զուր չե, ինարկե, վոր, ինչպես դաշնակցական
կառավարության նախագահ Թաջազունին ել գրում ե
եր «Դաշնակցությունն անելիք չունի» գրքում, ծո-
վից-ծով Հայաստանի ծրագիրը կազմելու մեջ ամենա-
մեծ մասնակցությունն ե ունեցել Փարիզի հայ բուր-
ժուազիան:

Իսկ մյուս կողմից, ինչպես տեսանք, այդ գործում
մեծ դեր են խաղացել իմապերիալիստական զանազան
գեներալները, վորոնք «ուազմական նյութի» համար
դանաղան խոստութներ են արել:

ԴԱՇՆԱԿՑԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՆ ՈՒ ՀԱՐԵՎԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դաշնակցության նման ծրագրներն ու հեռանկար-
ներն անհանգստացնում ելին թե Վրաստանին և թե
Աղբբեջանին: Վրաստանը հեշտությամբ չեր զիջի Ա-
խալքալաքի գավառը և վոչ ել Աղբբեջանը Հայաստա-
նին կտար Դարձրազը: Մասնավանդ վոր այդ լեռներ-

ներում նույնպես տիրող գասակարդը բուրժուազիան ու կալվածատերերն ելին և նրանք ել ազգայնական հովերով ելին տարված — նրանք ել իրենց հերթին ցանկանում ելին մեջտեղից վերացնել Հայաստանը:

Մենշեփերի կառավարությունն իր հերթին Վրաստանի սահմաններն ուղղում եր հասցնել միչև Սևանալիճը, իսկ Աղրբեջանի մուսավաթիստները Հայաստանի վրայով ուղղում ելին ավելի մոտիկ կապվել Տաճկաստանի հետ:

Այսպիսի նացիոնալիստական կտռավարությունների մեջ առանց այն ել բարեկամական հարաբերություններ լինել չելին կարող, իսկ Դաշնակցությունն իր իմպերիալիստական ծրագրներով նրանց ավելի չեր կտադրեցնում և թուրքերին «սրբել-մաքրելու» քաղաքականությունն ուղղակի թշնամություն եր առաջացնում մանավանդ թուրք և հայ բնակչության միջև:

Թեև Աղրբեջանի մուսավաթիստներն ել Հայաստանի գաշնակներից հետ չելին մնում և նրանք ել իրենց հերթին Աղրբեջանի հայ աշխատավորությանն ելին կոտրում, նույնպես Աղրբեջանը հայերից «մաքրելու-որբելու» նպատակով:

Նման պայմաններում գաշնակցական իշխանության ներքո զտնվող Հայաստանը միանգամայն կտրվում եր հարեւան հանրապետություններից և հայ ըանվորն ու դյուղացին մնում ելին աշխարհից կտրված, նրանք տապակվում ելին մառեղիստների ու Դաշնակցության վառած կրակով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ «ՄԱՔՐԵԼ-ՄՐԲԵԼՈՒ» ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Դաշնակցական Հայաստանում ապրած ամեն մի բանվոր ու դյուղացի շատ լավ հիշում են, թե ինչ եր

նշանակում «Զանգիբասար ատվեչտիետ», «Աղբարա ատվեչայետ» կամ «Բասարգեչար ատվեչայետ» լու զունգները։ Դաշնակցակտն խմբապետներն ու մառուղերիստները կոտորում ելին Զանգիբասարի, Աղբարայի ու Բասարգեչարի շրջանի թուրքերին և նրանց ունեցվածքը թալանելով՝ քեփերի վրա ելին ծախսում։

Բայց միթե սա պատահական թալան եր:

Իհարկե, վոչ։

Դաշնակցական մինիստր Նիկոլ Աղբարայանը, դեռ Հայաստանի «անկախությունից» ել առաջ, արդեն Ռուսահայաստանի քարտեղ եր նկարել, և իր մոտ այցելողներին ցույց եր տալիս, թե այդ Հայաստանից թուրքերը վոնց պկետք ե դուրս քշվեն։

Յեվ ահա, «անկախություն» ստանալուց հետո, Դաշնակցությունն այդ ծրագիրն իրականացնելու համար՝ կոտորում եր Հայաստանում ընակվող թուրքերին։ Իսկ կոտորելու ամենալավ զենքը Դաշնակցության նախկին հարդուկներն ու ֆեդայները, դաշնակցական խմբապետներն ելին։

Դրա համար ել դաշնակցական կառավարությունն այդ խմբապետներին ու կարիչներին ամեն իրավունք, ամեն ազատություն տալիս եր, վորապես նրանք Հայաստանի թուրք աշխատավորությանը «ջնջեն» և «մաքրեն», «սրբեն»։

Յեվ թվ չի հիշում, թե իր 2^{1/2} տարվա պետական գոյության ընթացքում այդ դաշնակցական խմբերը, վորոնց ժողովուրդը «մառուղերիստ» եր անվանում, վոնց կարեցին, վոնց կոտորեցին թուրք աշխատավորներին և ամբողջ Հայաստանը դարձրին պատերազմի ըեմ։ Այս ակների կոտորածներից ու պատերազմներից

միավում եր վոչ միայն թուրք աշխատավորը, ալ և
հայ դյուղացին ու բանվորը նրանք հնարավորու-
թյուն չունելին իրենց տնտեսությամբ զբաղվելու-
վար ու ցանքն անհնարին եր դարձել և վոչ վոք խա-
ղաղ աշխատանքի կպչելու հնարավորություն չուներ:

Այս բոլորն ել միմիայն նրա համար, վոր Նիկոլ
Աղքալյաններն ու Դաշնակցություն կուսակցությունը
բուժուազիալի համար Հայաստան պատրաստեն ա-
ռանց թուրքերի և տեղ բացեն ծովից ծով Հայաստա-
նը գլուխ բերելու համար:

«ՄԱՀ ԿԱՄ ԹԱԼԱՆ»

Զարմանալի էել չի, վոր բոլոր տեղերում պատվում
եր «մահ կամ թալան» լոգունգը: Զրիակերության
վարժված մառզերիստներն ու սպեկուլյատները չե-
լին միայն, վոր թալանով ելին զբաղված: Թալանում
ելին կուլակները, թալանում ելին ինտելիգենտները,
թալանում ելին և կառավարության անդամ գոշնակ-
ցականները: Թեև այս վերջիններիս թալանն ավելի
խոշոր գումարով եր լինում, քան հասարակ թալան-
չիններինը:

— Թալանիր, մեկ և, իերկար չի տեսելու, — մտածում
ելին Դաշնակցության իշխանությամբ «կառավարվող»
ամեն տեսակ բաշիբոզուկները:

Այս թալանի լոգունգը միմիայն թուրքերի նկատ-
մամբ չեր, վոր տարածվում եր: Թալանում ելին վոչ
միայն նրանց, այլև համարյա ամեն ինչից զրկված
դյուղացիններին:

Ճիշտ և նկատում ընկ. Շ. Ամիրխանյանը Մայիս-
յան ապստամբության մասին գրած իր աշխատության

մեջութեանության մեջաշխատող խմբապետը
«դա չինովնիկ կաշառակերների, աղքաբնակությունը
թալանողների և լերկիրը քալքալող մութ ուժերի հո-
վանավորողն եր»։ Բանտկում աշխատող խմբապետը՝
«դա բանակը քալքալող թալանների կազմակերպիչն
եր»։ Իսկ «սահմանները պահպանող խմբապետը—դա
սահմանային արյունահեղ ընդհարումների նախաձեռ-
նողն ու ղեկավարն եր»։

Սրանցով եր լերկիր կառավարում Դաշնակցությու-
նը։ Սրանք ելին նրա լերես տված կտռավարիչները
և սրանց վրա լեր հույս դնում Դաշնակցությունը՝
«ծովից ծով»-ին տիրապետելու համար։

Դաշնակների տիրապետության ժամանակ խմբա-
պետ-մառազերիստի մառւզերն եր որենքն ու իրավուն-
քը։ Հայաստանի վմբ բանվորն ու գյուղացին են, վոր
չեն հիշում մառւզերիստների տարածած սարսափը։
Վմբ գյուղացին կհամարձակվեր ծպուն հանել, լեթե
մառւզերիստը գալիս եր, իջնում նրա դռանը և պա-
հանջում եր իր ձիու համար գարի, իսկ իր տղաների
համար վոչխար ու հավ։ Ո՞ւմ կարող եր գանգատվել,
ինչ կարող եր ասել հայ գյուղի առանց այն ել թա-
լանված գյուղացին, լերբ մառւզերիստ խմբապետը
նրա գոնից քշում եր վերջին վոչխարն ու հորթը,
կամ նրա մինուճար աղջկան տնից փախցնում եր որը
ցերեկով։

Իր գլխից պետք և ձեռք վերցներ այս բոլորի դեմ
բողոքող հայ գյուղացին։

Յեվ միմիայն գյուղացին արդյոք։

Ո՞վ չի հիշում, վոր գաշնակցական կառավարության

¹ Շ. Ամիրիս., «Մայիս. տպան.», հջ 59.

պարլամենտի շենքի առաջ, Յերևան մայրաքաղաքի բուլվարում, որը ցերեկով հրացանաձգություն ելին բարձրացնում «դաշնակցական տղերքը» և կանալք ելին փախցնում՝ բռնաբարելու համար։

Միթե մոռացվել են այն ժամանակները, յերբ մի խումբ մասնդերիստներ՝ Եղմիածնի կալարանի մոտ մի կանաչ տեղ տեսնելով՝ ամբողջ գնացքը կանգնեցնել են տալիս, ցած են իջնում, յերկու ժամի չափ կանաչների մեջ ուստում-խմում, հարըում, քեզ են անում և նոր միայն թույլ են տալիս, վոր գնացքն առաջ շարժվի։

Միմիայն հասարակ խմբապեանները չելին, վոր արդպես ելին վարվում։ Ինչպես ասացինք, ավելի խոշոր ելին խոշոր դաշնակցականների, պետական մարդկանց թալանները, Բավական են հիշել այն լիքը վագոններով խոտերն ու բամբակները, վոր Հայոսստանից գուրք ելին տարբում ծախելու համար և գնում ելին կարսի լիազոր դաշնակ դեկավար Աղամալյանների ու Նոհրատալանների գրպանը։

Յեվ մվ պետք ե դատեր ու պատժեր այդ վոճրագործներին, յեթե պետությունն ինքը մի թալանի ապարատ եր դարձելի

Պատկերը լրիվ անելու համար բավական ե քերել նաև «ալյուրի լիազորների» և «լքված վալրերն ոգտապործելու», ինչպես և «սերմանման» պատմությունները։

Նախ՝ ալյուրը։

ԱՄԵՐԻԿԱՆ ԱԼՅՈՒՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Այսպիսի պարմաններում, վոնց վոր ասում են, գլուզու հավասն ել եր փախչում։ Թյուղացու սիրար

չեր տալիս, վոր գործի կպչի ու իր տնտեսությունը բարձրացնի: Դաշնակցական քաղաքականության շնորհիվ լեռկերը բոլորովին զրկվում եր իր տնտեսությունը զարգացնելու և շինարարության հնարավորությունից: Ու բոլորն ել աչքները տնկում ելին դեպի դուրս, վոր գրսից ոգնություն գա և ոգնությամբ ապրեն: Յեվ ստեղծվում եր մի լեռկեր, վորի հառավարողները թալանով ելին պրադիմած, իսկ բնակիչները վոչ մի բան չելին արտադրում, այլ միայն սպառում ելին:

Թալց վժըտեղից ելին սպառելու նյութ գտնում:

Զպետք և մոռանանք, վոր իմպերիալիստական դիպլոմատները և մանավանդ Անտանտան, հեշտությամբ ձեռք չելին քաշի Հայաստանի «ուազմական նյութից» և առհասարակ կովկասի հարստություններից: Դրա համար ել, թե Գերմանիան, թե Անգլիան և թե Ամերիկան իրենց գեներալների միջոցով շարունակ գրգռում ելին Անդրկովկատսի հակահեղափոխական կառավարություններին: Դաշնակցական կառավարությունը մենշևիկյան կառավարության դեմ, մուսավաթական կառավարությանը դաշնակցական կառավարության զեմ: Նրանք լուղ ելին լցնում այդ ազգայնական կուսակցությունների վառած կրակի վրա, և վորպեսպի Նրանց կրակը չհանգչի, մեկ-մեկ զենք ու շոք ելին ուղարկում, կամ այլուրով ու քաղցր կաթով ուղում ելին իրենց հետ կապած պահեն, իրենց կամքի գերին դարձնեն Անդրկովկասի փոքր աղբություններին:

Ահա հենց այդ նպատակով ել «հայասեր» Ամերիկան ալյուր ու քաղցր կաթ եր ուղարկում Հայաստանին:

ԱՄԵՐԻԿԱՆ ԱԼՅՈՒՐԻ ԲԱՇԽՈՒՄՆ ՈՒ ՍՊՎՀ

Բայց ամենից հետաքրքիրն այդ ալյուրի բաժանումն եր: Յեթև Հայաստանում այդ ժամանակ ամենալավ պաշտոն կար, ապա այդ պաշտոնն ալյուր բաժանող, կամ ալյուրի բաժանմանը վերահսկող դաշնակցական լիազորների պաշտոնն եր:

Լիազորներ կային, վորոնք չեղած, գոլություն չունեցող ամբողջ գլուղերի անունով ալյուր ու ցորեն ելին ստանում: Իսկ գլուղերում ալյուր ստացողն ու բաժանողը գլուղի կուլակն եր, գլուղի զոռքան: Զոռքաները լիազորների հետ միասին մեկին հինգ, մեկին տասն ավել ելին դուրս գրում ալյուրը և, իհարկե, գլուղի չքավոր ու սովամահ բնակչությունը չեր, վոր ողավում եր այդ ավել դուրս գրած ալյուրից ու ցորենից: Ազգ բոլորը գնում եր գլուղի զոռքաների և լիազորների դրանք: Թեվ ով կարող եր դրա դեմ բողոքել, քանի վոր նրանց թիկունքում կանգնած ելին մտուղերիստական խմբավետները:

Իսկ չքավորությունը սովից թող կոտորվեր:

Ծեվ ահա, 1919 թվի մայիսի 6-ի համարում, մի թղթակից Սուրմալուից գրում ե «Սոցիալիստ-հեղափոխական» թերթի № 1-ում. «Փանիկ գլուղը, վոր մինչև դաշնու ունեցել է 2500 անձ, մինչև մարտի 20-ը մնացել է 750 հոգի, եվջիլարը՝ 2400 անձ, մնացել է 700 հոգի, Ալիզամարը՝ 1970 անձ, մնացել է 862, Ալեքլուն՝ 1200, մնացել է 450, Թեղոլուն՝ 1212, մնացել է 700. ալդական նաև մյուս գլուղերը: Վերջին յերկու գլուղերն իրենցից ներկալացնում են կատարչալ գերեզմանոցներ: Ալիզամարում տուն չկա, բայց չկա, վոր թաղ-

ված մարդ չտեսնվի. գլուղի կերեզմանատանն այս
տարի մեռածների թիվը ավելի շտա ե, քան հարյուր
տարվա ընթացքում։ Ալեթլու մտա և միայն 15—20
հոգի վոտքի վրա տեսա և այն ել դիմքերն ուռած,
մնացածները սովից պառկած հաց ելին աղերսում։ Այս
բոլորը սոսկ իրականություն ե, առանց չափաղանցու-
թյան։

1920 թվի հունվար 7-ի համարում դաշնակցական
«Հառաջ» թերթը գրում ե. «հունվարի 5-ին Յերևա-
նում փողոցներից հավաքված ե 3 դիակ, տներից 10-ը
և հիվանդանոցներից 52-ը—ընդամենը 65։ Բավական
ե հիշել, վոր բժշկասանիտարական վարչության տըվ-
լալներով 19 թվին Յերևանում մեռել ե 14,000 մարդ։
Իսկ ամբողջ Յերևանի բնակչությունը 70,000-ից ավե-
լի չեր։ Այդ նշանակում ե, վոր սովից կոտորվել ե քա-
ղաքի բնակչության 20% -ը։ Իսկ գավառում հո ավելի
սոսկալի չեր։

Իսկ ինչո՞ւ։

Այս ինչուի պատասխանն ել մենք գտնում ենք այն
ժամանակվա «Սոցիալիստ հեղափոխական» թերթում։
Թերթը գրում ե. «Սովամահությունները չեն նվազում,
ժողովրդի մեծ մասը խոտեղենով ե սնվում. բոլորը
նիհար են, թուլակաղմ, սեփական հողը մշակելու ըն-
դունակությունից զուրկ։ Կառավարությունից վոչ մի
ոքնություն չի ստացվում, չեթե չհաշվենք այն փոք-
րիկ պատառը, վոր բաժանվեց վողորմության ձեռվ և
վորից ավելի շատ ողավեցին դարձալ «լիազորներն»
ու հարուստ վաշխառուները, քան մեռնող աշխատա-
վորությունը։ Յեզիրագործենն իբրև սերմացու դրա-
մով ծախվեց և հարուստ կեզեքիչները՝ դնելով այն,

հաց ոլտուքասանեցին ու ֆունաը 9—10 սուբլիտվ ադքատ գլուղացումն ծախեցինս Յորենը բաժանվեց ըստ հողերի քանակի, պարզ և, վոր ալդ դեպքումն ել ոգտվեց հարուստը, քանի վոր համարյա ամբողջ հողը գտնվում է նրա ձեռքին։ Գլուղացիներից շատերն ել սովի պատճառով իրենց ալգիները շատ չնշին զներով ծախեցին գլուղացի տղրուկնելին, իրենք զրկվեցին նուև ցորենի բաժին ստանալուց։

Վաշխառուներ, ազրուկներ, կուլակներ, լիազորներ — ահա՝ թե ովքեր եիին ոգտվում ամերիկան Շնվերներից — իսկ ժողովրդի մեծ մասը խոտեղենով եր սընվում։ Ահա, թե ինչպիսի արդունքներ եր տալիս դաշնակցական կառավարության պարենավորման քաղաքականությունը։

Յեվ հետաքրքիրն այն և, վոր խոշոր հողեր ունեցող գլուղացիների հողերը մնում են իրենց ունեոր տերերի ձեռքին, հողն առ ու ծախսի առարկա դառնալով ընկենում և տղրուկների ու կուլակների ձեռքը և ալդ կուլակներն ել սերմացու և ալյուր են ստանում, վորով հետեւ ամենից շատ հողերը կուլակների ձեռքին են։

Այժմ մենք տեսնենք, թե դաշնակներն ու դաշնակցական կառավարությունն ինչպես եր լուծում հողերի հարցը։

ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԴՅՈՒ- ՂԱՏՆԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Վերը նկարագրված պայմաններում ինչ խոսք կարող եր լինել շինելչինարարության կամ անտեսության բարձրացման մտսին։ Դաշնակցական կառավարության տն-

դամներն այսոր, յերբ տեսնում են, վոր Խորհրդային իշխանության որով մեր տնտեսությունն ու շինարարությունն արագ թափով աճում ե, սիրում են իրենք իրենց հավատացնել, թե իրենց ժամանակ ել նույնպես շինարարությունը և տնտեսության բարձրացմամբ են զբաղվել: Բայց ո՞վ կլինի այն միանիտը, վոր կարող ե նույնիսկ համեմատության մեջ դնել դաշնակցական «մահ կամ թալանի» կառավարությունը Խորհրդային իշխանության հետ: Կերը հիշված խայտառականական պայմաններում վոչ միայն շինարարություն չեր կատարվում, այլև գլուղացին պարզապես վախենում եր վար ու ցանք անելուց, վորովհետեւ չգիտեր, թե յերկու որ հետո իր վար ու ցանքի գլխին ինչ ուին կգա, իր վար ու ցանքը վո՞ր «շան» ու գելի փակ կըդառնա» դաշնակցական կառավարության ստեղծած պայմաններում:

Բավական ե հիշենք¹, վոր «1914 թվի ներկա Խորհրդային Հայաստանի (այսինքն՝ դաշնակցական Հայաստանի, հանած Ղարսի, Սուրմալուի, Նախիջեվանի և ավելացրած Լոռու գրջանները) սահմաններում ցանքսերի քանակն, առանց Յերևան ու Ալեքսանդրապոլ քաղաքների, 276,957 դեսլատին եր, իսկ 1919 թվին, 75,714 դեսլատին, վոր 1914 թվի նկատմամբ կազմում ե 27,⁰/₀: Բոլոր տեսակի տնտեսությունների թիվը նույն սահմաններում և դարձրալ առանց մատնանշված քաղաքների 1914 թվին 2,364,733 եր, իսկ 1919 թվին 714,643, այսինքն 14 թվի նկատմամբ 31,⁶²⁰/₀: Իսկ Ղարսի, Սուրմալուի և Նախիջեանի շրջաննում դրությունն ավելի վատ եր, վորովհետեւ Տաճ-

¹ Շ. Ամիրխանյան, «Մայիսյան ապրամբությունը», հջ 65:

Էլական սահմանութիւն ելին, ավելի ելին ավերվել և լին-թարկվել ելին «սրբել-մաքրելու» քաղաքականությանը:

Իսկ բամբակի ցանքսն ավելի սոսկալի դրության մեջ եր, վորովհետեւ կառավարությունը բամբակ վաճառելու մոնոպոլիան ինքն եր վերցրել և տմենաչնչին գներով և անվերջ ընկնող դաշնակցական թուղթ չեկերով բռնությամբ գլուղացիներից բամբակը հավաքում և դրանով հենց գլուղացիներին ստիպում եր, վոր բամբակ չցանեն: Հետեանքը պարզ է. վերը բերված Հայաստանի սահմաններում «բամբակի ցանքսի քանակը 1914 թվին 10,598 դեսլատին եր, 232,527 փութմաքրած բամբակի բերքով, միջին հաշվով դեսլատինից 21,9 փութ, իսկ 1919 թվին միայն $592\frac{1}{2}$ դեսլատինին (քսան անգամ պակաս)՝ 7,942 փութ բերքով, դեսլատինից 15 փութ միջին բերքով»:

ՀՈՂԸ ՊԱՐԼԱՄԵՆՏԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ ՍՈՎՀ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻՆ

Դեռ մինչեւ արտօր ել, իրենց հակահեղափոխական դեմքը ծածկելու համար և իրենց հակահեղափոխական գործունելությունն արդարացնելու համար, դաշնակները փորձում են միամիտներին խաբել, թե Տաճկահայաստանի հարցը և ծովից-ծով Հայաստանի հարցը հոգային հարց եւ Այսինքն, իբր թե, դաշնակները ցանկացել են մեծ, ծովից-ծով Հայաստանը ձեռք բերել միայն նրա համար, վոր հոգասակավ գլուղացիները Տաճկահայաստանում հող ձեռք բերեն:

Մեր զյուղացու հողը շատ չի, իհարկե, և գլուղացիների հոգաց քաշող Խորհրդային իշխանությունը Շիր-

Հրանցքն եւ անց կացրել և կառուցել եւ ուրիշ շատ Հրանցքներ, վորոնք մեծ քանակությամբ հողեր են վառագում և մինչև անգամ եջմիածնի ու Յերեանի Ղոերն ել Խորհրդային իշխանության ձեռքի տակ ոգտավետ են դառնալու, միքանի տասնյակ հազար դեսյատին նոր հողեր չտալով։ Մյուս կողմից Խորհրդային իշխանությունը արտադրության նոր յեղանակներ, մեքենաներ և մաքնում գյուղը, հողն ավելի լավ մշակելու միջոցներ և սովորեցնում, վոր փոքր կտոր հողից ավելի շատ բերք ստացվի։ Յեկ վերջապես Խորհրդային իշխանությունը թուել չի տալիս, վոր հողերի մեծ մասը գյուղի հարուստների ու տղրուկների ձեռքին կենարունանա, իսկ մնացած գյուղացիությունը սովամահ լինի։ Ահա այս ձեռվ տեսոք և հարցը լուծի գյուղացիների շահերը պաշտպանող կառավարությունը և վոչ թե իբր հող ձեռք բերելու անվան տակ ազգային կոտորածներ կազմակերպի։ Հողատիրության և հողոգապործման հետ կապված բոլոր խնդիրները լուծվեցին նրանով, վոր Խորհրդային իշխանությունը հողն ազգայնացրեց և գյուղատնտեսական կոռակերացիայի միջոցով պատրաստվում և սոցիալիզմին անցնել։

Այսոր, յերբ գաշնակները չգիտեն, թե վճնց դուրս գան «մաքրել-սրբելու» իրենց քաղաքականության տակից, Զանգիրտսարի, Աղբաբալի ու այլ տեղերի «մաքրելու» գործն ել ուղում են արդարացնել տիդնույն պատճառարանությամբ։ Իբր թե՝ թուրք աշխատավորներին կոտորում ելին, վոր նրանց հողերն ու տները հայերին տան։ Յեթե մինչև իսկ այդպիս լիներ, ել յետ թուրք աշխատավորությանը կոտորելու միջոցով հող ձեռք բերելու այդ ստոր քաղաքականությու-

նը միմիայն դաշնակներից կարելի էր սպասել Բայց
դա ալդպես չի: Դա սուտ ե:

Հայաստանի աշխատավոր գլուղացիությունը վոչ
Կիլիկիաներով Հայաստան եր ուղում, վոչ ել ցանկա-
նառ եր իր հարեան քիրզաց թուրք աշխատավորնե-
րին ջարդեր: Հայ գլուղացու միակ ցանկությունն այն
եր, վոր հանդիսա պայմաններում կարողանա իր տըն-
տեսությունը դարձացնել և չճնշվի թե տաճիկ, թե
ուսու, թե հայ ու դաշնակցական կապիտալիստների ու
կալվածատերերի իշխանության լիի տակ: Յեզ այդ
հանդիսա պայմաններից եր, վոր Դաշնակցությունն իր՝
ամբողջ զուության ընթացքում և մանավանդ իր իշ-
խանության որով զրկեց վոչ միայն հայ գլուղացուն,
այլ և դաշնակցական Հայաստանում ապրող բոլոր ազ-
գերի գլուղացիներին ու բանվորներին:

Յեզ այն ժամանակ, չերք փոքրիկ Հայաստանի մեջ
յերկու տարվա ընթացքում կես միլիոնի չափ մարդ
եր մեռնում, դաշնակցական կառավարությունը՝ նրանց
փրկելու փոխարեն՝ պատերազմներ եր հայտարարում
Վրաստանին, շարունակ կովի մեջ եր գտնվում Աղըր-
բեջանի հետ, մինչև 32 տարեկան բոլոր տղամարդկանց
զինակոչի չեր լենթարկել և այս բոլորի անունը դնում
և գլուղացիների շահերի պաշտպանություն: Հաղերի
զըրակում գլուղացիների համար:

Իսկ թե ինչ չափով Դաշնակցությունը գլուղացու
հողերի մասին եր մտածում և գլուղացիների համար
հողեր եր ձեռք բերում, այդ բանը մենք աեսնում ենք
հետեւալ վաստերից:

Սերմացուն դաշնակցական կառավարությունը բա-
ժանում եր իր պետական հիմնարկներին, իսկ իսկական

աշխատավոր գլուղացիությունը մնում եր առանց սեր-
մացուի։ Պետական հիմնարկներն ել ամենատաճանելի
պայմաններում այդ սերմացուն իրենց հերթին տալիս
ելին գլուղացիներին և շահագործում ելին գլուղացուն։

Ահա թե այդ մասին ինչ ե գրում հենց ինքը, «Ճո-
վից-ծով» ի քարտեզը քաշող Նիկոլ Ազրականը, վոր-
դաշնակ մինիստը ելու

«Շարուրում ստեղծված ե մի տեսակ անցողիկ կալ-
վածտիրություն։ Պետք ե կարծել, վոր կառավարու-
թյունն այս կամ այն գլուղի ցանքերը¹ տրամադրել ե
հաստատությանց ու խմբերի, վոր իրենց աշխատանքով
կալսեն և արդյունքների կեսը տան կառավարությա-
նը։ Բայց իրոք այլ բան ե զուրս լեկել. մտնելով վորեն
գլուղ՝ այդ խմբակներն ու հաստատությանց մարդիկ
հունձի մի մասն սկսում են ծեծել, իսկ մցում մասը,
փոխանակ թողնելու բերքի հավաքման ղեկավարի
տրամադրության տակ, վոր իր կողմից հանձնելու-
րիշ խմբերի կամ միությանց, իրենք ևն կիսով տվել
սրան կամ նրան։ Կան և տյնպիսիները, վոր առնելով
գլուղի ամբողջ բերքը, վորոշ պայմաններով տվել են
վորեն կապալառուի։»

Այսպիսով մենք տեսնում ենք՝ «մաքրած» վայրերի
հողերն ու ցանքսերը տրվում են վոչ թե աշխատավոր
գլուղացիներին, այլ զանազան «խմբերի» ու «միու-
թյունների», վորոնք իրենց հերթին ցանքսերը ծա-
խում են կապալառուներին, իսկ կապալառուն, իհար-
կե, մի վոր հացով աշխատեցնում ե սովամահի լին-

¹ Թուրքական «լքված» կամ «մաքրված» չյուղերի ցանքսերի
մասին և խոսքը։

թարկվող գլուղացիներին և «ներքին թուրքին մաքրիլու» հետևանքով իր զբաններն և լցնում:

Ահա, թե մւմ համար ելին «մաքրում» ու «սրբում» թուրքին, ահա, թե մւմ եր ողուտ ըերում թուրք աշխատավորների կոտորածը:

Պարոն Ազրալլանը մոռանում և հիշել, վոր արդպես եր վոչ միայն Սուրբմալուկում, այլև Կարսի, Ոլթու, Աղբաբայի և բոլոր այլ «մաքրված» շրջաններում, վորեղ հունձ ելին կատարում զանազան խմբապետ Փիլոսները, Սեպուհները, Յաղոնները և հազար ու մի մասնակիություն ու շառաւատանդաշնակներ:

ՄԱՅԻՍՑԱՆ ԱՊԱՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ

Այս պարմաններում լերկար կարմղ ելին դիմանալ Հայաստանի բանվորն ու գլուղացին: Զե՞ վոր ամեն ինչ նրանց աչքի առաջին եր կտառըվում: Նրանք իրենց կաշէի վրա զգում ելին Դաշնակցական իշխանության բոլոր չարիքները, իսկ մյուս կողմից՝ լսում ելին, վոր Ռուսաստանում իշխանությունը գտնվում երանվորների ու գլուղացիների ձեռքում, վոր բարլշեիկցան կռւսակցության ղեկավարությամբ բանվորներն ու գլուղացիներն իրենք են կասավարում իրենց լերկիրը:

Անսպասելի լիլ չեր, վոր 1920 թվի մայիս տմսին Հայաստանի զանազան գավառներում մի անգամից առաջ են զալիս ապստամբություններ: Լենինականի բանվորությունը, Ղազախի, Կարսի, Սարիղամիշի և այլ շրջանների հեղափոխական մտսաների հետ միասին մայիսան ցուցերը փոխում են ապստամբության:

Հայաստանի բանվորներն՝ ու գլուղացիները զուրս են
գալիս «հեղափոխական ճանապարհով վճռելու» վոչ
միայն հողալին հարցը, այլև բոլոր այն հարցերը,
վորոնց լուծելուն իր գոյության իրեսուն տարվա ըն-
թացքում արգելք եր հանդիսացել Դաշնակցություն
կուսակցությունը։ Բանվորներն ու գլուղացիները
ցանկանում են իշխանությունն իրենց ձեռքը վերցնել
և իրենց շահերը պաշտպանելով կառավարել էրկիրը։
Նրանք վճռում են վերջ տալ մառզերիստների թագա-
վորությանը։

ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԻ

Բայց Դաշնակցությունն ինչպես կարող եր թուլլ
տալ, վոր 30 տարվա ընթացքում իր կողմից խարված
մասսաներն ալժմ ձեռք բարձրացնեն նրա իշխանու-
թյան դեմ։ Չե՞ վոր իշխանությունը բանվորների ու
գլուղացիների ձեռքը տալ, այդ նշանակում եր թուլլ
տալ, վոր Հայաստանում Խորհրդավորին իշխանությունն
հաստատվի։ Այդ նշանակում եր, վոր Հայաստանում
ևս պետության ղեկավարությունը պետք ե անցնի
Բայլշեիլան կուսակցության ձեռքը։ Այդ նշանակում
եր, վոր Հայաստանը դեմ պետք ե գնար հայ կապի-
տալիստների ու կալվածատերերի շահերին։ Յեկ վեր-
ջապես այդ նշանակում եր, վոր Հայաստանն ել, միա-
ցած աշխարհիս առաջին ոլրության կամ կանության,
Խորհրդավորին Ռուսաստանի իշխանության հետ, մի
ընդհանուր ճակատ պետք ե կազմեր իմպերիալիստա-
կան պետությունների դեմ։ Ու մեջտեղից պետք ե վե-
րանար «անկախ ու միացյալ ծովից-ծով Հայաստանը»։

Իսկ այդ ժամանակ Դաշնակցությունն ինչ պետք ե

ասեր դադութներում նստած հայ միլիոնատերերին ու
կապիտալիստներին, վորոնց միջոցով 30 տարի նա իր
գոլությունն եր պաշտպանել

Դաշնակցությունն ի՞նչ պատասխան պետք ե տար
զեներալ Դենստերվիլներին, Հասկելներին ու ամբողջ
տշխարհի իմադերիալիստ Շաբասերներին։ Ինչով պետք
ե արդարացներ իր վրա ծախսված ամերիկան ալլուրն
ու քաղցր կաթը։

Յեզ վերջտպես՝

Դաշնակցությունն ինչով պետք ե կերտկրել չերե-
սուն տարուց ավելի ձրիակերության ու կոտորածների
սովորեցրած իր մառադերիստական խմբերին։

Ահա, թե ինչու դաշնակցական կառավարության
նիստերի № 234 արձանագրության մեջ մենք կարդում
ենք հետեւալ վորոշումը։

«Պետական հաստատությանց ծառայողների ու
բանվորների զործադուլը համարվում և պետական
հանցանք և նրա հեղինակները պետք և պատժվեն
իբրև պետական հանցավորներ»։

Դեռ Մալիսյան տպատամբությունից մի չերկու որ
առաջ ահ ու սարսափ ե ընկնում դաշնակցական կա-
ռավարության սիրտը և նա շտապում և արգելել գոր-
ծադուլները։

Դրա հետ միասին, «դաշնակցական լիրիտասարդա-
կան միությունը», վոր սպեկուլյանաներից ու բուր-
ժուաններից եր բաղկացած, Դաշնակցության ձեռքում
դարձել եր լրաեսների մի կաղմակերպություն, վոր
հետեւմ, հետապնդում, հարածում եր հեղափոխական
բանվորներին ու գլուղացիներին և նրանց դեկավոր
կոմունիստական կուսակցության անդամներին։ «Դաշ-

իերիտականը» պետք լեզած տեղը հայտնում եր, իսկ
դաշնակների վարձկան մառակերիստները «հաշիվ ելին
տեսնում»:

Բայց թե մառակերիստների և թե նրանց զեկավար
Դաշնակցության հաշիվներն, ինչպես ասում են, «շիւ
ընկան», սխալ դուրս լեկան:

ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹՅՈՒՆ

Դաշնակցական Հայաստանի վերել նկարագրված
դրությունը միանգամայն պարզ կերպով ցուց է տալիս,
վոր Հայաստանի բանվորներն ու գյուղացիներն ալլես
վոչ մի կերպ տանել չելին կարող Դաշնակցության տիրապետությունը: Իր վարած հակաժողովրդական քաղաքականությամբ այդ կուսակցությունը ինրիբում այնպիսի պայմաններ եր ստեղծել վորոնք ընդհանրապես անհնարին ելին դարձնում ժողովրդի Փեղիկական գոյությունը: Այստեղից պարզ է, վոր Մայիսյան ապրատամբությունն անխուսափելի էր—ուզելիր, չուզելիր,
բանվորներն ու գյուղացիներն այդ ապրատամբությունը բարձրացնում ելին և աշխատում ելին տապալել դաշնական կառավարությունը: Ի հարկե, այս բանում խոշոր նշանակություն ունելին և մեծ դեր ելին խաղում Հայաստանի Կոմունիստական կուսակցության տված ճիշտ լողունգները և նրա ցուց տված ճանանապարհը: Դրա հետ միասին, ապրատամբություն բարձրացնող հեղափոխական բանվորներն ու գյուղացիներն անչափ վոգեսորվում ելին նաև նրանով, վոր հարեան հանրապետության մեջ, Ադրբեջանում, արդեն Խորհրդակին իշխանություն եր հաստատվել: Ցեվ Խորհրդակին իշխանություն այդ մոտիկությունն ավելի էր վո-

գեղութւմ, ավելի լեռ սիրտ տալիս դաշնակցական ռեժիմի դեմ կովող հեղափոխական մասսաներին:

Մալիսայան ապստամբությունը մասսական շարժում եր, ալդ ապստամբությանը մասնակցեցին համարևարությունները:

Մալիսայան ապստամբությունը վոչ թե բալշեիկների կողմից արհեստականորեն սարքած մի ապստամբություն եր, ալլ նա բզիսում եր մասսաների ալտհանջից։ Մասսաներն իրենք ելին կովի գուրս գալիս դաշնակցականների մասուղերիստական թագավորության դեմ և կոմունիստական կուսակցությունը բալշեիկլան չեր լինի, իեթե ալդ վճռական ժամին դավաճաներ բանվարների ու գյուղացիների հեղափոխական ապստամբությանը։ Բայց եկաների կուսակցությունն իր վրա վերցրեց ապստամբության զեկավարությունը։ Յեզ նո ալդ պետք ե աներ, վարովնետե ալլ կերպ նա հեղափոխական կուսակցություն չեր լինի։

ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ ՃՆՇԱԻՄԸ

Յեզ հենց Բալշեիկլան կուսակցությունը, Հայաստանի կոմունիստական կուսակցությունն եր, վոր իր վրա կրեց դաշնակցական զաղաղած կտուժվարության բոլոր գաղանությունները։ Սեպտեմբերի թալանչիական խմբերն ավելի լավ զինված լինելով և ալլ ավելի մեծ հարմարություններ ունենալով, ապստամբված մասսաներին զրկեցին իրար միանալու հնրավորությունից և ալդպիսով կարողացան արյունի մեջ խեղին Հայաստանի բանվորների ու գյուղացիների առաջին ապստամբությունը։

Իսկ զրանից հետո՝ դաշնակցական բանակը լցվեցին

հարլուրավոր կոմունիստներով։ Դաշնակցական կառավարության արտակարգ դատարանները քանի-քանի հեղափոխական բալլարիկների գնդակահարեցին։

Դաշնակցական կառավարությունը մասսաներին սարստիեցնելու համար սկսեց ահոելի պատմություններ հնարել այն ժամանակ, վոր բալլարիկներն իշխանությունը գրավելով՝ ամենուրեք անխնա կերպով կախում են բոլորին, համաժողովրդական թալաններ են կազմակերպում, վոր բալլարիկները թուրքեր են և այլն։

ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ

Յեկ Մալիխան ապստամբությունը ճնշելուց հետո, իրար հետ ավելի սերտ դաշն կապեցին Հայաստանի բոլոր ազգայնական կուսակցությունները։ Սպիտակի կուսակցությունը, մենշևիկները, ուամկավարականները, եսերները, բոլորն ել միացան՝ սպառնացող Խորհրդակին իշխանության դեմ, Հայաստանի բանվորների ու գյուղացիների իշխանության դեմ մի ընդհանուր ճակատ կազմելու համար։

Անդրկովկասի և Հայաստանի բանվորական հեղափոխությունը նորից սկսում եր անհանդստացնել Յեվրոպայի իմպերիալիստական կառավարություններին, և նրանք կրկին սկսում են «հետաքրքրվել» Հայաստանի հարցով, վորպեսզի հայ աշխատավորներին գուրս բերեն Խորհրդակին իշխանության դեմ և խեղդեն հեղափոխությունը։ Մինչե իսկ Լուլջ Զորջը անդ-

¹ Մեր ըրոշյաւրի սահմանները հնարավարություն չեն տալիս Մայիսյան ապստամբության վրա չառ տվելի յերկար կանգ առնել, ուստի և մենք հետաքրքրվողներին հանձնարարում ենք կարգաւ ընկ. Մանդալյանի, Շ. Ամերիկանյանի, «Մայիսյան ապստամբություն» դրեբը։

լիուական համալինքների պալատում հայտարարեց այդ ժամանակի, թե Անգլիան պատրաստ ե՝ տալու Հայաստանին զինվորական հրահանգիչներ:

Այսպիսի խոստումները քիչ բան չելին թեթևամիտ դաշնակցականների ու նրանց կառավարության համար: Ահա ալդ խոստումներից ու Մալիսյան ապըստամբության ժամանակավոր ճնշումից վոգեորված, դաշնակցական կառավարությունը սոսկալի արշավանք և սկսում Զանգիբարարի ու Բեյուք-Նեղիի դեմ—կոտորելով ու թարանելով թուրք բնակչությանը:

ՍԵՎՐԻ ԴԱՇՆԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

1920 թվի ոգոսառին հաղթված Տաճկաստանին ստիպում են ստորագրել Սկը դաշնագիրը, վորտեղ Հայաստանի մասին գրված և, թե Հայաստանը պետք է լինի տնիախ պետություն և նրա արևմտյան սահմանը պետք է վորոշի նախագահ Վիլսոնը:

Տոն եր դաշնակցական կառավարության և ազգայնական կուսակցությունների համար: Նրանք արդեն յերեակալում ելին, վոր նախագահ Վիլսոնն անկախ Հայաստանի սահմանները կընդարձակի «ծովից ծով» և Հայաստանը կդարձնի «միացյալ»:

Տարիների ընթացքում ալդ եր յերազել բուրժուացիան: ալդ ելին յերազել նաև բուրժուազիալի բոլոր կուսակցությունները: Յեկ զրա համար ել դաշնակցական կառավարությունը 1920 թվին չուզեց բանի տեղ գնել Մուստաֆա-Քեմալի կառավարությանը:

ՓՈՐՐԻԿ ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏՆԵՐԻ ՆՈՐ ՊԱՏԵՐԱՋՄԸ

Դաշնակցական փոքրիկ իմպերիալիստների հույսը մեծ իմպերիալիստական պետությունների վրա յեր:

Նըանք շատ լավ գիտելին, վոր Վիլսոն քեռին կամ հողեղբար Լուլդ Զորջն են միայն, վոր կհասկանան հայ բուրժուազիալի ճգումները։ Դրա համար ել դաշնակցական կառավարությունն իր բոլոր գործերը մի-միայն ալդ քեռիների ու հորեղբարյների ներկալացուցիչների հետ եր վճռում։

Ի՞նչ պլաս հայ բուրժուազիալին, յեթե ամեն կողմից նեղը լծված ու սովի մատնված Հայաստանի բանվորներին ու գյուղացիներին մի անգամ ել քշին Թուրքիալի գորքերի դեմ։ Դաշնակցական «տղերք»-ի համար կարևորը «ծովից-ծովս» եր, վոր Վիլսոնը խոստացել եր։

Ու 1920 թվի աշնան սկզբներին, յերբ Մուստաֆա-Քեմալի կառավարությունը դաշնակցական կուսակցությանն առջարկեց բանակցություններ սկսել մի շարք հարցերի մասին, դաշնակցական կառավարության նախագահ Ռհանջանյանն իրեն պատվից ցած համարեց թուրքական կառավարության հետ բանակցելը. չուզեց իմանալ, թե թուրքական կառավարությունն ի՞նչ ասելիքներ ունի։ Մինչեւսկ ինքը չպատասխանեց թուրքական կառավարությանը, այլ կարգադրեց իր քարտուղարին, վոր հայտնի, թե Հայաստանի ու Տաճկաստանի հարաբերությունները պետք ե լուծվեն այնպես, ինչպես ընդունվել է Սկը պալմանագրում։

Մինչդեռ՝ յեթե դաշնակցական կառավարությունը մտածելիս լիներ աշխատավորների խաղաղ աշխատանքի մասին, նա կաշխատեր խուսափել պատերազմից և բանակցություններ սկսել թուրքական իշխանության հետ, մանավանդ վոր՝ թուրքական կառավարությունն

սլլդ ժամանակ Ալուդ Ջորջին հայտնել եր, թե վորոշ
պայմաններով ինքը կճանտչի Հայաստանի անկախու-
թյունը:

Եեվ ահա 1920 թվի աշնանը, անգլիական գեներալ
Ստոքսի ղրդումներով դաշնակցական Հայաստանի կա-
ռավարությունը հարձակում և գործում Ոլթիի վրա:
Հայաստանի աշխատավորությունը վոչ մի իմաստ չի
տեսնում այդ կովի մեջ, սովի ու քաղցի մատնված
ընտակչությունը հրաժարվում է կովելուց: Իսկ ռազմա-
կան մինիստր Ռուբեն փաշան միտինգներում ճառում
է, թե զուտով տաճիկներին մինչև Յերզնկա կքշենք:

Այսպիսի խնդագար, վոճագործ միջոցների լեր դի-
մում Դաշնակցությունը՝ Հայաստանի աշխատավորնե-
րին անգլիական Ստոքսների համար ռազմական նյութ
դարձնելու նպատակով:

Իսկ յերբ թուրքական զորքը գրավեց Ոլթին ու
Կաղղվանը, Սուրմալուն ու Սարեղամիշը, ալդ ժամա-
նակ դաշնակցական կառավարությունը դիմեց Ստոք-
սին և ողնություն խնդրեց: Մինչդեռ Ստոքսն առա-
ջարկում է դաշնակցական Տ. Բեկզմանին, վոր ի-
րենց «սեփական միջոցներով» դուրս գան ստեղծված
դրությունից:

ԹՈՒՍԱՍՏԱՆԻ ԽՈՐՃՐԴԱՑԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Այսպիսով՝ ամենանեղ վիճակում իմպերիալիստական
ներկայացուցիչներն իրենց ձեռքերը լվանում և մի
կողմ ելին կանգնում, թողնելով, վոր տեղահան արվի
և ջարդվի վոչ միայն Կաղղվանի, այլև Կարսի, Ալեք-
պոլի և Ղարաքիլիսայի բնակչությունը: Վերն եր փըր-

կութիան ուղին։ Փրկությունը կարող եր լինել մի-
միայն Խորհրդակին Ռուսաստանից, վորի ներկայացու-
ցիչն այդ ժամանակ գտնվում եր Յերևանում և բա-
նակցություններ եր վարում։

Բայց շատ հետաքրքիր ե, թե ինչպես եր բանակ-
ցություններ վարում Ստոքսի փեշերից կախված դաշ-
նակցական կառավարությունը։ Դաշնակցական արտա-
քին գործերի նախարարության արխիվում գտնվում
են նամակներ, գրություններ, վորոնք ցույց են տա-
լիս, թե այդ ժամանակ Խորհրդակին իշխանության
կողմից առաջարկները միանգամայն ոգտավետ
և փրկարար են լեզել Հայաստանի աշխատավոր բնակ-
չության համար։ Սակայն դաշնակցական կառավարու-
թյունն այդ առաջարկները չի ընդունել, վորովհետեւ
այդ բանը չի կամեցել անգլիական գեներալ Ստոքսը,
վորի խորհուրդներով ելին շարժվում իմպերիալիստ-
ների վարձկան դոշնակները։

Ահա, թե այդ բանակցությունների մասին ինչ ե
գրում մի նշանավոր դաշնակցական մի ուրիշին։

«Այս պատմաններն են, վորոնք մենք առաջարկե-
ցինք Լեզրանին, միանգամայն համոզված լինելով,
վոր նա չի համաձայնի և մենք մի կերպ դուրս կդանք
այս ծանր բանակցությունների միջից։ Յերբ գեներալ
Ստոքսը ծանոթացավ այս պահանջներին, շատ բավա-
կան մնաց և ասաց։ «Յեթե ինձ առաջարկելիին արդպի-
սի պայմաններ, լես 34 ժամվա ընթացքում կհեռանա-
լի ձեր սահմաններից և կկտրելի բանակցությունները։
Լեզրանն ել լերեկի տողակես կվարվի։ Այս ոլարմանները
շատ լավ են, սա ապացուցում ե, վոր դուք համաձայ-
նություն չեք փնտում Խորհրդակին իշխանության

հետ, առաջարկեցեք ալս պալմանները և վստահ լեղեք, վոր մենք ամեն աջակցություն ցուց կտանք ձեզ»:

Խորհրդավին իշխանության բանակցություններն ինչպէս ելին ծանր թվում դաշնակներին: Վորովհետեւ նրանք բղխում ելին Հայոստանի բանվորների ու աշխատավոր գլուղացիության շահերից և դեմ ելին իրմանց՝ դաշնակներին, դեմ ելին Ստոքմներին: Յեկ վորապեսդի Հայոստանի աշխատավորների արյան գնով այժմ ել կոխվ մզեն Խորհրդավին Բուռաստանի դեմ, Ստոքմները խորհուրդ ելին տալիս, վոր Բուռաստանի առաջ անընդունելի պահանջներ դրվեն: Բայց չնայած զբան՝ Խորհրդավին իշխանության ներկայացուցիչ Լեզրանը բանակցությունները չի ընդհատում, այլ ընդհակառակը, նույն նամակ գրող դաշնակը զարմացած ու գժգուհ ձեռվ գրում է, վոր Լեզրանի վերաբերմունքը մեր պարմանների վերաբերմամբ մեզ համար անընդապահի բարյացակամ դրւեց յիկավ»:

Չնայած այս բարյացակամ վերաբերմունքին, դաշնակցական կառավարությունը Լեզրանի հետ վոչ մի համաձայնության չեկավ:

ԱԼԵՔՍԱՆԴՐԱԳՈԼԻ ԴԱՇՆԱԳԻՐԸ

Իսկ յերբ 1920 թվի նոյեմբերի վերջերին թուրքերն Ալեքսանդրապոլը գրավեցին և Հայոստանի բանվորազարդացիական մասսանները նոյեմբերյան հեղափոխության միջոցով Հայոստանում իրենց իշխանությունը հստակեցին, դաշնակցական կառավարության ներկայացուցիչները՝ դաշնակցական Ա. Խատիսովի նախագահությամբ, պարմանագիր ելին ստորագրում թուրքական իշխանության հետ: Յեկ ալդ պարմանա-

գիրն ստորագրելու և բանակցությունների ժամանակ դաշնակները հրաժարվեցին այն ոգնությունից, վորուղում եր ցուց տալ ալդ նպատակով Ալեքսանդրապոլ ուղարկված խորհրդավին ներկայացուցիչը:

Հետաքրքիրն այն ե, վոր տասնյակ տարիներով թուրք ժողովրդի դեմ կռվող և թուրք ժողովրդին «հայ ազգի թշնամի» համարող դաշնակները Հայաստանի խորհրդայնացումի որերին չեն անցնում Խորհրդավին իշխանության, թեկուզ Խորհրդավին Ռուսաստանի կողմը: Ընդհակառակը, նրանք Քեմալի իշխանության հետ համաձայնություն են կնքում, և առանց ամաչելու, նույն ալդ դաշնագրության մեջ նրանք գրում են. «ինչպես վոր թուրք, սուս և բոլոր աշխարհի վիճակագրություններն ու հաստատված ընկերակին կացությունը ցուց կտան, այս առթիվ ալ կվավերացվի, թե ոսմանյան սահմանին մեջ հայ մեծամասնություն ունեցող վորեւե հողամաս չկա»:

Իրավացի լե Լեռն, լերը նաև ասում ե, վոր Ալեքսանդրապոլի դաշնագրության այս կետով «Դաշնակցությունն ինքն իր մասին վկայում ե, թե լերեսուն տարի շարունակ սուս և ասել, խարել ե, թե կա հայ մեծամասնություն ոսմանյան սահմանների մեջ»:

Ճիշտ ե, Դաշնակցությունը խարել և մասսաներին, Դաշնակցությունը, ինչպես տեսանք՝ հայդուկակին ու կամավորական խմբերով սկառածառ և դարձել Տաճկաստանի աշխատավորության բնաջնջման և ալդ ամենը նու արել ե, լելնելով հայ բուրժուազիայի շահերից ծովից ծով միացյալ ու անկախ Հայաստան ստեղծելու ձգտումից: Յեզ լերը արդեն բանք բանից անցել եր, Դաշնակցությունը դաշնադիր և ստորագրում՝ վոր «Ու-

մանցան սահմաններում վոչ մի տեղ հալերը մեծամասնություն չեն կազմում: Ալսինքն, Դաշնակցությունը հրաժարվում է Տաճկահայաստան ունինալու գաղափարից:

Բայց իսկապես Դաշնակցությունը հրաժարվում եր իր տվանալուրիստական ձգտություններից, թե սա մի խաղ եր միայն, վոր իր նպատակներն ուներ:

Դաշնակցությունն Ալեքսանդրապոլի խալտառակդաշնագիրն ստորագրելուց հետո անդամ չհրաժարվեց Տաճկահայաստան ունենալու ձգտումից: Յեվ զարմանալի էիլ կլիներ, վոր հայ բուրժուազիայի ալդ կուսակցության մաքից զուրս գար Տաճկաստանի վեց վիլայեթների նման համեղ պատառը: Դեռ մինչև ալժմ ել Նիկոլ Ազգայինանների ու բոլոր դաշնակների գլխից զուրս չի դայիս մեծ Հայաստանը և դաշնակցական բոլոր թերթերն ել զրում են Հայաստանի սահմանների փոքրության մասին: Արտասահմանում նստած, իրենց ճառակրով ու ազիտացիալով աշխատում են Հայաստանի սահմաններն ընդարձակել, զրավել Ղարսը, Սուրմալուն և ալյն:

Բարեբախտաբար Խորհրդական Հայաստանը նրանց ավանալուրիստական ձեռքերի մեջ չի գտնվում, վոր նրանք իրենց ալդ ծրագրերն իրականացնելու համար խոկոյն պատերազմ հայտարարեն Տաճկաստանին ել, Ազգային գաղափարում ել, Վրաստանին ել: Յեվ ստիլված, միմիայն իրազում են այդ որերի մասին, միմիայն «հարմար առիթի» լեն սպասում և ազիտացիա լեն տանում:

«ԴԱՐԱՎՈՐ ԹՇՆԱՄՑՈՒ ՀԵՏ ՄԻԱՑԱԾ ՅԵՎ
ԽՈՐՀՐԴԱՅՑԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ

Յեթե ազգպես և, Դաշնակցությունն ել ինչնու յեր ստորագրում Ալեքսանդրապոլի դաշնագիրը, Ալդ դաշ-

նագրով ինչու յեր Սուրմալուի տմբողջ գավառը զիշում Թուրքիալին և պարտավորվում եր Հայաստանում պահել միմիայն 1500 մարդուց բաղկացած դորք և 8 թիվանոթ:

Այս ամենի պատճառն ըմբռնելու համար պիտք ե վերհիշենք, վոր Հայաստանում, Մալիսան ապստամբությունից հետո՝ բանվորներն ու գլուղացիները շարունակում ելին իրենց հեղափոխական կոփվը և 1920 թվի նոյեմբերի 29-ին Հայաստանն արդեն խորհրդացին եր հայտարարված: Յեզ Թուսաստանի ու Ադրբեյջանի բանվորն ու գլուղացին ոգնության ելին հասնում Հայաստանի ապստամբված մասսաներին:

Հայաստանի հեղափոխական բանվորներից ու գլուղացիներից սպասվող «վտանգն» եր, վոր հայ բուրժուազիալի կուսակցությանը քշում եր դեպի իր դարավոր թշնամու, Թուրքիալի զերկը: Խորհրդացին իշխանության դեմ կռվելու, բանվորների ու գլուղացիների իշխանությունը ճնշելու համար եր, վոր դաշնակցական կառավարությունը հող եր սկառրատում՝ «հայ ազգի դարավոր թշնամու», Թուրքիալի իշխանության հետ միացյալ ճակատ կազմելու:

Հենց այստեղ ե, վոր ամենից ավելի խայտառակ կերպով բացվում ե Դաշնակցության բուրժուական դեմքը: ԶԵ վոր տարիներ շարունակ Դաշնակցությունը դիմել եր Դաշկոմերի ու ցարական Ռուսաստանի ոգնությանը, վորպեսզի «հարամ Թուրքին» ջնջի և Հայաստանն ազատի «հայերի դարավոր թշնամուց». հապա այդ վճնոց սլատանեց, վոր մի քանի տմավաք ընթացքում ամեն ինչ բոլորվին փոխվեց: Թուրքիալի հետ դաշնագիր և կնքվում, և յերք Թուսաստանն ու-

դում և ալդ դաշնագիրը կնքելիս ովնել Հայտստանին,
Դաշնակցությունն ալդ ոգնությունից հրաժարվում է,
Ռուսաստանին իր թշնամին համարելով։

Ամենակարճատես մարդու համար ել պարզ է, վոր
այստեղ հարցը սուսի և թուրքի, հայի և տաճիկի հարց
չի, ուրիշ խոսքով ասած, այստեղ հարցն ազգերի ու
ազգությունների հարց չի, ալլ դասակարգերի հարց և
և հայ բուրժուազիալի շահերի հարց։ Թանի դեռ Ռու-
սաստանում բուրժուազիալի և կալվածատերերի իշխա-
նությունն եր, հայ բուրժուազիալի կուսակցություն
Դաշնակցությունն ել Ռուսաստանի ցարութան իշխա-
նության փեշերիցն եր կպչում, բայց հենց վոր Ռու-
սաստանում բանվորների ու գլուղացիների կառավա-
րություն ստեղծվեց, Դաշնակցությունը լերես դարձ-
րեց բուրժուազիալին թշնամի բանվորների ու գլու-
ղացիների կառավարությունից։ Իսկ այժմ ել, լերը Հա-
յաստանի բանվորն ու գլուղացին ելին իրենց իշխա-
նությունն ստեղծում, Դաշնակցությունը ձեռքը մեկ-
նում եր Ռուրքիալի բուրժուական իշխանությանը,
վորպեսզի Հայաստանի բանվորի ու գլուղացու, ինչ-
պես նաև նրանց ոգնող Ռուսաստանի բանվորի ու
գլուղացու դեմ կավիր

Հաշիվը միանդամայն պարզ և նաև այն,
վոր Դաշնակցությունը տասնյակ տարիներ շարունակ
խարել և հայ աշխատավորներին և նրանց ու թուրք
աշխատավորների միջև թշնամություն և առաջացրել,
թշնամություն և քարոզել միմիայն հայ բուրժուազիա-
լի շահերը պաշտպանելու համար։ Յեվ իր ալդ ստոր
ծրագրները Դաշնակցությունը ծածկել և «Հայրենիքի
վրկություն», «Տաճկահայերի ազատագրություն» կեղծ
լողունկների տակ։

Վոր դաշնակցականների կողմից Ալեքսանդրապոլսմ ստորագրված դաշնագիրը մի նախապատրաստություն եր Հայաստանի Խորհրդական իշխանության դեմ կռվելու համար, ալդ մասին կասկած լինել չի կարող վորովհետև Խորհրդական իշխանությունը դեռ նոր եր կազմակերպվում Հայաստանում, դեռ հաղիվ ամիս ու կես եր անցել, ինչ Խորհրդական իշխանությունն աշխատում եր լիրկըում կարգ ու կանոն հաստատել և հոգալ աշխատավորության կարիքները, իբրև Վրացանի ղեկավարությամբ, 1921 թվի փետրվարի 17-ին Դաշնակցությունն սկսեց իր նոր ավանտյուրան:

Հենվելով մառզերիստական իր խմբերի վրա, զըրգուելով Հայաստանի կուլակալական տարրերին, Դաշնակցությունն ապստամբություն բարձրացրեց և իր քառասուն և հինգ որվա իշխանության ընթացքում մի անգամ ել ապացուցեց, վոր իբր հայ բուրժուազիակի կուսակցություն և իբր միջազգական իմպերիալիզմի գործիք, չի ցանկանում հաշովել Հայաստանի բանվորների ու գյուղացիների հաղթության հետ:

Զարմանալի լի չի, վոր դաշնակների ալդ ամբողջ ավանտյուրիստական շարժումը ղեկավարում եր անդմիական գեներալ . . . -ը, վոր ապստամբության ամբողջ ընթացքում ուղիղուի միջոցով Բաթումից հրահանգներ ու կարգադրություններ եր ուղարկում պարոն Վրացյանին:

Իսկ պարոն Վրացյանը դաշնակցական կառավարության անունից՝ դիմում եր քեմալական կառավարության ներկայացուցիչ Բեհանդինին, վոր նրա միջոցով

թուրքական կառավարությունից զի՞նամթերք ստանա, միացլալ ուժերով Հայաստանի Խորհրդալին իշխանության ղեմ կովկելու համար:

Յեվ վորպեսդի իրենց գասակարգալին ստոր նպատակները քողարկեն, դաշնակներն իրենց «Անկախ Հայաստան» թերթում ազիտացիա ելին տանում, թե մենք լերեսուն տարի սխալված ելինք, մեզ թշնամի համարելով ոսմանցիներին, մինչդեռ, մեր իսկական թշնամին ոռւսն ե լեզել, վորից ազատվելու համար՝ մենք պետք ե միանալինք թուրքերի հետ»:

Այս անգամ ել Դաշնակցությունն ուզում եր հենվել թուրք ազգալին բուրժուազիալի իշխանության վրա, վորպեսդի կախվ մղի ընդդեմ բանվորների ու գլուղացիների իշխանության Բալց մտսսաների աչքին թող վչելու համար ազիտացիա լեր մղում, «Թե հայ ազգի թշնամին ոռւսն ե»: Նորից ուզում եր Հայաստանի աշխատավորության մեջ աղքալին ատելություն առաջացնել — այս անգամ զեսպի ոռուս աշխատավորությունը:

Հայաստանի աշխատավորներին Խորհրդալին իշխանության և Կոմունիստական կուսակցության ղեմ գրգռելու նպատակով բնչ պրովակացիաներ ասես տարածեց Դաշնակցությունը:

Դաշնակցական թերթերը գրում ելին, վոր Մոսկվայում Խորհրդալին իշխանությունը տապալվում ե, վոր կոմունիստները գաղաններ են, վորոնք կացիններով գալիս են բոլոր խաղաղ բնակիչներին ջարդելու, վոր կոմունիստները թալաններ են կատարում, և այլն:

Մինչդեռ, իսկապես Վրացյանի դաշնակցական կառավարությունն եր, վոր Հայաստանի աշխատավոր-

Ներին հազարներով լցրեց բանտերը — հարկուբավոր հեղափոխական բանվորների ու գյուղացիների գնդակահարեց և մառզերիստների մտրակների ուժով գյուղերից հանեց ու բալշեկիկների դեմ կովելու համար ֆրոնտ քշեց մերկ ու քաղցած գյուղացիներին:

Հայաստանի աշխատավորությունը տեսնում եր այս ամենը: Նրան խարելն այլևս դժվար եր և շատ կարճատե լեղավ դաշնակցական ավանտյուրան: Հայաստանի բանվորներն ու գյուղացիները քաղաքացիական հերոսական կոփվ մղեցին հայ բուրժուազիալի պաշտպան և միջազգային իմպերիալիզմի լակել դաշնակցական կառավարության դեմ և նրանց դուրս քշեցին Հայաստանի սահմաններից գուրս — 1921 թվի տոլրիլի 2-ին վերագրավելով Յերևանը:

ԶԱՆԴԵԶՈՒՐԻ ԱՎԱՆՏՑՈՒՐԱՆ

Յերևանից հեռանալով, դաշնակցականները բանտերից հանեցին ու իրենց հետ տարան նաև բազմաթիվ կոմունիստների, բանվորների ու գյուղացիների, վորոնց մի մասին կոտորեցին ճանապարհին, իսկ մյուս մասին Զանգեզուրում ցած նետեցին Տաթևի ժայռերից:

Իրենց փախուստի ճանապարհին ժամանակավորապես բուն դնելով Զանգեզուրի լեռներում, 1921 թվին դաշնակները Նեղենի գլխավորությամբ ամենակատաղի կոտորածներն ու ավերածությունն առաջացրին Զանգեզուրում և փորձեցին Զանգեզուրի գյուղացիությանը բռնությամբ ու պրովակացիաներով դուրս բերել Հայաստանի Խորհրդապետին իշխանության դեմ: Զանգեզուրի կուլակալին տարրերն ու Յերևանից փախած մառզերիստական խմբերը հենարան դարձան դաշնակների արդ վերջին փորձի համար, բայց հերոսական կարմիր բանակի կամքով Հայաստանի աշխատավորության թշնամիները դուրս արվեցին նաև Զանգեզուրից:

VII. ԴԱՅՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՅԺՄ

Հայաստանում իմպերիալիստների գործիք դարձած Դաշնակցությունը՝ Հայաստանից դուրս քշվելուց հետո, ավելի ոլինդ պետք է կազմեր իմպերիալիստների փեղից։ Յեզ ալդան ել յեղավ։ Մինչև այսոր ել դաշնակցականներն իրենց հույսը կապում են այն յերազների հետ, թե մի որ իմպերիալիստների միջոցով Խորհրդավին իշխանությունը կտապալվի։ և իրենք ել Հայաստանի իշխանության գլուխը կանցնեն։

Սկզբում նրանք որ որի վրա սպասում եին արդրանին և հենց այդ նպատակով Անդրկովկասում իրար միս կրծող բուրժուական կուսակցություններն իրարու հետ բլոկ (միություն) կազմեցին։

Դաշնակները, մենշերիկները, մուսավաթիստները և մասցած բոլոր հականեղափոխական կուսակցությունները Պրակա քաղաքում մի խորհրդակցություն հրավիրեցին ուստի միապետականների հետ միասին և վորոշեցին իրար հետ միացած գործել Վորաշեցին միասին կովել Խորհրդավին իշխանության գեմ։

Յեզ սա մի շատ նշանավոր դեպք և նրանով, զոր Անդրկովկասի բուրժուական կուսակցությունների գեմքն իսկույն պարզում է։

Դաշնակները, մենշերիկներն ու մուսավաթիստները, զոր Հայաստանի, Վրաստանի ու Աղբքաջանի աշխատավորներին ազգավին տակելություն ու ազգավին կոիվ

ելին քարողում, բանվորագլուղացիական իշխանության դեմ կռվելու համար՝ այժմ իրար լեղբար ելին ձևանում:

Ի՞նչ ձևով պետք է կռվելին ալդ հականեղափոխական տարրերը բանվորների ու գլուղացիների իշխանության դեմ: Բանվորներն ու գլուղացիներն ազատվել ելին նրանց լծից և այլքս «ռազմական նյութ» կամ «թնդանոթի միս» չելին դառնա ՚ինսուերվիլների ու Ստոքսների համար: Խոկ դաշնակցական պարոններն ել իրենք հո կռվի չելին դուրս դա:

Ահա թե ինչու բոլոր ալդ հականեղափոխականները դիմում են լերկու միջոցի:

Առաջինը՝ տերրոր, ահարեկում և լերկրորդը՝ կռւակալին տարրերի վրա հենված ապստամբություն:

Դաշնակցական տղերքը կարծում ելին, վոր լեթե Խորհրդակին իշխանության այս կամ այն դեկավարին, այս կամ այն աշխատավորին սպանեն, դրանով բանվորների ու գլուղացիների իշխանությունը կատալվի: Բայց նրանց հույսերն իզուր լեղան: Մանուկ Խուզովանի դեմ կտաարված տերրորն¹ արդեն ծանոթ մի պատմություն ե և գալիս և ապացուցելու, վոր Խորհրդակին իշխանության վեմ տերրորով կռվելը վոչ մի ոգուտ չի տա դաշնակցական պարոններին:

Նույնպես իզուր անցավ Խորհրդակին իշխանության դեմ ապստամբություն կազմակերպելու աշխատանքը: Հայոնի լե, վոր 1924 թվին Վրաստանում մենշևիկները կազմակերպեցին ապստամբություն և ալդ ապստամբությունը նշան պետք և լիներ նաև մուսավա-

¹ Տե՛ս Պետրասի հրտարակությամբ լույս տեսած գիրքը Մ. Խուզոյոնի դատավարության մասին:

թականների ու դաշնակցականների համար—նըրանք
ել միենուին՝ ժամանակ ապստամբություն պետք և
սկսելին Հայաստանում ու Աղբքեջանում։ Բայց հենց
խնդիրն ել այն և, վոր Հայաստանում ու Աղբքեջա-
նում դաշնակների ու մուսավաթիստների արդ ավան-
այուրիստական ծրագրին հետևող չգտնվեց և վոչ մի
հրացան ել չկրակվեց Խորհրդավին իշխանության դեմ։
Իսկ Վրաստանում կազմակերպված ապստամբությունը
կուլակների և արտասահմանից լեկած մենշեիկների
գործն եր, վոր հենց աշխատավոր գլուղացիության
կողմից ճնշվեց մի լերկու որվա ընթացքում։

ԴԱՇՆԱԿՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՀՈՒՅՍԸ

Վոչ տերսորը և վոչ ել ապստամբության ծրագրը-
ները չկարողացան ոգնել դաշնակներին։ Անդրկովկա-
սի և Հայաստանի աշխատավորությունը լծված մնաց
իր տնտեսության դարգացմանը, սոցիալիստական շի-
նարարության գործին։ Ահարոնանների, Զամալյան-
ների, Վրացիանների հույսը մնացել և իմպերիալիստ-
ների ոգնության վրա։ Հենց այդ պատճառով ել լերը
իմպերիալիստական պետությունները Խորհրդավին Մի-
ությանը վորեւ ուլտիմատում են ներկայացնում, դաշ-
նակցական թերթերը հարաւհրոց են բարձրացնում,
թե Խորհրդավին իշխանությունը կործանվում է, իսկ
լերը Խորհրդավին իշխանությունը մերկացնում է իմ-
պերիալիստների խաղերը և որըստորե դարգացնում է
մեր սոցիալիստական տնտեսությունը՝ դաշնակցական
թերթերի տրամադրությունն ել ընկնում եւ։

Իսկ Հայաստանի ներսում մամ վրա լե, վոր հույս են

Դնում դաշնակները։ Պատասխանը պարզ է։ Նրանց վրա, ովքեր դժգոհ են Խորհրդակին իշխանությունից։ Քանի մեր սոցիալիստական տնտեսությունը զարգանում է, այնքան ավելի նեղն են ընկնում կուլակներն ու քաղաքի առևտրական դասը, հոգեորականները և բոլոր շահագործողները։ Յեզ հենց այդ դժգոհ տարրերի միջոցով ել Դաշնակցությունն աշխատում է իր նպատակներն իրավործել։

Կոլեկտիվ տնտեսությունների կազմակերպումը նեղն ե լծում կուլակներին։ Մեր պետական առևտրի և կոռպերացիալի նվաճումներն ավելի ու ավելի մեծ հաջողությամբ են սանձում քաղաքի շահագործող և առևտրական շերտերի ախորժակը։

Այս պարմաններում միանգամայն հասկանալի չե դառնում մեր լերկրի շահագործող տարրերի վորոշակտիվությունը։

Հայտնի լեն բազմաթիվ գեղքեր։ Լերը գյուղի կուլակությունն աշխատում է իր ազդեցությունը տարածել գյուղակուրհուրդների վրա։ Կուլակությունը մինչև իսկ փորձեր ե անում անցնել կոմբջիջների մեջ և կոմբջիջների միջոցով իր նպատակներն իրավործել։

Հայաստանի կոմունիստական կուսակցությունն անխնա կերպով կարողացել ե մերկացնել կուլակների այդպիսի փորձերը։

Մյուս կողմից, մեր թերություններն ու պակասություններն ոգտագործվում են նաև քաղաքի հականիղափոխական բուրժուական տարրերի կողմից, վորոնք վոչ միայն մասարարության միջոցով ուղղում են հարվածել մեր տնտեսությանը, այլև իրենց հականեղափոխական ազիտացիալով ոգնում են իմպերիալիզմին և իմպերիալիստական պետության լակել դաշնակներին։

ՄԵՐ ԻՆՔՆԱՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՑԵՎ, ԹՇՆԱՄՈՒ
ԶՐՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

Վոչ միայն խորհրդալին քաղաքացիներին, ալլև ար-
տասահմանում Խորհրդալին իշխանությանը հայությով
զրադվող գաշնակների համար արդեն պարզ են այն
խոշոր նվաճումները, վոր Կոմունիստական կուսակ-
ցության ճիշտ զեկավարության շնորհիվ ձեռք են
բերել Խորհրդալին իշխանությունը և Խորհրդալին լերկ-
րի աշխատավորները:

Բազմաթիվ նախկին և այժմյան գաշնակներ վոչ
միայն ընդունում են այդ նվաճումները, ալլև աշխա-
տում են ապացուցել, թե իրեն իրենք ել նույն գործն
են յեղել կատարելիս, նույն նպատակներն են ունեցել,
ինչ վոր Կոմունիստական կուսակցությունը:

Այդպես և մտածում դաշնակցական կառավարու-
թյան նախկին նախագահ Թաջտղնունին, վոր «Դաշ-
նակցությունն այլևս անելիք չունի» վերնագիրը կը ող-
ոքի մեջ իդուր տեղը կաշվից դուրս և գալիս՝ ապա-
ցուցելու համար, թե կոմունիստներն իրենց ժառանգ-
ներն են հանդիսանում: Դրանով դաշնակներն ուզում
են իրենց վարկը վերականգնել, ուզում են մասսաների
հիշողության միջից վերացնել դաշնակների խալաւա-
ռակ գործունելությունը և իրենց ել ձեռքնել աշխա-
տավորների բարեկամ:

Բայց միևնույն այդ դաշնակները չեն հրաժարվում
ամեն տեսակ զրադարտություններ բարդել Կոմկուսակ-
ցության վրա:

Կոմունիստական կուսակցությունն ու Խորհրդալին
իշխանությունը չեն ցանկանում բազցնել մեր տնտեսա-

կան ու կուլտուրական ժինարարության մեջ յեղադ բացերն ու սխալները:

Ընդհակառակը՝ կոմունիստական կուսակցությունն առաջադրելով ինքնաքննադատության լոգունդը՝ աշխատում և աշխատավորական յախ մասսաների ակտիվ մասնակցությամբ հրապարակ հանել մեր աշխատանքների մեջ նկատվող թերություններն ու պակասությունները և ամեն միջոց գործ ե զնում այդ պահանությունները վերացնելու համար:

ԴԱՇՆԱԿՆԵՐԸ ԹԱԴՑՆՈՒՄ ԵՆ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԸ

Կոմունիստական կուսակցությունն ու Խորհրդային իշխանությունը վոչ միայն չեն վախենում մեր թերություններն ու պակասությունները հրապարակ հանելուց, այլև միշտ շեշտում են, վոր դասակարգային կոխվը մեզ մոտ տարունակվում ե, վոր անողոք կերպով պետք ե պարզաբեր շահագործողների, կուլակների, նեպմանների և տոհասարակ դասակարգային թշնամիների դեմ:

Եեվ կոմկուսակցությունն այս ամենի մասին համարձակ կերպով խոսում ե, վորովհետեւ նա պաշտպանում ե բանվորների, աշխատավորների շահերը:

Իսկ նրանք, ովքեր դեմ են բանվորների, աշխատավոր գյուղացիների շահերին, պարզ ե, վոր պետք ե ստեն, պետք ե աշխատավորների տչքերը կապեն, դասակարգային պարզաբեր պետք ե թաղցնեն:

Դաշնակցության պյուրգա հիմնական դիճն ել հենց այդ եւ Ալբոր ել, ինչպես իր սկզբնավորման ժամանակ, Դաշնակցությունն աշխատում է թաղցնել մեզ մոտ գոյություն ունեցալ դասակարգային կոխվը: Դաշ-

Նակցականները դեռ ալսոր ել աղջանական լոգունգներ են առաջարում և աշխատավորության ուշադրությունն ուղղում են հեռացնել դասակարգային պալքարից:

Դյուզում Դասնակցուրյունն աշխատում է ոգնել կուլակներին: Նա ագիտացիա յե մղում, թե կուլակների ու չժայռաների միջեվ տարբերություն չկա: Այդպիսով նա ցանկանում է խափանել չքավորների ու միջակների գաշինքը, ցանկանում է կուլակներին ակտիվացնել ու զյուղի աշխատանքների մեջ դեկավարությունը տալ կուլակներին:

Պարզ ու աշկարա կերպով այս բանն ասող ամեն մի դաշնակին աշխատավոր գլուղացիներն, իհարկե, չեն լսի և իր ճանապարհը ցուց կտան: Դրա համար ել դաշնակներն իրենց միտքն ալղակես բաց չեն արտահայտում: Ընդհակառակը: Նրանք քաղցր խոսքերով լեզրալրության ու հաշտության անվան տակ աշխատում են թագցնել իրենց այլ նալատակը: Ո՞ւմ հայտնի չի, թե զիուզի կուլակն ու հականեղափոխականն ինչ լեզվով են խոսում հիմա: Նրանք ասում են. «աչտղա», թնչ կուլակ, թնչ չքավոր—բոլորս ել մի կտոր հացով մի կերպ լույս լինք գնում: Չքավորն իր ծուլության պատճառովն ե չքավոր: Թող նա չել աշխատի, նա յիշ կհարստանա: Դրկից ենք, հարեան ենք, ինչի՞ իրար հետ հաշտ, խաղաղ չապրենք»:

Խաղաղության ալսպիսի քարոզներով դաշնակներն ու կուլակներն ուղում են խարել չքավորներին ու միջակներին: Իսկ լերը հարցը զործին ե գալիս, մենք շատ լավ գիտենք, թե Դամարլուի, Նոր Բալազետի, Եջմիածնի և ուրիշ գավառներում կուլակներն ինչպես

են սպանել տալիս գլուղի բատրակներին ու չքավորներին։ Կուլակները միշտ ել կատաղի կոփվ են մղում գլուղուրհուրդների մեջ իրենց ներկալասուցիչներին անցկացնելու համար։

Կուլակներն աշխատում են քայքայել գլուղի կոլեկտիվ անտեսությունները, վարկարեկում են չքավորական կազմակերպություններին և ամեն կերպ ձգտում են շահագործել միջակներին ու չքավորներին։

Ուրեմն ել մւը Ցնաց հաշտությունը,

Գլուղի կուլակության և աշխատավոր գլուղացիների միջև վոչ մի հաշտություն լինել չի կարող։ Գլուղի բատրակները, չքավորներն ու միջակները լերբեք ել չեն հաշտվի ու չպետք և հաշտվեն կուլակների հետ։ Այդպիսի հաշտության մասին կարող են խոսել միմիայն դաշնակները և դաշնակների նման հտկահեղափոխականները։

ԴԱՇՆԱԿՆԵՐՆ ՈՒ ԱԶԴՎՅԱԼԻՆ ԹՇՆԱՄՈՒԹՅՈՒՆՆ

Դաշնակների լերկրորդ գիծն ազգային թշնամություն քարոզելն է։ Այսոր ել, ինչպես միշտ, դաշնակներն աշխատում են ազդացին թշնամություն տռաջացնել հայ աշխատավորների ու հարեան լերկրների աշխատավորության միջև։

Յերկրի ներսում, ուր կողք-կողքի ապրում են թուրքեր ու հայեր, հայեր ու մալականներ, դաշնակներն աշխատում են կուլակների միջոցով թշնամություն տռաջացնել այդ ազգությունների միջև։

Այժմ Դաշնակցությունն այլևս հնարավորություն չունի «մաքրել սրբելու» միջոցով Խորհրդադիմ Հայուսու-

առանի թուրք բնակչությունը կոտորելու։ Հայ և թուրք աշխատավորներին իրար դեմ կռվեցնելու գիշտկը չթողած՝ դաշնակներն այժմ կատաղությամբ են նայում, վար հայ և թուրք աշխատավորները կողք-կողքի ալլում են խաղաղ կերպով և լծված են մեր լեռկերի սոցիալիստական շինարարության դուժին։

Հայ և թուրք աշխատավորությունների միջև թշրինամություն ստեղծելու ձգտությունն այն տեղն է հասնում, վոր դաշնակցական «Հայրենիք» թերթը 1928 թվի ապրիլի 5-ի համարում կատաղությամբ գրում և՝ «Դաշնակցության որով, անչափելի զոհողություններով ու զժվարությամբ մարտական թշնամի տարրը (պետք է հասկանալ թուրք աշխատավորները) այսոր բայց նիկներու թուլավությամբ կը կեն վերադարձ՝ կհաստատվի Հայաստանի մեջ»։

Ապա միենանուն այդ թերթն ավելացնում և. «Հայ ընիկ տարրը Հայաստանի մեջ զրկանքի ու հալածանքի լենթակա ին ի հաշիվ մեր թշնամիներու։ Հայերու քանակը հետզհետե կնոսրանա Հայաստանի մեջ, իսկ թուրք-թաթարներու թիվը սկսած և աճել Հայերը անխնա կերպով զինաթափման կը ինթարկին, իսկ թաթարներն որը ցերեկով մինչև ատամները զինված կննան»։

Այս բոլոր զբարտություններն ու սուտն ինչը և համար են հնարում դաշնակցականները։ Պարզ և միայն և միմիայն հայ և թուրք աշխատավորներին իրար դեմ կռվեցնելու համար։ Նրանք այժմ չեն կարող զենքի միջոցով մարեկ Հայաստանի հայ լեվ բուրք աշխատավորների լեզբայրական կապը, չեն կարող խանգարել նրանց անստեսական խաղաղ շինարարությունը

և դըա համար դիմում են արդակիսի պրովոկացիաների, վորպեսզի կուլակների միջոցով աղտօրեն Հայաստանի աշխատավորների մէտքը:

Գլուզի կուլակներն ու քաղաքի հականեղափոխական ուժերը, իհարկե, աշխատում են տարածել Դաշնակցության այս լիրք զրպարտությունները, բայց Հայաստանի աշխատավորությանն արդեն չես խարի արդակիսի աշակարտ ստախոսությամբ ու պրովոկացիալով:

ԴԱՇՆԱԿՆԵՐՆ ՈՒ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՏԱՆ ԽՍՀ-Ի ԹԵՇԵՐԱՑԻԱՆ

Նույն արդ պրովոկացիան դաշնակներն աշխատում են տարածել նաև Անդրկովկաստան ԽՍՀ Հանրապետությունների ֆեղերացիալի մասին:

Ցեթե նրանք աշխատում են Հայաստանի ներսում թագցնել դասակարգալին կոխվը և աղգալին տաելություն ստեղծել թուրք և հայ, հայ և մալական աղգությունների միջև, առա Անդրկովկասի մասշտաբով նույնպես աշխատում են թագցնել ամբողջ Անդրկովկասի բանվորների ու գլուզացիների միացւած պալքարը կապիտալիստական տարրերի դիմ և աւխատում են քենամուրյուն ստեղծել Վրաստանի ու Հայաստանի, Հայաստանի ու Ադրբեջանի Խորհրդային հանրապետությունների միջեվ:

Այդ նպատակով, դաշնակցական «Հայրենիք» թերթը գրում ե. «Հայաստանն այսոր զրկված և վոչ միայն իր անբաժանելի և կենսական մասերեն՝ Ախալքալակեն, Հարաբաղեն, Նախիջևանեն, այլև զուրկ և Խորհրդային Միության բլուջելի արդար բաշխումն...

Ներաստանն ու Ազգային միութենական բլուջելեն առկուծի բաժին կստանան, իսկ Հայաստան վողորմելի մի փշրանք»:

Կարիք կա արդյոք հիշելու, վոր հենց միայն 1928/29 տարվա ընթացքում մեր պետական բլուջելի 17 միլիոն ֆլետմատից 5 միլիոնն ստացվում և Անդրկովկաստան և Խորհրդակին Միության բլուջելից։ Յեզ բացի այդ՝ հսկայական ծախքեր են դրվում Զորագեսի նման հսկայական մի հիդրոկայանի, ինչպես և ճանապարհների կարգավորման ու այլ կարիքների համար։ Բավական և եիշել Խորհրդակին իշխանության որով Հայաստանում կատարված շինարարական աշխատանքն ու տնտեսական-կուլտուրական նվաճումները, վորոշեսպի համոզվենք, վոր առանց Անդրկովկաստան Ֆեղերացիայի, առանց Խորհրդային Միության աջակցության, այդ բոլորն արնեարին կլիներ կատարել միմիայն Հայաստանի ուժերով։

Եեզ լեթե գաշնակցականներն այս ամենը չեն ուղում տիսնել ու իրար զեմ ուզում են գրգռել Հայաստանի, Վըաստանի ու Ազգայինի աշխատավորներին, ապա նրանք այդ անում են միմիայն նրա համար, վոր նրանց սարսափի և պատճառում Անդրկովկասի բանվորների ու զյուղացիների ամուր ֆեղերացիան։ Նրանք շատ լավ գիտեն, վոր իրենք չեն կարող իմպերիալիստների համար Անդրկովկասում ծառայություն կատարել, յերբ Անդրկովկասի բոլոր ազգությունների բանվորներն ու զյուղացիները համախըմբագութ ու միացած են մի ընդհանուր ֆեղերացիայի մեջ։

Վորոշեսպի Անդրկովկասի աշխատավորությունը բաժան-բաժան անելով նրանց միջն ազգամիջան կոխվ-

ներ սկսեն ու աշխատավորներին ստրուկ դարձնեն իմպերիալիստական պետությունների և հայ, վրացի ու թուրք բուրժուազիալի ձեռքում, ղաշնակներն ամենից առաջ պետք ե կռվեն Անդրկովկասի աշխատավորների միության դեմ և հենց այդ պատճառով ել նրանք ամեն տեսակ լիրը զրապարտություններով իրար դեմ ուղղում են գրգռել Վրաստանի, Հայաստանի ու Աղբբեջանի բնակիչներին նրանով, վոր իրը թե՛ Անդրկովկասի ֆեղերացիալում Աղբբեջանն ու Վրաստանն ավելի մեծ բաժին են խլում, քան Հայաստանը:

Նրանք քարոզում են, վոր իրը թե վրացի ու թուրք կոմունիստներն ավելի հնարյենասեր» կոմունիստներ են, քան թե հայ կոմունիստները:

Գլուղի կուլակներն ու քաղաքի բոլոր հտկահեղափոխական ուժերն, իհարկե, աշխատում են տարածել Դաշնակցության այս պլրովոկացիաները, բայց Հայաստանի աշխատավորները 1917 թվի սկզբից արդեն հիշում են, թե ինչ տարբերություն կա դաշնակ-մենշևիկ-մուսավաթական Սելմի և Անդրկովկասի բանվորների ու դլուղացիների կամքն արտահայտող Անդրկովկասուան ԽՍՀ Ֆեղերացիալի միջն:

ԴԱՇՆԱԿՅՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԱՅԿԱԿԱՆ ԴԱՏՆ ԱՅԺՄ

Այն բոլոր փորձանքներից ու տանջանքներից հետո, վոր Դաշնակցությունը քառասունից ավելի տարիների ընթացքում պատճառեց Հայաստանի աշխատավորներին, այժմ ելի չի դադարում իր հանցավոր դորժունելությունը շարունակելուց:

Եւկ իր դորժունելությունը շարունակելու հաջար՝

այսուր ել գիմում և նույն միջոցներին, ինչ վոր յերեսուն տարի առաջ:

Մի կողմից, ինչպես տեսանք, նա այժմ ել աշխատում և թաղցնել դասակարգային պալքարը և դասակարգային պալքարի տեղ տուած և քաշում ու քարոզում և ազգային կոփիր, ազգային ատելուրյունը, իսկ մյուս կողմից՝ նա իր իմպերիալիստական ու բուրժուական նպատակներն իրագործելու հիմնական կրկին միջոց և գարձնում «Հայկական պատրա:

Ահա, թե Հայկական պատրի մասին ինչ և զրում դաշնակ Վ. Դարդիշյանը զաշնակցական «Հուսաբերան» թերթի 1928 թվի մարտի 14-ի համարում.

«Մենք պիտի շահենք մեր զատը մեր իսկ գործերով և թուրքերուն դեմ կռվելով ուղղակի: Մենք թուրքերուն կճակատինք վոչ թե Հայաստանի, այլ Ամերիկայի մեջ: Հո՞ կամ մենք արտօնություն մը պիտի ստանանք անկե, կամ մեղի համար պիտի ստեղծվի զիվանագիտական գիրք մը, վորուն վրա հենված, պիտի պահանջենք մեր իրավունքները անկե, իբր հաշվեհարդարի ժամը հնչեա:

Ինչպես տեսնում ենք, այսակդ վոչ մի նոր բան չկա: Նորից զաշնակները հարցը նույն կերպ են զնում, ինչպես 900-ական թվականներին: Նրանք նորից հարց են գնում, վոր թուրքիայի դեմ պիտք և կռվել ուղղակի: Այսինքն, ստեղծելով «զիվանագիտական գիրք մը, վորուն վրա հենած պիտի պահանջեն իրենց իրավունքները»:

Մենք հիշում ենք, վոր միշտ ել Դաշնակցությունը «Հայկական զատը» պաշտպանելու և «Տաճկահայտապահնը փրկելու» համար դիմել և իմպերիալիստական

յերկըների դիվանագիտությանը և աշխատել և ստեղծել «դիվանագիտական դիրք»:

Տարբերությունն ալժմ միայն այն է, վոր առաջ Դաշնակցությունն իր այդ «դիվանագիտական դիրքը» ստեղծում եր Տաճկաստանի հայ բնակչությունն ապստամբեցնելու և նրանց կոտորել տալու գնով, իսկ ալժմ Տաճկաստանի հայ բնակչությունն արդեն կոտորված է Դաշնակցության այդ «դիվանագիտական դիրքի» շնորհիվ։ Այժմ Դաշնակցությունը՝ Ամերիկա-ից ուղղակի կովելու յև Թուրքիայի վեմ «վոչ թե Հայստանի, այլ Ամերիկայի մեջ» և միմիայն իր «դիվանագիտական դիրքով»։

Այսպիսի խելառ և անմիտ կոիմների ընդունակ և միմիայն Դաշնակցությունը, վոր ինքն ել չի հավատում իր ասածներին և այսպիսի յերազներ և պատմում՝ իմպերիալիստների փեշերից ավելի պինդ կապվելու և արտասահմանի հայ աշխատավորներին շփոթության մեջ ձգելու համար։

Ինչպես միւս, այնպես ել այժմ, Դաշնակցությունը «Հայկական նարցի» դատարկ պարկը ընդունակ մասն է գալիս իմպերիալիստական պետուրյանների դաներին յև «Հայկական նարցը» վաճառքի նաևներավ, իր նաևառ ուղարկմ և ստեղծել «դիվանագիտական դիրք» ու կաւու ապրաւս։ Յեզ յեթե արտասահմանում դեռ կան «Հայկական հարցը» Դաշնակցության կողմից պաշտամնելուն հավատացողներ, ասպա Խորհրդագին Հայաստանի աշխատավորներն արդեն շտա լավ գիտեն, թե ինչ և նշանակում «Հայկական հարցը» և շտա լավ գիտակցում են, վոր Դաշնակցությունն այսոր ել իր առաջիկործանարար քաղաքականությունն և շարունակում։

ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԻՐ ՑԵՐԱԶՆԵՐԻ – ԾԱՌԻՑ
ԾՐՎԻ ՄԱՍԻՆ

Դաշնակցական լիդեր՝ Հայաստանի տշխառավորներին լավ հարտնի ցարական սպասավոր Ա. Խատիսյանը ահա թե ինչ ե գրում դաշնակցական «Հայրենիք» թիրթի 1928 թվի փետրվար 2-ի հոդված:

«Աքսոր պարզ ե միայն մի բան, վոր Խուսաստանի ապագալից, նրա ապագա վարչաձեից ու քաղաքականությունից մեծապես կախված ե վոչ միայն Խուսաստանի, այլև միացյալ Հայաստանի բախտը: Պատմության եջը շուռ ե լիկեր: Դա չի նշանակում, իհարկե, վոր Յեփրոյան կորցրել ե իր ազգեցության մասը հայկական գործերի վրա: Վահ, Դա նշանակում ե միայն, վոր Խուսաստանը վերագունում ե իր նախկին դիրքերը: Ու սրանից մենք՝ պետք ե հանենք մեր լեզրակցությունները»:

Պարզ է, վոր Դաշնակցությունը դեռ որորվում է ծովից ծով միացյալի լերազներում և Դաշնակցությունը գեռ սպասում է, վոր հայ բուրժուազիալի, հայ կապիատիստի համար պետք ե ձեռք բերի Տրապիզոնն ու Վանը, Երզրումն ու Կիլիկիան:

Յեզ, իհարկե, պարոն Խատիսյանը հույս ունի, վոր միացյալ Հայաստանն ինքը ձեռք կրերի Խուսաստանի միջոցով—ըայց վժը Խուսաստանի: Իհարկե, այն, ցարական Խուսաստանի միջոցով, վորի հետ միասին Դաշնակցություն կուսակցությունը Տաճկահայաստանն ազատեց հայերից ու վոչնչացրեց միլիոնից ավելի հայություն:

Դըս համար ել պարոն Խատիսյանը հույս ունի:

վոր «Ռուսաստանը վերադառնում է իր նախկին դիրքերը», այսինքն, Ռուսաստանում կրկին ցարական իշխանություն կհաստատվի և ինքը, Խատիսովն ել, վորպես Հայաստանի ղաշնակցական կառավարության նախագահ, կամ վորպես Կիլիկիայի ցարական փոխարքա, իր հին բարեկամ Նիկոլայ-Նիկոլայեվիչի հետ միասին սպիտակ ձիու վրա նստած, առող-փառք կպտտվի ծովից-ծով միացյալ Հայաստանում։

Իսկ այժմ արտասահմանում Խատիսովին կերակրող հայ կապիտալիստներն ել այն ժամանակ Խատիսովին ու նրա կուսակցություն Դաշնակցությանը շնորհակալություն կհայտնեն և կասեն։

«Ապրեք տղեք, հալալ ըլնեն ձեր կերած փողերը, վերջը ծովից-ծով Հայաստանի հանքերն ու հարստությունը կարողացաք մեր ձեռքը ձգել»։

Այսպիսով, յերե Դաւիթակցությունն իր հայսեր Ռուսաստանի նախկին դիրքերի, կամ ցարական, կապիտալիստական Ռուսաստանի նես և կապում նա նոր բան չի տնում—պարզ ե, վոր նա պետք է կովի ցարական կապիտալիստական Ռուսաստանին թշնամի Խորհըրդակին իշխանության և կոմունիստական կուսակցության դեմ։

Ենթ Դաւիթակցությունն այսու խսկալես վար Խորիրդային իշխանության ու Կոմունիստական կուսակցության դեմ կովում ե՝ Ռուսաստանում ու Անդրկովկասում կապիտալիստական կարգեր հաստակելու համար։ Բանվորագլուղացիական իշխանության դեմ Դաշնակցությունը կովի և մզում՝ կապիտալիստական Ռուսաստանի միջոցով «Տաճկահայաստանում» հայ բուրժուազիայի համար լուզոտ պատառներ ձեռք ձգելու համար։

Առաջ, թե ինչպիսի նպատակների համար՝ Յնվըու-
պարում և Ամերիկայում թրե լիկոդ դաշնակները մի
կողմից ուղղում են ուղղակի կոիկ մղել Թուրքիայի
դեմ, իսկ մյուս կողմից ցանկանում են, վոր Ռուսաս-
տանը վերադառնա գեպի իր նախկին գիրքերը:

Այս ամենի փակադերը լիթե բացենք, կատացվի,
վոր դաշնակները պարզապիս լիրազում են 1914 թվա-
կանը, վորպեսզի Ամերիկայում, կամ առհասարակ իմ-
պերիալիստական այլ լիրկրներում «դիվանագիտական
դիրք» ստեղծեն և կտպիտալիստական Ռուսաստանի
ձիջոցով Տաճկաստանից խլեն ծովից-ծով Հայաստանը:

Սակայն:

Հավը լիրազում կուտ և տեսնում—հայ ըռուրժուա-
դիայի շահերի պաշտպան Դաշնակցությունն ել լիրա-
զում երգում ու կիլիկիա լև տեսնում:

Այսահեղից պարզ են նաև Խորհրդային Հայաստանում
գտնվող կապիտալիստական ու կուլտակալին տարրերի
ձգտումը: Հայաստանի կուլտակությունն ու առեւրա-
կանները և նրանց շահերը պաշտպանող ազգանական
ինտելիգենտները հետ չեն մնում դաշնակների լիրգը
լիրգիլուց: Նրանք վայ են տալիս Խորհրդային Հայաս-
տանի ստհմաններն ընդարձակելու մասին, նրանք
ագիտացիա լին մղում—թե զյուղացու հողը քիչ ե և
այդ անվան տակ են ուղղում արդարացնել ծովից-ծով
Հայաստան ունենալու ձգտումը:

Դաշնակը Հայաստանի բանվորի ու գլուղացու հետ
չի կարող խոսել իր իսկական նպատակների մասին,
վորովինետե Հայաստանի բանվորին ու զյուղացուն շատ
լավ հայտնի լի ծովից-ծով ստեղծելու ամրող պատ-
մությունը:

Այդ իսկ պատճառով այժմ դաշնակները յեկ դրանց հետ միասին նայել կուղակներն ու բոլոր նականեղափոխականներն իրենց նպատակներն ուզում են առաջ տանել — Հայաստանի գյուղացու բարեկամը ձեմիանալով, զյուղացու անունից խոսելով յեկ նրա նողապակասուրյան մասին գրուցելով:

Իհարկե, մեր գյուղացու հողը շատ չի — բայց Խորհրդակին իշխանությունը, բանվարների ու գյուղացիների օահերը պատշաճող իշխանությունը — գյուղացու տնտեսական դրույթունը լավացնելու նաևար վոչ թէ պետք ե ազգայնական ու իմաստիալիստական պատերազմ մղի Հայաստանի հողերն ընդարձակելու նաևար, այլ նաև նուզային ահազին տարածություններ ե ստեղծում օհնարար ածխատանքով: Շիրկանալը կառուցելով, Հայաստանի Խորհրդակին իշխանությունը հազարավոր հեկտար անջրդի հողեր ե վոռոգում. պակաս քանակությամբ տարածություններ չեն վոռոգելու և Սարդարաբադի և այլ ջրանցքները: Իսկ Ալագյազի Փեշերի դուրը վոռոգելուց հետո՝ Հայաստանի աշխատավոր գյուղացիության համար մշակելի հողերի լայն տարածություններ են բացվում:

Ահա, թե ինչպես ե լուծում հողերի պակասության հարցն աշխատավորների կառավարությունը, Հայաստանի բանվորների ու գյուղացիների իշխանությունը: Հայաստանի Խորհրդակին իշխանության ճանապարհը միանդաման հակառակ ե իմագերիալիստներին և հայրութուազիակին ծառայող գաշնակների ճանապարհին: Դաշնակները հաղեր են ուզում նայ բուրժուազիայի նաևար, նայ կասիտալիստի նաևար՝ իմպերիալիստական

պատերազմների միջոցով և խմբերիալիստական նպա-
տակներով:

Իսկ Հայաստանի Խորհրդային իշխանությունը Կոմու-
նիստական կուսակցության ղեկավարությամբ բարձրաց-
նում է մեր յերկրի սոցիալիստական տեսառյունը. նա
գյուղացիական տնտեսությունն ինդուստրացման յենքար-
կելու նախապատճենով բարվություն է աշխատավորների
դրույթունը յեզ Հայաստանի բոլոր ազգաւրիունների աշխա-
տավորներին խաղաղ աշխատանքի հնարավորություններ-
ի տալիս, փորպեսզի աշխատանքի կողեկիրացման նախա-
պատճենով նրանք նաղքանարեն իրենց դասակարգային հա-
կառակությներին, փորպեսզի որ որի նետեվից ավելի խո-
ռուր նվաճումներ կատարեն մեր տնտեսության սոցիալիս-
տական վերակառուցման ասպարհություն:

Հայաստանի բանվորներն ու գլուղացիները հերո-
սական պայքարով դուրս քշեցին Հայաստանի սահ-
մաններից խմբերիալիզմի ծառաներին և ալժմ ամենա-
շեռանդուն կերպով, Կոմունիստական կուսակցության
և Խորհրդավորն իշխանության ղեկավարությամբ պայ-
քար են մղում Հայաստանի շահագործողությունը բոլոր տար-
րերի և շահագործողների պաշտպան բոլոր հականեղա-
գոխական տղթաքնական տարրերի, ինչպես և Դաշ-
նակցություն կուսակցության ղեմ:

Մովերից այն կողմը՝ Ամերիկայում նստած գաշնակ-
ները թող լերազին Թուրքիայի դեմ ուղղակի կորիվ
մղելով գիրվանադիտական դիրքեր ստեղծելու մա-
սին... ցարական իշխանությունն ու 1914 թիվը վե-
րականդնելու մասին:

Իսկ Հայաստանի աշխատավորներն ամբողջ Խորհրդա-

լին Միության բանվորների ու աշխատավոր գյուղացիների հետ միասին համառ պալքարով կշարունակեն իրենց սոցիալիստական շինարարության գործը և նրանք ամեն մի որվա իրենց աշխատանքով ավելի ու ավելի խոշոր տպացուցներ են տալիս, վոր լերազում կորեկ տեսնող ամեն մի հավ ել, կորեկ չի ստանա:

ՏԵՐԵՅԱՆ ՅՈՒՆ

ՑԱՆԿ

1.	Դաշնակցությունն իր առաջացման շրջանում	5
2.	Դաշնակցության դերը 1905 թվականի հեղափոխական շարժումների ընթացքում	36
3.	Դաշնակցությունը ուսակցիալի շրջանում	59
4.	Դաշնակցությունն իմպերիալիստական պատերազմի շրջանում	61
5.	Դաշնակցությունը 1917 թվից հետո	77
6.	Դաշնակցությունն «անկախ» Հայաստանի ժամանակաշրջանում	82
7.	Դաշնակցությունն այժմ	119





Գիր 30 կուշ. (Մ.) 4³/₄ մ.

1
535

57

24

180

5



Г. Абов
ДАШНАКЦУЮН ПРЕЖДЕ и ТЕПЕРЬ
Госиздат ССР Армении
Эревань, 1930 г.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0034125

A 55

535